

ՄԻՈՆ

ՅՈՒՆՈՒԱՐ

ՓԵՏՐՈՒԱՐ

ՄԱՐՏ

թիվ 1 - 2 - 3

1994



ՄԻՈՒՆ

ԱՄԱՍԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱԱԽՐԱԿԱՆ

ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԽՈՒԹԵԱՆ

ԿԸ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1994

Յունուար - Փետրուար - մարտ

Թիւ 1 - 2 - 3

1994

January - February - March

No. 1 - 2 - 3

SION

VOL. 68

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press, Jerusalem

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ


ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱԴԱՐԱՆ

1994	Հունիս - Դեկտեմբեր	Գր. 1-2-3
1994	Հունվար - Փետրվար - Մարտ	Գր. 1-2-3

2101

VOL. 21

ՄԵԼՈՒՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱՐՆԵՐԸ



10814-96

206-98



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

N^o

Ս. Էջմիածին

19

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ ՓՐԿՁԻ ՀՐԱՇԱՓԱՌ
ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1994 թ. Յունուարի 6)

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Սիրելի հաւատացեալներ,

Նոր Տարուայ այս լոյս առաւօտեան, Մենք՝ Հայրապետը ձեր, անհուն բերկրանով բերում ենք ձեզ բոլորիդ մեծ աւետիսը աշխարհի Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի հրաշալի Ծննդեան:

Բազում դարեր շարունակ, ամէն Նոր Տարուայ լուսաբացին մարդկային աշխարհը լսում է երկու հազար տարի առաջ Բեթղեհէմի երկնքից իջնող հրեշտակների ձայնը՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Թէև ահա երկու հազար տարիներ եկել ու անցել են այդ անկրկնելի օրերից, սակայն մեծ յոյսը հոգիների փրկութեան և հոյակապ տեսիլք մի խաղաղ ու երջանիկ աշխարհի, այսօր էլ բոլոր մարդկային սրտերին խօսում են այնպէս քաղցր, այնպէս թարմ ու այնպէս այժմեական, որ կարծէք նոր, մեր օրերին է բացուել երկինքը, հէնց մե՛զ համար, մեր յոգնած ու ծարաւի հոգիներին բերելու պատգամներն այդ փրկարար, տեսիլներն այդ երազ: Ահա թէ ինչու յոյժ երջանիկ ենք ձեզ տալու աւետիսը աւետիսների, բարի լուրը Քրիստոսի Ծննդեան և Աստուածայայտնութեան:

Եւ ինչքան խորհրդանշական է ու իմաստալից, որ Քրիստոսի Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը աւետում է աշխարհին համայն, նոր տարուայ սեմին, ժամանակի մի նոր լուսաբացին, երբ իրար են հանդիպում անցեալն ու գալիքը: Անցեալն իր հետ բերած բոլոր իրագործումներով, նուաճումներով ու զարգացումներով, բայց, աւա՛ղ նաև՝ իր դառնութիւններով, յուսախաբութիւններով ու մեղանշումներով:

Կանգնած այսօր նոր տարուայ սեմին, Մենք ողջունում ենք և օրհնում անցեալի

լան ու բարին, բայց և տխրում ու ցաւում նոյն անցեալի՝ աշխարհին բերած չարիքների և ողբերգութիւնների համար:

Կանգնած այսօր նոր տարուայ սեմին, մեր բոլորի յուսացեալ հոգիները, վերստին զօրացած ու ներշնչուած սուրբ Ծննդեան շնորհներով ու երկնառաք պատգամներով, վերանորոգում են իրենց ուխտը երկնքի հետ, այն պայծառ հաւատով, թէ ճշմարիտ աղբիւրը բարեաց, ճշմարիտ նաճապարհը սիրոյ և խղաղութեան, ճշմարիտ գրաւականը մարդկանց ու ազգութիւնների երջանիկ համակեցութեան, սկիզբ է առնում այն գերագոյն գիտակցութիւնից, թէ բոլոր մարդիկ անխտիր եղբայրներ են հարազատ, իբրև զաւակները միևնոյն Արարիչ Հօր՝ Աստուծոյ:

Աղօթեմք և ամէն մէկս մեր միջոցներով, մեր դիրքերից գործեմք անյոգնաբեկ վեճական եռանդով, որ գալիքը չվարակուի անցեալի մեղքերով, անցեալի խարխափումներով, որ արմատախիլ արուեսն բոլոր տեսակի արմատները չարիքի, որոնք բունաւորում են հոգիները մարդկանց, բունաւորում յարաբերութիւնները միջազգային: Այդպիսի չարիքներ են մեր օրերին, մանաւանդ ազգամիջեան ատելութիւնները, ընկերային անարդարութիւնները, ազգայնական եսամոլութիւններն ու ցեղապաշտական խտրականութիւնները, անսամա սպառազինութիւններն ու ոմանց՝ արիւն թափելու հիւանդագին հոգեվիճակը, որ երբեմն անհաւատալի չափերով զարգանում է աշխարհի տարբեր շրջաններում, անմեղ մարդկանց կեանքը խլող ահաբեկչական անմարդկային արարքներով: Կարելի չէ հաշտուել նման չարիքների, նման ողբերգութիւնների հետ:

Հայ ժողովրդի անցեալ դարերի ողբերգական փորձը առաւել հրամայական է դարձնում մեզ համար ազգութիւնների համերաշխութիւնը, ազատութեան և ազգային ինքնորոշման սկզբունքների հիման վրայ: Ինչպէս կարող ենք մոռացութեան տալ անլուր ողբերգութիւնները, որոնք բարեպաշտ, աշխատասէր հայ ժողովրդի կեանքի բաժինը եղան դարեր շարունակ և մանաւանդ 1915-ի և 1916-ի սև տարիներին՝ իբրև հետևանք կայսերապաշտական եսամոլ շահերի և անխիղճ բռնակալների քաղաքականութեան, որը շարունակուեց նաև մեր օրերին յատկապէս Լեռնային Ղարաբաղի մեր բոյրերի ու եղբայրների նկատմամբ, որոնք մարտնչում են ցայսօր անարդարութեան դէմ, և շատերը նրանցից նախընտրում են ազատ մեռնել, քան ստրուկ ապրել:

Տէր Աստուած ամենակարող, օգնութեան հասիր մեր աշխարհին, աւելի լոյս տուր մարդկանց մտքերին և աւելի խղաղութիւն նրանց հոգիներին, բոլորին անխտիր: Եւ թող աշխարհի բոլոր մարդասէր ու յառաջդիմատենչ մարդիկ ու ժողովուրդներ, մէկտեղեն իրենց գաղափարական-բարոյական բոլոր զէնքերը, բոլոր հնարաւորութիւնները, և անխորտակելի պատնէշ կանգնեցնեն՝ ի պաշտպանութիւն արդարութեան, ազատութեան և խղաղութեան իդէալների, որոնք մեզ՝

ֆրիստոնեաներիս համար հանդիսանում են կրօնական հաւատքի և աւետարանական սիրոյ պատգամից ճառագայթող՝ ապրելու և գործելու հրամայականներ:


Մեր օրերի խոռվայոյգ այս աշխարհում, մեր մայր երկիրը՝ մեր նորահռչակ անկախ հանրապետութիւնը ևս գտնուում է տագնապալի վիճակում:

Մենք և մեր եկեղեցու բոլոր նուիրեալ սպասաւորները Մեր սեպուհ պարտքն ենք համարում միշտ կողքին մնալ մեր ժողովրդի և միշտ նեցուկ՝ մեր անկախ երկրի մնայուն ու տևական շահերին, և միշտ աղօթող ու անձանձրոյթ գործող՝ ի խնդիր խաղաղութեան ու ազգութիւնների համերաշխութեան դատի վերջնական յաղթանակի, որը հանդիսանալու է նաև յաղթանակը Արցախեան արդար դատի:

Սիրեցեալ հոգևոր զաւակներ Մեր,

Կանգնած այսօր, Նոր Տարուայ սեմին, շնորհաւորում ենք ձեզ բոլորիդ և մաղբում, որ լոյս շնորհներովը Քրիստոսի սուրբ Ծննդեան, լոյսով լցուի ձեր կեանքն ու հոգին ամբողջ, և դուք դառնաք լուսոյ որդիներ, միշտ պատրաստ նուիրուելու շինարար աշխատանքի, բարի գործի, եկեղեցաշէն ու հայրենանուէր առաքելութեան: Դուք բոլորդ, որ ի Հայաստան, որ յԱրցախ և ի սփիւռս աշխարհի, ողջ մնացէք ու փառաւորջ, միշտ զօրացեալ Սուրբ Հոգւով, միշտ ամուր կանգնած ձեր նախնեաց հաւատքի վէմի վրայ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ. ամէն:

Շնորհաւոր Նոր Տարի և սուրբ Ծնունդ:



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Բեթղեհէմի Քարայրէն

Սիրեցեալ Ժողովուրդ Հայոց,
որ յերուաղէմ, եւ ի Յորդանան,
եւ ի Հայաստան, եւ ի սփիւռս ցրուեալ:

Երուաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան հոգեւորական անդամները, եւ մեր ժողովուրդի հաւատաւոր զաւակները, միասնաբար համախմբուած ենք Քրիստոսի Ծննդեան Սուրբ Տաճարին մէջ, ի Բեթղեհէմ, եւ հայկական աւանդութեամբ. եւ Սուրբ Երկրի սրբավայրերուն մէջ դարաւոր մեր աւանդութեանց եւ առանձնաշնորհումներուն համաձայն, կը մատուցանենք մեր Սուրբ Պատարագը, եւ կը կատարենք մեր Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցոյ պաշտամունքը, անդադրում աւետելով աշխարհին թէ՛ արդարեւ "Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ", եւ թէ՛ "Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ, ոչ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ":

Այս տարի, ծննդեան աւետիսը արդարեւ լեցուն է յոյսով, քանի որ վերջին քանի մը տարիներուն, "խաղաղութեան կարօտ" մեր հոգիները կ'աղօթէին որ վերջ գտնեն կործանարար պայքարները, ցեղայինատելութիւնները, իրարու դէմ վայրագ յարձակումները, սպաննութիւնները, ընկերային եւ տնտեսական տագնապները, ընտանիքներու անճիտումը, եւ հաստատուէր "ի յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն" աստուածային պատգամը:

Յոյսի նշոյլը աւետաբեր աստղի մը պլպլանքով կը ժպտի կարծես մեր աչքերուն դիմաց:

Իրարու ոխերիմ-թշնամի նկատուած, մեր Արաբ եւ Հրեայ եղբայրները հաշտութեան ձեռք են երկարած իրարու, եւ համայն աշխարհի մարդոց սրտերը երախտագիտութեան եւ ուրախութեան ցօղով զովացուցին, երբ չորս ամիսներ առաջ համաձայնեցան վերջ տալ կործանարար կրակներուն, քանդիչ ռմբակոծումներուն, մահասփիւռ վրիժառութեանց, որպէսզի ընտանիքներու երդիքներէն եւ ցաւատանջ մայրերու սրտերէն այլեւս չը պոռթկան ողբի աղաղակներ եւ մահագոյժ ճիչեր: Եւ որպէսզի մեր մանուկները եւ պատանիները կարենան իրենց խորտակուած ներկային աւերակներուն մէջէն, իրենց ապագային վերակերտումը երազել, եւ ոչ թէ սրտաղող հարցնել. "Արդեօ՞ք պիտի այս տարի խաղաղութիւն ունենանք":

Խաղաղութեան պատգամը, եւ տնաշէն խաղաղութեան պայմանը, Տէրը յայտնած է Եսայի մարգարէին բերանով, թէ՛ ժողովուրդները "պէտք է ձուլեն իրենց սուրերը եւ զանոնք խոփերու վերածեն, եւ իրենց սուփները մանգաղներու փոխակերպեն. եւ այլեւս ազգ ազգի վրայ սուր պիտի չբարձրացնէ, եւ ոչ եւս ուսանիցին տալ պատերազմ":

Նոյն է պատգամը մարդացեալ Աստուծոյն, Քրիստոսի մարդեղութեան եւ Աստուածայայտնութեան խորհուրդին: Պատգամը յոյսի

եւ փրկութեան: Անհատներուն ինչպէս նաեւ ազգերուն համար: Բայց չարին սաղարանքները մեր շուրջն են միշտ, այլազան կերպարանքներով եւ շարժառիթներով: Եւ այդ պատճառաւ, հոգիի պատերազմն է որ պէտք է սորվինք պատերազմիլ:

Այն ատեն, անկասկած, "Աստուած մեզի հետ պիտի լինի", եւ մեր աղօթքները՝ ընդունելի:

Ինչ աւելի մեծ ուրախութիւն՝ քան անդրադառնալ, տեսնել, եւ հաւատալ որ, Բեթղեհէմի խոնարհ մտքին մէջ ծնած Յիսուսը, եղաւ եւ է վարդապետը եւ տիպարը՝ հոգիին պատերազմը պատերազմող, եւ խաչելութեան խորհուրդով՝ հոգիի խաղաղութիւնը եւ անխարդախ երջանկութիւնը ապահովող: Անհատներուն, ինչպէս նաեւ ազգերուն, եւ ամբողջ մարդկութեան համար:

Այսօր համայն աշխարհը պէտք ունի այդ նոյն վարդապետին եւ Անոր յուսատու վարդապետութեան եւ խրախուսանքին:

Եւ այդ պատճառաւ, նոյն հաւատքով գօտեպինդ հոգիներու հետ ամէն ազգէ եւ ամենութեք, մենք եւս, Բրիստոսի Ծննդեան Սուրբ Այրին մէջ հաւաքուած, կ'աղօթենք որ, Աստուծոյ օրհնութեամբ, խաղաղութիւն եւ բարօրութիւն հաստատուի՝ Երուսաղէմի եւ Սուրբ Երկրի շրջակայ բոլոր ազգերու ժողովուրդներուն մէջ, ինչպէս նաեւ մեր մայր Հայրենիքի՝ Հայաստան աշխարհի եւ Արցախի մեր հարազատներուն, նաեւ Պոսնիայի, Ափրիկէի եւ բոլոր ցամաքամասերու աղէտահար քաղաքներու բնակիչներուն կեանքին մէջ:

Յանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Կաթողիկոսին, եւ յանուն միւս նուիրապետական Աթոռներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Վեհափառ Հայրապետին, եւ Կ. Պոլսոյ Պատրիարք Ամեն. Տ. Գարեգին Սրբազան Արքեպիսկոպոսին, եւ բոլոր թեմակալ Առաջնորդներուն, Բրիստոսի Ծննդեան հրաշագոր այս տօնին առիթով, տարասփիռ մեր ժողովուրդին կը յղենք Հայ Երուսաղէմի սրբավայրերուն օրհնութիւնը, եւ կը յիշեցնենք թէ անհրաժեշտ է վերսկսիլ շարանը Հայ Ովստատրներուն, այնպէս ինչպէս մեր հայրերը կատարեր են դարեր շարունակ, թերեւս աւելի դժուար պայմաններու մէջ:

Եւ կ'աղօթենք որ "Աստուած ընդունական ընէ ովստը ովստատր ամէն հայու" եւ սերունդէ սերունդ արժանի դառնանք ձայնակցելու հրեշտակներու օրհներգութեան, եւ դաշնօրէն ներբողելու.

"Բրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ:"

"Օրհնեալ է Յայտնութիւնն Բրիստոսի:"

Թ.Ա.Մ.

Armenian Christmas From the Grotto
(18th January 1994)

Beloved Children of the Armenian Apostolic Orthodox Church:

For many, many years now, it has been the tradition for the incumbent of the Holy See of St. James in Jerusalem, to seize the opportunity of his presence here in Bethlehem, on this auspicious Christmas night, to speak to you across the vast oceans and spaces that separate you from Jerusalem, the spiritual fount of our church and nation.

Inevitably, the message being broadcast from Bethlehem to all the other parts of the world where members of our far-flung Armenian community live, has included a prayer for the peace of Jerusalem, this immortal but troubled city of God.

This year, too, our message embodies a plea to the Lord of Creation. But this time round, our prayer carries a more pungent urgency because for the first time in living memory, we are filled with wild expectations of a just and durable peace in our region.

During the span of the past traumatic five or six years, the hounds of war ran wild across our beautiful land, devastating towns and villages, orphaning hundreds and hundreds of children, widowing countless women.

But today, as we kneel at the birthplace of Christ, we are filled with hope renewed. The day must come, and is near when all bloodshed will cease, and brothers estranged by decades of suspicion and hostility, will turn their swords into ploughshares and their spears into pruning forks.

The two valiant antagonists sharing an ancient ancestry, our cherished brothers, Arabs and Jews, have taken the first bold steps towards the creation of an atmosphere of trust. Arabs and Jews have decided that they will not learn or teach war any more, nor shall they teach their children to lift up arms against another.

Already the first harbingers of peace are hovering above our heads. The psychological barrier that prevented our Arab and Jew from sitting down together at a negotiating table, has been removed. The air is filled with euphoria. Our children are looking up at us, with hope in their eyes, asking the inevitable question: "Is there going to be peace this year?"

As we prepare to walk, hand in hand, to a brighter future, we pray that

God, in His unbounded compassion, will not hide His face from us in a little wrath anymore, but who with everlasting kindness, shall smile upon us at last. For had He not promised that every time we call, He shall answer? And every time we cry out, He shall say, "Here I am."

This is the message of Christmas, the infinite mercy of God, that was brought to the world on that momentous night, nearly two thousand years ago, when the shepherds heard the herald angels sing: "Glory to God in the highest, peace on earth and goodwill among men." On that night, the world received its most direct and unequivocal message yet, of hope and salvation.

Greater joy than this, man has never known, that Jesus Christ, the Son of God, came down to earth in order to save us, to lead us unto His peace, and in saving us, to fulfill the will and promise of God.

With His birth on this hallowed spot, Jesus of Nazareth fulfilled all the prophecies, for the Lord gave a sign, that the Christ was to be born of a virgin, and would "know to refuse the evil and choose the good."

Reflecting upon the Good Word of God on this momentous night, we are reinforced in our reassurance of God's compassion and mercy. Let us open our eyes and our hearts and unstop our ears for a moment, and see the angels and hear their comforting words to the shepherds and through them, the world.

Let us renew our faith not only here, at the birthplace of Christ, or in Jerusalem, at His Sepulchre, or tonight, but everywhere and at every opportunity. Faith is not defined by time or confined by space. Like the life-bestowing sun or the gently invigorating breeze, it is omnipresent, gaining strength and endurance with each trial. The test of faith is not so much in outward manifestation, in genuflexion, in wearing a hair-shirt, as it is in the still depths of the human heart, in our love for our fellowmen, in our imitation of Christ.

Let us pray, not only for the peace of Jerusalem, but also for the peace of the world, for the Motherland that is threatened by the forces of evil, for Bosnia, for Latin America, for the poor and starving in the African continent, for the maimed and dying, that God's will may prevail upon this earth, and that people might truly heed the message of Christmas and so that the earth may be full of the knowledge of the Lord, as the waters cover the sea.

In choosing to be born here, of all places in the world, in the tiny unremarkable village of Bethlehem, in the dark cave which He shared with the

beasts of the field, Jesus taught us the supreme lesson of charity, humility, compassion and courage beyond understanding.

He knew, this Man of Sorrows, that He was going to be brought as a lamb to the slaughter, that He will be numbered among the transgressors and bear the sins of many. He was oppressed and He was afflicted, yet He opened not His mouth, as a sheep is brought before her shearers. And He did not flinch from His mission. And He triumphed over the forces of evil and overcame the phantoms of desecration, to rise in glorious victory over death.

In our own time and age, we are beset by all sorts of travails and turmoils. The endless machinations of the devil will never cease. On every point on the map, people are facing daily trials and fighting unequal battles for survival. If it is not guns and bombs, incurable diseases or unendurable pain, it is natural disasters.

The torment is more acutely felt this year because it has been designated the International Year of the Family. At a time when humanity should devote all its efforts towards sanctifying the family life, following the saintly example of Christ's family, we find parent turned against child and brother against sister.

Although we are filled with compassion for all our brothers and sisters in distress, we refuse to surrender to despair. For "though the Lord give you the bread of adversity and the water of affliction," yet shall not He forget us.

Therefore let us pray: "O Jesus Christ, on this sacred night, when the world first received God's Good Tidings, grant us Your peace, so that we may rejoice in the mystery of your revelation, and fulfil the will of He that sent Thee".

Amen.

Patriarch Torkom Manoogian

ԿՐՈՆԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍ ԿՐԿԻՆ ԽԱԶՈՒԱԾ

ԹԱՅՄ շաբաթաթերթը (Time) 10 Յունուար 1994 թիվի մէջ յօդուած մը հրատարակած է. «Պարզ Յիսուս Քրիստոս» վերնագրով: Ա. Գրֆի երկու մասնագէտներ չորս աւետարանները կը ներկայացնեն իբր «Յեղափոխական կենսագրութիւն»:

Միլիոնաւոր քրիստոնեաներ եւ հազարաւոր հայեր ԹԱՅՄ կը կարդան: Նպատակս է օգնել ընթերցողներուս որ չը գայթակղին. հաւատֆնին չը տկարանայ կարդալով այս երկու «մասնագէտներու» անընդունելի սրբագրութիւնները: Կ'ուզեմ այս աստուածաբաններու «սրբագրութիւնները սրբագրել», որոնց նպատակն է Յիսուսը կրկին խաչել. այս անգամ մարդոց սրտերու մէջ:

Սիրելի հաւատացեալներ. գօտեպնդուեցէ՛ք, պատրաստ եղէ՛ք կրօնական «հայեցողականներ» լսելու:

Անոնց խախտու հիմը հետեւեալն է: Կը գրեն: «Քանի որ Յիսուս ատաղձագործ մըն էր, հաւանաբար անգրագէտ անձ մը եղած ըլլալու է. հետեւաբար իր պատկանած ընկերութեան ստորին խաւին մէկ անդամը»: Առէ՛ք ձեզի սփանջելի տրամաբանութիւն մը ...: Ու կը շարունակեն իրենց ցափըռոտութիւնը:

«Ա՛ն (Յիսուս) «Լեւրան քարոզը» խօսած չէ. որովհետեւ ըսած չէ «Նրանի խաղաղարարներուն. վասնզի անոնք Աստուծոյ որդիք պիտի կոչուին» եւ կամ «երանի սրտով սուրբերուն քանզի անոնք գԱստուած պիտի տեսնեն»:

«Ան հրաշքներ գործած չէ. ո՛չ հինգ հազարի կերակրուիլը, ո՛չ ջուրին գինիի փոխուիլը, ո՛չ Ղազարու յարութիւնը տեղի ունեցած չեն»: Աւելի մեծ եւ սոսկալի

սուտը. «Յիսուս յարութիւն առած չէ»:

Ուրեմն ի՞նչ եղաւ մարմինը:

Պատասխան՝ «Վայրի շուններ կերան մարմինը»:

Եւ այսպիսի հայեցողութիւններ արձակող հեղինակներ, ամէն մեղքիս վրայ աստուածաբանական ճեմարաններու մէջ դասախօսներ են ...:

Անոնք «Հայր Մեր»-ն ալ անդամահատած են: Տանք իրենց նոր քարգմանութեամբ «Հայր Մեր»ը:

Յիսուս վստահաբար «Հայր Մեր» քառերը ըսած է: Ան երբեք ըսած չէ հետեւեալները: «Որ երկինքներու մէջն ես: Ի գործ դիր կամֆդ երկրի վրայ, ինչպէս երկնքի մէջ»։ Հաւանաբար ինք հետեւեալները ըսած ըլլայ.

«Պարտադրէ՛ կայսերական կարգ կանոնը: Հայթայթ մեզի հացը, որուն պէտք ունինք այսօր: Ներէ՛ մեզի մեր պարտք-յանցանքները, այն չափով որ մեզի պարտապաններուն ալ մենք ներենք»:

Կասկածելի է որ ըսած ըլլայ հետեւեալ քառերը: «Եւ հանիս մեզ կրկին ու կրկին մի փորձեր»:

Ըստ անոնց Յիսուսի ծնունդը առասպել մըն է որ Ղուկաս Աւետարանիչ ստեղծած է: Նազարէթէն Բեթղեհէմ ճամբորդութիւնը մտացածին պատմութիւն մըն է. Սուրբ Ղուկաս իր դարու սովորութեան հետեւելով, սերնդաբանութիւն մը ստեղծած է, ընտանեկան ծառ մը շինելով: Այդ շաղաքանքները սակայն կը մոռնան որ, Ղուկաս բժիշկ մըն էր, գիտնական մը, զարգացած եւ խղճամիտ արձանագրող մը դէպքերու եւ դէմքերու:

Յառաջ կը բերուի կորսուած

աւետարանի մը (ըստ Թովմասի) տեսակէտը: Անծանօթ այդ աղբիւրի անունն է - որ գերմաներէն Գուէլ բառին տեղ կը գրուի եւ կը նշանակէ աղբիւր: Գուէլ-ը Յիսուսի խօսքերուն նախնական հաւաքածոն էր: Կը կարծեմ որ Չ-ը Քար գայթակղութեան եղած է:

«Ինչպէս որ Հռովմի կայսրերը իբր Աստուած կ'ուզէին պաշտուիլ, նոյն օրինակին հետեւեցան եւ քրիստոնեաներ Յիսուսի մասին»։ կ'ըսեն անոնք:

Մեզ քրիստոնեաներս վշտացնող ու վիրաւորող այս էջը փակեմք հեգնելով նորոսոյց - մոտերնիսդ - կրօնուսոյցները: Անոնցմէ մին, իր քարոզը կ'եզրափակէ (5000ի կերակրուելուն մասին). «Յիսուսի սքանչելի խօսքերը լսելով ժողովուրդը մոռցաւ իր անօթութիւնը»...: Երիտասարդ մը չը հանդուրժելով նոր տեսակի այս ուրացումին կը քաջակնչէ. «Հապա ի՞նչպէս եօթ գամբիւղ կերակուրի փշրանք հաւաքեցին աշակերտները»...: Եւ եթէ Յիսուս յարութիւն չառաւ. Սողոսը ինչպէս

Պօղոս եղաւ, եւ հարիւրաւորներ տեսան զԱյն:

Ս. Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Գիտեմ թէ իմ մեկնելէս յետոյ ձեր մէջ պիտի գան յափշտակող գայլեր որոնք պիտի չը խնայեն հօտին: Եւ Ձեր մէջն ալ պիտի ըլլան մարդիկ՝ որոնք թիւր խօսքերով իրենց ետեւէն պիտի քաշեն տանին Աւետարանի աշակերտները: Արթուն եղէք ուրեմն:

(Գործք Առաքելոց. Ի 29-30)

CROSSAN կ'ըսէ թէ Յիսուս անգրագետ (անուս) անձ մըն էր: Հրէաներ կ'ըսէին իր մասին (Յիսուսի) «Ինչպէ՞ս գիտէ ասի՝ Գիրքը» (Յովհ. է 15): Չորս աւետարաններու մէջ աւելի քան 30 անգամ գրուած է թէ «Յիսուս կ'ուսուցանէր...»: Անշուշտ թէ Յիսուս իր ժամանակի քարճրագոյն ուսման տիրացած էր. մանաւանդ Ս. Գրքի ուսումին:

ԲԱՐԳԷՆ ԵՊՍ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԱՂՕԹՔԻ ՈՅԺԸ

«Եւ զի Թէպէտեւ դարձեալ զօրանայք՝
դարձեալ ի պարտութիւն մատնեսջիւք.
զի Աստուած ընդ մեզ է.» Ժամագիրք:

Յանախ զգացած եմ աղօթքի պատճառած հոգեկան թրթիւրը անցնող տասնընեփնգ տարիներուն՝ որպէս հոգեւորական՝ եւ անկէ առաջ: Սակայն այս մէկը որ պիտի պատմեմ՝ ցարդ եղածներուն մէջ իւրայատուկ տեղ մը կը գրաւէ, յիշեցնելով Վարդուհի մեծ մայրիկիս եւ իր մօր՝ Գոհարի կրօնական ջերմեռանդութիւնը. որ մանկութեան օրերուն շատ խորունկ ազդեցութիւն ձգած էր վրաս: Եւ մասամբ անոնց կը պարտիմ հոգեւոր կեանքի յարիւս: Այս վտիտ տողերը կը ձօնեմ անոնց պայծառ յիշատակին: Օգոստոսի

վերջաւորութեան՝ Շաքաթ երեկոյ մը ժամանեցի Մայամի՝ յաջորդ օրը Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ պատարագելու եւ քարոզելու տեղոյն Ար. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցւոյ հաւատացեալներուն: Ծխական խորհուրդի անդամներուն հետ երկար գրուցելէ եւ համայնքը յուզող խնդիրներու մասին որոշ ծանօթութիւն քաղելէ ետք գիշերուան ժամը 10ին քարճրացայ հիւրանոցի սենեակս եւ լուրերէն իմացայ որ էնտրու անուանեալ փոթորիկը կամ ուրբականը եթէ իր ներկայ ուղիով շարունակէր յառաջանալ

մեզմէ միայն ժամ մը հիւսիս հեռաւորութեան վրայ պիտի խուժէր Ամերիկեան ցամաքամաս: Մէկ կողմ դնելով այդ հեռանկարը՝ փորձեցի ամփոփուիլ՝ պատրաստուելու համար յաջորդ օրունան Ս. Պատարագի խորհուրդին եւ խաղողորհնութեան, եւ մտածելու քարոզիս նիւթին վրայ: Աղօթքով ինքզինքս յանձնեցի բունի թագաւորութեան: Առաւօտեան երբ աչքերս բացի տեսայ դրան տակէն ներս սպրթած թղթիկ մը, գոր յայտարարութիւն մը կամ ապրանք ծախելու ծանուցագիր մը սեպելով, պատրաստ էի զամբիւղարկելի նկատել: Բայց անոր վրայ երեւցող մեծատառ գիրերը ուշադրութիւնս գրաւեցին: Կ'ըսուէր որ հարկ եղած պարագային պէտք էր պատրաստ ըլլայիմք մեր սենեակները դատարկելու: Հեռուստացոյցը բացի անմիջապէս եւ լսեցի այն ինչ որ չէի ակնկալել. փոքորիկը ո՛չ հիւսիս եւ ո՛չ ալ հարաւ կ'երթար, այլ ուղղակի մեր վրայ կ'արշաւէր: Կը սպասուէր որ ան իր ամբողջ հզօրութեամբ ժամանէր կէս գիշերին, մինչ եւ կրնայի յետ միջօրէին ժամը 1:00ին մեկնիլ օդակայան եւ խուսափիլ փոքորիկէն: Այս մտածումով ոգեւորուած սենեակիս բանալին յանձնեցի եւ պանդոկէն դուրս ելայ: Դէպի եկեղեցի նամբու ընթացքին զիս ինքնաշարժով տանող տիկինը, որ Ծխական խորհուրդի ատենապետուհին էր, կը նախապատրաստէր զիս որպէս զի շատ մարդ չակնկալեմ եկեղեցւոյ մէջ, որովհետեւ մօտալուտ փոքորիկին պատճառաւ գուցէ շատեր չհամարձակէին հեռանալ իրենց տուներէն: Իսկ եւ առանց լուրջի առնելու տիկնոջ զգուշացումը՝ կը ջանայի կեդրոնանալ քարոզիս վրայ:

Արարողութեան աւարտին, մօտ ժամը 12:00ին ուղեցի գիտնալ թէ օդակայանը մինչեւ ե՞րբ բաց էր: Ի՞ գարմանս ինձ՝ ըսուեցաւ թէ ժամը 12:00ին արդէն իսկ փակուած էր: Ուրեմն ստիպուած էի մնալ:

Մէկ միջօրութիւն ունէի որ հայերով շրջապատուած պիտի ըլլայի: Տէր եւ Տիկ. Մաղաքեաններ իրենց տունը հրաւիրեցին զիս՝ հանգստանալու եւ նաշելու: Այր ու կին շատ հիւրասէր եւ հոգատար էին: Նրեկոյեան՝ այցելութեան գացինք ծխականի մը տունը, որ թեւեւ հարազատներով շրջապատուած էր, սակայն ամուսինը փոքորիկի պատճառաւ մնացած էր Նիւ Եորք: Կատակով ըսին որ ան աւելի քան տասնըհինգ տարիներէ ի վեր Մայամի բնակելով հանդերձ՝ փոքորիկի մը չէր հանդիպած: Մինչդեռ եւ առաջին անգամ ըլլալով կ'այցելէի Մայամի շաքաթաւերը մը միայն եւ առիթը կ'ունենայի փոքորիկը «վայելելու»: Ժամը իննի մօտ վերադարձանք տուն, որովհետեւ նամբորդութիւնը այլապէս կրնար վտանգաւոր դառնալ: Գիշերը երկինքը քիչ մը շաքազունած էր եւ այնպիսի անդորր մը կը տիրէր, որ գուցէ միայն անասունները իրենց սուր բնագոյով կրնային գուշակել գալիքը: Աներեւակայելի էր որ այսպիսի խաղողութեան կարող էր գօրաւոր եւ անգուսպ փոքորիկ մը յաջորդել:

Ժամը 12:00ի մօտ հրաժեշտ տալէ ետք իմ հիւրընկալներուս՝ ինքզինքս յանձնեցի Նիւքասթլի իշխանութեան՝ անձրեւի տեղացող երաժշտութիւնը ունենալով որպէս ուղեկից: Որոտումներն ու փայլատակումները ժամ առ ժամ աւելի սաստկացան եւ քամին, որ կը ծածէր գոյգ պատուհաններս, կը սպառնար խորտակել զանոնք եւ ներխուժել սենեակէս ներս: Կ'երեւի առաւօտեան չորս էր, այլեւս անհնար էր մնալ անկողնի մէջ: Պահ մը փորձեցի ակնհայտ գոցել բարձով, որպէս զի չլսէի սարսափազդու աղմուկը: Բայց, ապարդիւն ... Այնուհետեւ մտածեցի սողալ մահիճին տակը՝ աւելի ապահով վայր մը գտնելու յոյսով: Այդ գաղափարն ալ բաւարար չթուեցաւ: Ուստի հրաժարելով անկողնէն՝ դուրս ելայ սենեակէս, յուսալով

որ հիւրասնանկը անելի ապահով վայր մը կրնար ըլլալ: Ընդհակառակը այնտեղի լայն պատուհաններէն կարելի էր տեսնել կողքի պարտէզը, ուր հսկայ ծառեր կարծես երկրպագութիւն կ'ընէին կամ դիւթումած ֆամիի ուժգնութենէն՝ խելացնոր պարի յանձնած էին իրենք գիրենք: Պահ մը մտածեցի որ եթէ այդ ծառերէն նոյն իսկ մէկը իյնար մեր փայտակերտ տան վրայ, գայն անկասկած կրնար ջարդ ու փշուր ընել: Այս հեռանկարը անելի սահմանակեցուց զիս: Միակ ապահով վայրը ենթադրեցի որ միջանցքն էր, որուն երկու կողմերը սնանակներով ապահովուած էին: Այդ մէկ ու կէս մեքր լայնութիւն ունեցող միջանցքին մէջ ջանացի կծկուիլ, մինչեւ որ պզգած փոքրիկ գունդ մը դարձայ: Դուրսը փոքորիկը կը մոլեգներ, կը սաստկանար, կատղած կ'ուզէր ամէն ինչ կործանել: Եւ եթէ դիմադրութիւն մը գտնէր իր ճանապարհին՝ անելի կը սաստկացնէր իր մոլուցքը:

Առաջին անգամն էր որ ֆամիի եւ փոքորիկի ահեղ ուժին ոչ միայն կը գիտակցէի, այլեւ կը զգայի գայն: Ոյժ մը որ զիս մանրէի կը վերածէր եւ կը սպառնար բոլորովին ջնջել իմ էութիւնս: Հոգիս այս մենութեան եւ պարապութեան առջեւ անելի տկար կը զգար եւ կ'ուզէի փարուիլ ուժի մը որ կարողանար այս խենդ պահուն զիս գերծ պահել ճգմունիէ եւ խելագարել: Այդ պահուն յանկարծ՝ անգիտակցօրէն ներքին ոյժ մը զիս մղեց արտասանելու «Ժամագրքի» հետեւեալ տողը՝ «Զի թէպէտեւ դարձեալ զօրանայք, դարձեալ ի պարտութիւն մատնեսջիք, զի Աստուած ընդ մեզ է»: Այս տողերը ֆանիցս արտասանած եւ երգած էի ժամերգութեան ընթացքին, սակայն այս պահուն անոնք նոր իմաստ եւ ներքին նոր ուժակնութիւն մը ցուցաբերեցին, մինչ այդ անյայտ ինծի, զգացմունք մը զոր մեծ մայրիկներուս աղօթքներուն մէջ նշմարած

էի եւ զմայլած:

«Ժամագրքի»ի այս տողերը, ըստ աւանդութեան, արտասանած են անցեալի հայ մարտիկները՝ դիմագրաւելու համար բարբարոս հրոսակներու յարձակումները: «Զի Աստուած ընդ մեզ է» խօսքը անոնց տուած է հոգեկան ամրութիւն, որուն ոչ մէկ մարդկային ոյժ կրնար սպառնալ եւ կամ պարտութեան մատնել: Ի Խորոց սրտի զգացի որ այս աղօթքը ոչ միայն հին ժամանակներու մարդոց համար էր, այլ գալիք այն բոլոր սերունդներուն որոնք պիտի ապրէին նոյն հայու հաւատով:

Ամէն անգամ որ փոքորիկի ալիքը բարձրանար՝ տապալելու ամէն ինչ եւ կործանելու զիս, արտասանած աղօթքիս բառերու ետին կը զգայի գերմարդկային ոյժ մը որ կու գար յոյս եւ հաւատ ներշնչելու եւ դիմագրաւելու բնութեան կործանարար ոյժը: Մեր սուրբ հայրերու գրած աղօթքին ամէն մէկ տառին ետին կար թափնուած՝ պահապան հրեշտակ մը: Հինաւուրց աղօթքը արտասանած պահուս կը զգայի մեր հայրերու հաւատքին խորքը եւ Աստուծոյ անպարփակելի ոյժը որ կրնայ սանձել բնութեան պոռթկումները եւ փրկել իրեն ասպաւինողները:

Այս առիթով կրկին անգամ զգացի որ մեր եկեղեցւոյ հայրերը ստեղծած են հոգեւոր անսպառ գանձ մը որ այսօր եւս՝ մեր պայմաններուն մէջ՝ կրնայ սնուցանել մեր սոված հոգիները: Հայ հաւատացեալը այսօր կարիքը չունի օտար ակեր եւ աղբիւրներ փնտռելու իր հոգեւոր ծաւալը յագեցնելու համար: Եթէ բան մը պէտք է փնտռել, ա՛յդ մեր հայրերու եւ պապերու հաւատքն է, եւ վերաթելորումը այդ հաւատքին՝ այսօրուան մեր կարիքներուն համար: «Շնորհեա՛ մեզ, Տէր» աղօթքը բոլորիս մատչելի է, մեզի կը մնայ անոր միջոցաւ դիմել մեր Արարիչին:

ՀԱՅԿԱԶՈՒՆ Ծ. ՎԴԻ. ՆԱՀԱՐԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՍԵՄԻՆ

Տարի մըն էր որ եկաւ ու անցաւ մեր առօրեայ կեանքէն: Այս գիշեր տարի մըն ալ պիտի բարդուի մեր առօրեայ կեանքին վրայ: Բոլորովին նոր ու անորոշ տարի մը: Վստահ չեմք գիտեր, թէ մեզմէ իւրաքանչիւրին ինչեր վերապահուած են, ուրախութիւններ թէ յուզումներ, յաջողութիւններ թէ յուսախաբութիւններ վերելքներ թէ անկումներ:

Ապագան, սակայն, միշտ անորոշ ու մութ է: Կարող կը լինի թոպէ մը, ամիս մը կամ նոյն իսկ տարի մը:

Վստահ գիտեմք, թէ ամէն նոր տարի իր 365 օրերով, կը պարփակէ իր մէջ մեզի անծանօթ եղելութիւններ, որոնցմէ ոմանք գուցէ մարդկութեան համար ունենան նակատագրական նշանակութիւն:

Այս գիշեր ամբողջ մարդկութիւնը ժամանակի հանգրուանին վրայ կեցած հանդիսատես պիտի ըլլայ երկու մեծ իրողութիւններու: Մին՝ մեռնող տարին է, եւ միւսը՝ ծնող տարին:

Առաջինի քաժանութիւնը ոչ պիտի հետաքրքրէ մեզ, ոչ պիտի յուզէ եւ ոչ ալ նոյնքան առարկայ պիտի ըլլայ մեր ուշադրութեան:

Նոյնիսկ բոլոր անոնք, որ հին տարիէն նշանակալից շահեր ու յաջողութիւններ ունեցան ապերախօրէն պիտի մոռնան զայն եւ իրենց յուսավառ աչքերը պիտի ուղղեն նոր տարուան արշալոյսին, որ ինչպէս իր նախորդները՝ կը խոստանայ հրապուրիչ եւ յուսալից ըլլալ:

Թէեւ ամէն նոր տարի, իր ծագումով եւ վախճանով նոյնն է:

Ինչպէս նոյնն են մարդիկ իրենց ներքին ապրումներով Ամանորի արշալոյսին եւ վերջալոյսին:

Անհետացող տարին ա՛լ մերը չէ, մեզի չի պատկանիր, եւ վաղուընէ սկսեալ

ա՛լ պիտի չքերէ իր մասնակցութիւնը մեր առօրեայ կեանքի շարժումներուն եւ յարաբերութիւններուն:

Անցեալ կոչուած ժամանակի շիրիմին վրայ կրնամք գրել «Աստ հանգչի 1993» ... Անժխտելի իրողութիւն է, որ օր մը ճախողութիւնները վերածուին յաջողութիւններու, կորսուած հարստութիւնները վերստացուին, անտեսուած արժէքները գնահատուին, քայքայուած առողջութիւնները բարելաւուին, բայց կորսուած ժամանակը ընդմիշտ կորսուած է, եւ բացարձակապէս կարելի չէ փոխարինել զայն ուրիշ որեւէ արժէքներով: Այս գիշեր, մեր կեանքին Ամենագոր Տէրը պիտի փակէ մեր անցեալի գիրքը եւ պիտի բանայ մեր առջեւ ապագայ նոր գիրքը:

Ի՞նչ պիտի գրեմք 365 էջերէ բաղկացած այն նոր մատեանին մէջ, որ 1994 անունը կը կրէ:

Պիտի ջնջեմք հինէն ժառանգուած մեղքերը, թէ նոր մեղքեր պիտի աւելցնեմք հիններուն վրայ: Աստուծոյ սէ՞րը պիտի առաջնորդէ մեզ, թէ մեղքի բռնակալին փախած հրամանները:

Շատ պարզ եւ որոշ է. չարաշունչ գրոյցներու եւ գործերու համար երբեք արգել չկայ: Բարի նպատակներն են, որ կը հանդիպին հակառակութիւններու եւ հակազդեցութիւններու:

Այսպէս նոր տարին ալ, նոր հրատարակուած գիրք մըն է 365 էջերով, որ պահ մը իր տօնական ուրախութիւններով, իր փոխանակուած սիրագեղ մաղթանքներով ու նուէրներով կը խանդավառէ մեզ:

Բայց երբ խրախմանքի ոգեւորութիւնները կը վերջանան, բարեմաղթութիւնները կը դադրին եւ փոխանակուած նուէրներու տպաւորութիւնը կը ջնջուի, նոր տարին ալ հին գրքի մը պէս կը մոռցուի, եւ

կ'ենթարկուի իր նախորդներուն անփառունակ նակատագրին:

Տարուան թիւերը, ամիսները, շաբաթները ու օրերը չեն մեզի համար կարեւորը, այլ ասոնցմով մեզի մատուցուած քարի գործերն են, որ մնայուն իմաստ ու արժէք կու տան մեր կեանքին:

Աստուած կը շնորհէ մեզի նոր տարի, նոր կեանք եւ նոր արեւ եւ մենք տրուած կեանքը փոխանակ մեր երկնաւոր հօր փառքին համար գործածելու, կ'ապականենք զայն վատութեան գործերով, եւ տարեգլխուն կը վերադարձնենք տարին մեր Տիրոջ, իր օրերով եւ ժամերով յումպէտս վատնուած:

Նոր Տարուան արշալոյսը յստակօրէն ցոյց կու տայ մեզի առաքինութեան ուղին, որ Յիսուսի կեանքին ուղին է: Լուսաբանանչ քամբան փառաւոր գործերու եւ նուիրումներու: Մտնենք այդ քամբայէն ներս, ազատ ու անկաշկանդ եւ պիտի գգանք մեր հոգին լիովին վերանորոգուած, մեր սիրտը չարին ազդումներէն ազատագրուած եւ մեր միտքը՝ աւերիչ տարակարծութիւններէ խաղաղած:

Այդ մշտալոյս քամբուն վրայ, ամէն քան նոր ու հրապուրիչ պիտի գտնենք:

Աշխարհը ապրելու արժանի, մարդիկը բարեկամ եւ օգտակար, նոր տարին ուրախութիւններով սուրբ, եւ կեանքն ալ յաւիտենապէս խաղաղ ու հաճելի:

Նոր Տարին, մեր կեանքի ու գոյութեան դժնդակ պայքարին մէջ մարտահրաւէր մըն է մաքառումներու, նոր պարտականութիւններու եւ նոր գոհողութիւններու. իրական երջանկութիւնը՝ ո'չ նիւթ է, ո'չ հող եւ ո'չ ալ մարմին, այլ հոգեկան արժէք է, զոր միայն ու միայն կարելի է ստանալ երկինքէն:

Եւ ճշմարիտ քրիստոնեան շատ աւելի լաւ կը քանչնայ պատրանքը ու ճշմարտութիւնը: Որոշ գիտէ թէ ամէն նոր տարի, քաջ մըն է եւ կը մօտեցնէ զինք ո'չ թէ կեանքին այլ գերեզմանին: Քրիստոսի հետ քաջաբաշտը միշտ կը նորոգուի մտածումներով, կը վերածնի կեանքով ու մտային հորիզոններով:

Քրիստոնեան ժամանակի անցքին մէջ նկատի չունի օրերն ու տարիները եւ ո'չ ալ աշխարհային պատիւները, գանձերն ու փառքերը:

Երկինքը կը նկատէ իր հայրենիքը յաւիտենական, որ մշտնջենական լոյս է առանց խաւարի, եւ մշտնջենական ցերեկ է առանց գիշերի:

Եւ այդ յաւերժալոյս հայրենիքին, իսկական բնակիչներն են՝ երկրի վրայ ժամանակին արժէքը գնահատող արդարներն ու խոնարհները:

ՌՈՒԲԷՆ ՎՐԻ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԺԱՄԱԳՐԻԻ ԱՂՕԹՔՆԵՐԸ

Դ.

«ՔԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԹՈՂՈՒԹԻՒՆ ՄԵՂԱՑ»

«Ժամագրի աղօթքները» անուն սոյն
 ֆարոգաշարին առաջին երեք գլուխները
 նուիրեցին «Խաղաղութիւն ամենեցուն»,
 «Հայր բարեխնամող» եւ «Կրօնաւորութիւն»
 աղօթքներուն: Բարոգաշարի այս չորրորդ
 գլուխը կը նուիրենք «մեղաց փաութեան
 եւ թողութեան» աղօթքին:

Եթէ ժամագրի աղօթքները աչփ
 առաջ ունենանք, պիտի տեսնենք որ
 մեղաց խոստովանութիւն ընելը եւ
 յանցանաց համար փաութիւն հայցելը
 նախորդ երեք նիւթերուն չափ յաճախակի
 կրկնուող եւ էական նիւթ մըն է
 Հայաստանեայց եկեղեցւոյ աղօթքներուն
 մէջ:

Մեղաց խոստովանութիւնը, ինչպէս
 այլ Ընդհանրական եկեղեցիներու մօտ,
 այնպէս ալ Հայերու եկեղեցւոյն մէջ Եօթը
 Խորհուրդներուն Երրորդն է: Ի հնումն,
 հաւատացելոց մէջ «ապաշխարողաց»
 անունով դասակարգ մը կար: Այսօր նման
 դասակարգ գոյութիւն չունի, թէեւ ամէն
 պատարագի մէջ կը յիշատակենք զիրենք:

Մեղաց խոստովանութիւնը եւ անոնց
 համար ապաշխարութիւն ընելու կոչը,
 Սուրբ Յովհաննէս Մկրտչի ֆարոգութեանց
 առաջնակարգ յայտարարութիւնն էր:
 «Ապաշխարեցեք, ապաշխարեցեք զի
 մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ» կը
 գոչէր ան: Նոյնիսկ մեր Տէրը, Յիսուս
 Քրիստոս Ապաշխարութիւնը իր
 ֆարոգութեանց առաջինը ըրաւ: Անշուշտ
 ապաշխարութիւն ֆարոգեցին մեծ ու պզտիկ
 բոլոր մարգարէները եւ առաքելքի եւ
 առաջին դարերու բոլոր սրբազան
 Հայրապետները:

Յիսուս Քրիստոս, ամէն անգամ որ
 թշկոյութիւն մը ըրաւ, կոյրին աչքերը

բացաւ, անդամալոյծին «ա՛ն զմանհինս
 քո եւ երբ ի տուն քո» ըսաւ, ըսաւ նաեւ
 «թողեալ լիցին քեզ մեղք քո»: Նոյնիսկ
 պողոնիկ կնոջ «գնա եւ այլեւս մի մեղանչեր»
 ըսաւ: Մեղաց խոստովանութեան եւ
 յանցանաց փաութեան մեծագոյն օրինակը
 կը գտնենք Անառակ Որդիի առակին մէջ:

Մեր օրերուն, մեծանուն
 ֆարոգիներու ֆարոգութեան առաջին նիւթը
 «ապաշխարութիւն» է: «Յընտամենք ըլիստ»
 յարանուանութեանց հաւատն ու համոզումը
 «ապաշխարութեան» վարդապետութեան
 վրայ հիմնուած է: Ամէնքս ալ հեռա-
 տեսիլի վրայ ականատես եղած ենք թէ
 ինչպէս սոյն մեծանուն ֆարոգիները,
 ֆարոգի աւարտին, ներկայ ունկնդիրները
 դէպի խորան կը հրաւիրեն եւ
 ապաշխարութեան կոչեր կ'ընեն: Տեսած
 ենք նաեւ թէ ինչպէս նման առիթներով
 հարիւրաւոր անձինք առաջ կու գան եւ
 ապաշխարութիւն կ'ընեն: «Պորն էկեն» եւ
 «ֆարիզմաքիք» ֆրիստոնէից խօսակցու-
 քեան առաջին հարցումն է «ապաշխարա՞ծ
 ես»: Նոյնիսկ Հայաստանի մէջ
 «ապաշխարեցեք» նորօրեայ այս
 ֆարոգութիւնը լայնօրէն տարածուած է:

Չեմ գիտեր թէ Ընդհանրական
 եկեղեցիները, ընդ որս նաեւ մենք, Հայերս
 ինչո՞ւ մղում չենք տուած
 «ապաշխարութեան» ֆարոգութեան, երբ
 բողոքական ամէն յարանուանութիւն
 Մարթին Լութերի օրերէն իսկ
 «ապաշխարութեան» վարդապետութիւնը
 իրենց կրօնին դրօշակը կ'ընէին: Թէեւ այս
 վերջինները այսօր մեզի պէս լիւծ են գայն
 եւ իրենց ֆարոգութեան ուժը կու տան
 կա՛մ ֆաղափական եւ կամ ալ ընկերային
 հարցերու լուծումին:



Մենք այնպես կը հաւատանք որ մարդ արարածը իր ծնած օրէն իսկ մեղաւոր է: Իր կեանքի բոլոր օրերուն կը մեղանչէ եւ մեղաց մէջ ալ կը մահանայ: «Ո՞վ է մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ» կը յայտարարէ մեր եկեղեցւոյն թաղմանական աղօթքը:

Սուրբ Գրոց մէջ կը կարդանք որ նոյնիսկ սրբանուն անձինք մեղանչեցին: Ադամն ու Եւան մեղանչեցին: Դաւիթ Աստուծոյ սիրելին էր մեծապէս մեղանչեց: Յիսուս երբ մեղաւոր կ'ինը պիտի պաշտպանէր, գայն փարկոծող Հրեայ մեծաւորները սաստեց եւ ըսաւ. — «Ձեզմէ անոնք որ մեղք չեն գործած թող յառաջ քան եւ այս կ'ինը փարկոծեն»: Եւ ոչ ոք համարձակեցաւ մեղաւորը փարկոծել քանի որ ամէնքն ալ մեղանչած էին:

Եթէ կը հաւատանք որ մարդ արարածը մեղանչական է, կը հաւատանք նաեւ որ ան կարող է արժանանալ մեղաց թողութեան եւ յանցանաց քաւութեան: Եւ սոյն թողութեան արժանանալու միակ միջոցն է խոստովանութիւն եւ ապաշխարութիւն: Եթէ կրօնաւոր ենք, եթէ աստուածային խաղաղութիւնը կը փնտռենք եւ եթէ Հայր Աստուծոյ սիրոյն եւ ողորմութեան կ'ուզենք արժանանալ պարտիմք մեղաց խոստովանութիւն ընել եւ մեր կեանքը ապաշխարութեամբ անցընել: Տէր Յիսուս Քրիստոս ըսած է որ ճշմարիտ ապաշխարութիւնը կը կատարուի պահօք եւ աղօթիւք: Ահա թէ ինչու Հայերու ժամագիրքը կը յորդի խոստովանողական աղօթասացութեամբ: Առէք «հրաժարիմք», կարդացէք երկար «մեղանքը», երգեցէք «աշխարհ ամենայնը», արտասանեցէք «Տէր ամենակալը», եւ գոց ըրէք «Հաւատով Խոստովանիմք»: Ես այնպէս կը խորհիմ որ, Ս. Ներսէս Շնորհալի եւ այլ սրբազան Հայրապետներ, վերոյիշեալները ժամագրքի էջերուն մէջ տարածեցին որպէս նիւթ եւ

միջոց ապաշխարութիւն եւ խոստովանութիւն կատարող Հայ հաւատացեցող համար: Ինչ լաւ պիտի ըլլար եթէ մէն մի Հայ Քրիստոնեայ գործածէր զանոնք հանապազ:

Ստորեւ գրի կ'առնեմ ժամագրքի աղօթքներուն մէջ կրկնուող «մեղայական» եւ «խոստովանական» աղաչանքներու մէկ ամփոփումը:

«Մեղայ Աստուծոյ»

«Ով Տէր Աստուած, մտիկ տուր մեր աղօթքներուն քու երկինքներուդ եւ սրբութեանդ մէջէն: Լսէ մեզի եւ ողորմէ: Ներէ մեզի եւ քաւութիւն եւ թողութիւն տուր մեզի: ... Մեզմէ հեռու պահէ սատանայական խաբէութիւնները: Խորտակէ անոր բռնութիւնները: ... Անցուր մեր մէջէն պատուհասը մեր յանցանքներուն: ... Մեզի կարողութիւն տուր որպէս զի այսօրը անցընենք առանց մեղքի եւ առանց գայքակողութեան: ... Մենք աշխատաւորներ ենք, ողորմէ մեր վրան եւ մեզի ապահովէ որ պիտի ազատինք մեր մեղքերուն ծանրութիւններէն: ... Ով Տէր քու ողորմութիւնդ անպակաս ըրէ մեր վրայէն եւ մեզի շնորհէ ապաշխարութեան վայր մը: ... Հաշտուէ մեզի հետ եւ մեզ ըրէ անդամ քու եկեղեցւոյդ: ... Տէր Աստուած դուն չես կամենար որ մենք մեղաց մէջ մահանանք: Շնորհէ մեզի որ քեզի գանք խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ: Անառակ որդիին հետ կ'արտասուեմ ըսելով — «Հայր մեղայ յերկինս եւ առաջի քո»: Եւ Մահաւորին հետ ծունկի կու գամ եւ կը կրկնեմ. — «Աստուած իմ քաւեա զիս զմեղաւորս»: Մեղայ Աստուծոյ:

Ե.

ԼՈՒՍԱԽՈՐԵԱ

Լոյսն ու լուսաւորութիւնը, մեր ժամագրքին աղօթքներուն մէջ կրկին

անգամներ երեւող ուրիշ նիւթ մըն է:

Լոյսն ու լուսաւորութիւնը եղած է նաեւ կարեւոր քաժամումն մը մեր կրօնին եւ մեր հաւատքին եւ մեր հոգեւոր կեանքին: Լոյսը կարեւոր տեղ գրաւած է Սուրբ Գրոց մէջ, Հայերու եկեղեցւոյն մէջ եւ պաշտամունքին մէջ:

Մենք Գրքի առաջին իսկ գլուխին մէջ կը կարդանք որ Աստուած ստեղծագործութեան առաջին օրը լոյսն ու լուսաւորութիւնը ստեղծեց: Եւ երբ Տէր Աստուած լոյսը ստեղծեց, շատ գոհ մնաց եւ այդ օր ուրիշ գործ չըրաւ: Լոյսը ուրեմն քարի է: Լոյսին նպատակն ալ քարի՛ք գործել է: Լոյսը Աստուծոյ գործ է:

Ստեղծագործութենէն հազարաւոր տարիներ վերջ, երբ մեր Տէրը, Յիսուս Քրիստոս այս աշխարհը եկաւ, ծանոյց. «Ես լոյս՝ աշխարհը եկի»: Քրիստոս լոյս էր, լոյսէն եկաւ եւ մարդոց լոյս բերաւ: Աշխարհ խաւարի մէջ էր: Քրիստոս վանեց այդ խաւարը, եւ կարծես թէ լոյսը կրկին անգամ ըլլալով ստեղծեց:

Երբ Քրիստոս ծնաւ, մեծ ու լուսաւոր աստղ մը առաջնորդ եղաւ Մոգերուն եւ հովիւներուն: Յիսուս երբ Թաքոր Լեռան վրայ այլակերպ եղաւ, լոյս գգեցաւ: Եւ երբ գերեզմանէն յարութիւն առաւ իր մարմինէն արձակուող լոյսը այնքան զօրաւոր էր որ պահապանները շլացան եւ զարհուրեցան: Պօղոս առաքեալ, այս լուսաւորեալ Քրիստոսն էր որ տեսաւ, Դամասկոսի նամբուն վրայ ու կուրացաւ: Այսօր շատեր կը խոստովանին թէ մահուան դուռը գացած են, հոն լուսաւորեալ Քրիստոսը տեսած են, եւ ապա նորէն կեանքի եկած են:

«Աստուած լոյս է եւ խաւար ի նմա չիք եւ ոչ մի», կ'ըսէ Յովհաննէս Առաքեալ իր ընդհանրական բուրքին մէջ:

Կրօններ եղած են ուր լոյսը պաշտամունքի առարկայ եղած է: Պարսից մէջ տարածուած կրակապաշտութիւնը, լաւագոյն օրինակն է այդպիսի կրօններուն:

Հայերս անշուշտ թէ ոչ կրակը եւ ոչ ալ լոյսը կը պաշտեն: Ընդհակառակը մենք մերժեցինք կրակապաշտութիւնը եւ պայքարեցանք անոր դէմ:

Միւս կողմէ սակայն մենք լոյսն ու լուսաւորութիւնը այնքան սիրոյ եւ յարգանաց առարկայ ըրած ենք որ կարծես թէ կը պաշտենք զայն: Հայաստան աշխարհը փութացող երկու առաքեալները անուանած ենք մեր առաջին լուսաւորիչները: Սուրբ Գրիգորը կոչեցինք Լուսաւորիչ Հայոց: Իր անունով կանթեղը կը պահենք մշտապա: Շատեր մեզ, թէ իսկ սխալ յորջորջումով, «Լուսաւորչական» կ'անուանեն: Եւ լոյսի հետ կապ ունեցող անունները մեզ, թէ իսկ սխալ յորջորջումով, մօտ շատ եւ բազմազան են. Լուսածին, Լուսին, Լուսաբեր, Լուսանուշ, Լուսընթագ, Արփի, Արեւ, Հայարփի, Աստղիկ, Պայծառ, Փայլուն եւայլն:

Դաւիթ մարգարէ յօրինեց շատ մը տաղեր, ուր աստուածային լոյսին հրաշագործութիւնը կ'երգուի: «Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ երկեայց», կ'ըսէ ան: Դաւիթ գիտէ իր երգածին իրականութիւնը, քանզի Տիրոջ լոյսն էր որ ազատագրեց զինք իր բոլոր քշնամիներուն ձեռքէն: Հին Օրինի ուրիշ մարգարէներ եւս նման ապաւեն եւ գօրութիւն գտան Տիրոջ լոյսին մէջ: «Եւ արդ Տուն Յակոբայ եկայք երթիցուք ի լոյս Տեառն», կը քարոզէ Նսայի Մարգարէ: Եւ Միքէէ մարգարէ կը խոստովանի. «Զի թէ նստոյց ի խաւարի՝ Տէր է իմ լոյս»:

Մեր Շարականները կը յորդին աստուածային լոյսի գովաբանութեամբն եւ օրհներգութեամբը: Մեր ժամապաշտութիւններէն մին նուիրած ենք լոյսի երգեցողութեան՝ «Արեւագալ» անունի տակ: «Լոյս, արարիչ լուսոյ» կ'երգեն դպիրներն: Եւ «Ծագեաց զլոյս քո ի մեզ» կը պաղատին հաւատացեալները: «Առաւօտ Լուսոյ»ն, ձրագալոյցներուն

երգուող «Լուսաւորեա»ն, եւ նոյնիսկ Թաղման կարգին մէջ երգուող «Լոյս ի Լուսոյ»ն, կը ներկայացնեն, լոյսին զօրութեան շուրջ հիւսուած մեր շարականներուն մի քանի հատը:

Շատեր լոյսը չեն սիրեր: Աւագակներ, մարդասպաններ, եւ այլ կարգի չարագործներ կը նախընտրեն խաւարը: Եւ իրենց բոլոր անիրաւութիւններն ու ստորին արարքները խաւարի մէջ կը գործադրեն: Յիսուս փարիսեցիները պախարակեց եւ ըսաւ. — «Դուք աչք ունիք, բայց չէք տեսներ»: Յիսուս փարիսեցիները «խաւարի որդիներ» անուանեց:

Յիսուս իր աշակերտները օրհնեց եւ ըսաւ. — «Դուք այս աշխարհին լոյսն էք»: Խաւարեալ աշխարհին համար լոյս են նաեւ առաքելոց յաջորդող բոլոր հայրապետները եւ մարտիրոսները եւ նգնաւորները:

Եկե՛ք ուրեմն մեր Հայրապետներուն եւ սուրբերուն հետ միաբերան աղօթենք առ Աստուած, որ ան մեզի եւս շնորհէ իր լոյսը որպէս առաջնորդ մեր կեանքին: Ստորեւ ժամագրքի էջերէն քաղուած մի քանի տողեր կը շարադրեմ սոյն նպատակին համար. —

«Լուսաւորեա»

«Ով Յիսուս Քրիստոս լուսաւորէ մեր բոլորը ... Լուսաւորէ մեզ առաւօտեան այս ժամուն ... Ծագեցուր մեզ մօտ քեզմէ բխող արդարութեան եւ իմաստութեան լոյսը ... Զմեք բոլորս լոյսի եւ ցերեկուան որդիներ ըրէ ... Լուսաւորէ մեր միտքն ու խորհուրդները ... փարատէ մեր հոգիներուն մէջէն բոլոր խաւարային խորհուրդները ... Լոյս նշմարիտ Քրիստոս, շնորհէ ինձի որ քեզի գամ եւ ուրախութեամբ տեսնեմ քու փառքիդ լոյսը»:

ԿԱՐԷՆ ՔԷՆՅ. ԿՏԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

45) Հոն կը կենան՝ որպէս մի վեհ միտք,
 Յոգնած, չը կքող բայց ամբոյսին նըլաստ.
 Ամենքն ալ պարապ՝ միայն ծակ-մուտ Հովն ինք,
 Կամ մթան հաղորդմունք խուժանին հետ այդ:
 Անոնք ալ երբեմն էին երիտասարդ,
 Դրօշներ վեր, վարը ողջ պատերազմիկք,
 Ռազմիկներ ընկած-արինոտ պատանք,
 Դրօշ շարժողներն՝ այժմ փոշի մանրիկ,
 Լքուած ռազմատեղն՝ չուգեր լըսել Ռազմի ձայնն իսկ:

46) Այս պատերուն մէջ, պատերազմի տակ,
 Ոյժ բընակեցաւ հըպարտ, կըրքով լի,
 Զինասրահ գրաւեց ամեն պետ աւագակ
 Կատարելով կամքն իր որ էր ընտրելի
 Իրեն՝ քան անյաղթ կամքն այլ հերոսների:
 Անօրէն յաղթողին, արդէն ի՞նչ է ուզածն,
 Զան պատմութիւնը զինքը մեծ կոչէ,
 Լայն տարածութիւն դամբան զարդարուած,
 փափաքսն չէ նուազ ջերմ հոջակուիլ հոգի քաջաց:

47) Իրենց ազնուական վէճերու ընթացքին,
 Ա՛խ, ինչ արարքներ չեն անգիր թաղուած,
 Սէրն զարդն էր իրենց ասպարք շողքին,
 Յոյց տալով իրենց պարծանքը նըշուած.
 Իրենց երկաթ սըրտէն պիտի սահի ցած՝
 Դեռ վայրագութեան բոցն որ կը տեւէր
 Մըրցանք, կործանում իրար դաշնակցած
 Արդար(?) նենգութեամբ շատ բերդեր գրաւեր
 Գունագերծ Ռայնի հեղեղներով են տարուեր:

48) Իսկ դուն նըլազող նաեւ յորդող գետ ալ,
 Ալիքներիդ հոսքն օրինաբեր ընող,
 Եգերքներուդ գեղն պիտի դնէ յար,
 Մարդն եթէ թողու գոյութիւնդ փայլող.
 Այս գեղեցկութիւն բնաւ չը խամրի թող,
 Վէճի սուր մանգաղով չը փըրթի
 Տեսնողը ջուրդ քաղցր որպէս զի գիտնայ
 Երկիրն է երկնի պէս. այնպէս թող թուի
 Նոյնիսկ այժմ ինչ կ'ուզէ քու գետ՝ թող կատարուի:

(Թրգմն. ՄՈՒՐԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ)

LORD BYRON

ՍՊԻՏԱԿ ԵՂԵՌՆ

Էլ ինչպէս է լոյս Երեւանն այս հսկայ,
Երբ գաղտնօրէն արծաթ լեզուն օտարի
Կուլ տալ կ'ուզէ Հայոց լեզուն իմ ոսկեայ,
Էլ ցաւըս ինչ դադարի:

Չեն օրօրում հայ օրօրքներն հայերէն,
Էլ յոյսըս չեն շուրթերն այս հայ մայրերի,
Օտարին կեանք, մայրենուս մահ կը բերեն
Ծով շոյեանքներն օտարի:

Կարմիր ջարդից յետոյ ձերմակ ջարդն հասաւ,
Մօրըս կաթի մահատագնապն է յուզում,
Օտար լեզուածովում դառած ձեռքուած նաւ՝
Հայոց լեզուն է սուզում:

Աշխարհակալ Տիգրան Մեծն էլ գլխիկոր
Նահանջում է՝ ձերմակ ջարդից յաղթուած,
Կուչ է գալիս հայոց արծին, ինչպէս լոր,
Էլ ոնց երգեմ վանդակուած:

Երբ հայ մանկունք չեն թոթովում հայերէն՝
Արիւն-արցունք կուլան աչքերն հայ լեզուի,
Օրօրքները հանց գերեզման կը բուրեն,
Էլ ազգն ինչպէս չկիզուի:

Երբ չեն մօրուց հայ պատանիք հայ խօսում,
Ինձ թըւում է՝ մօրըս լեզուն կը պոկեն,
Ա՛խ, մայրըս ինչ, երբ կորչում է մայր լեզուն,
Էլ ո՞նց լըռեմ ես անքէն:

Երբ չեն երգում, երբ չեն պարում հայերէն,
Ինձ թըւում է, հայոց բոլոր դարերի
Անմահներին իմ երգի հետ կը թաղեն
Լեզուաբահերն օտարի:

Երբ լռում ես, իմ ազգամայր հայերէն,
Ինձ թըւում է, ոսկորներն էլ Մաշտոցի
Օտար լեզուով գերեզմանից կը հանեն,
Կը ձըգեն ծովն արցունքի:

Երբ չեն պաշտում հայ սերունդներն հայ լեզուն,
Ինձ թըլում է, խարոյկի մէջ օտարի
Հազարամեայ Հայոց գրքերն են կիզում
Թաղելով ազգն իմ բարի:

Երբ չեն խօսում ծախուած հայերն հայերէն,
ինձ թըլում է, թէ իմ գրկից խլելով
Իմ որդոցը աչքիս առաջ կը մորթեն,
Չեռքիս շղթայ դնելով:

Երբ իմ ազգն է գաղտնի մաղուած այլերէն՝
Գողացումով հայոց թռռան ու ծոռան,
Ինձ թըլում է, նախահայրերս համօրէն,
Շիրմից վըրաս կը գոռան:

Երբ սուգում է հայոց լեզուի նաւն այսպէս,
Էլ ինչի՞ս է Երեւանն էլ այս վըճիտ.
Իր կեանքով էլ, խոյանքով էլ այսքան վեհ,
Չարժէ թէկուզ մի խրճիթ:

Երբ չեն խօսում խաբուած հայերն հայ լեզուով,
Կ'ուզեմ իջնել խորանն իմ հայ Մաշտոցի,
Սիրւոյս խըրեն՝ ինքնաըստան լինելով,
Գըրիչն իմ լոյս ամրոցի:

Ա՛խ, թէ պիտի մեռնի հայոց սուրբ լեզուն,
Մահուան որմը հաղորդագին թող բախտի,
Թող քառսը վերադառնայ եւ անյոյս
Աստուած ինքն էլ թող կախտի:

Զարթնի՛ր, Մաշտո՛ց, զարթնեցընենք Վարդանանց,
Հայաստանում զուլում, զուլում է Հայոց,
Ամենօրեայ Աւարայրով մեր անանց
Փրկենք Մասիսն էլ դեռ գոց:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

IF I FORGET THEE, O JERUSALEM

(to Garo on the 40th anniversary of his writing career)

The grass there is never so green;
birds do not sing. Only lean sparrows
twitter endlessly under ancient eaves.
Alley cats sit brooding on rooftops, dreaming fierce dreams.
Dogs do not bark there, for there are none:
the *masters* have not enough to eat.

But the potbellied bells peal ponderously and loud
from belfry and tower, on holidays, sundays,
saints' days, sinners' days and every day
of the week; their booming baritones
mingling with the tintinnabulation
of the slender tinkling bells, now in counterpoint
now in joyful cacophony.

In the Cathedral
where rests the sainted head of James beloved of Christ
it's never morning or night: the oil lamps
(vying with Jacob's robe in delicate hues)
etch rainbow-tinted haloes in the twilight,
and candles, immaculately white, lick
the sculpted shadows with golden tongues
as sterneyed prophets and saints stare down from the walls,
painted by rude artists in perishing oil.

Here stoops sad Abraham with drawn knife
preparing to make his porpotual sacrificio
to a jealous and demanding God
and the angel tarries with the sacrificial ram;

there Jesus, tall against a semicircular sky
with arms outstretched and uplifted eyes
communes with the Holy Spirit incarnate as a Dove.
The soaring pillars half-float in the pungent dusk
of incense, half-melt in their clouds;
the priestly voice rises and falls in waves
through the diaphanous air but the few
kneeling figures swathed in black
are too deaf with age to hear the word of God.
His mansions are many, but God is far,
having moved on to some happier land,
and men's hearts are empty like the empty streets
echoing strangely the sound of weary feet.

The men sit, waiting, idly playing cards
as if they thought some miracle might still transpire
some savior ride in triumph through their streets,
might feed five thousand with a few fishes, a little bread.

They do not realize
that miracles are not the order of the day.
The poor in body have very long to wait,
the crippled, for the healing touch.
Poor, battered love, poor beggar, ruined town!
But the birds there do not scream so loud!

HAIG KHACHADOURIAN

Թէ ՄՈՌԱՅԱՅՑ ԶՔԵԶ ԵՐՈՒՍԱՂԷՄ
(Կարօին՝ իր Գրական ասպարէզին 40 ամեակին առիթով)

Խոտը այնտեղ չէ՝ երբեք այսպէս կանաչ.
Թռչուններն չեն երգեր հոն:
Միայն նիհար ճնդողներ կան անդադար
Ճըվընվացող շուրջն հնամենի փերուրն:
Տանիքներու ալ գագաթին դարանակալ՝
Նրբանցներու կատուներն նենգ կ'երագեն
Իրենց կիրքին ցանկութեամբ լի, կատաղի:
Շուններն այնտեղ չեն հաչեր, որովհետեւ
Շուներ չի կան որ հաչեն. իրենց տէրերն
Իսկ բաւարար կերակուր հագիւ գտնել
Կը կարենան ուտելու:

Բայց մեծափոր զանգակներու դողանջներն
Ծանրահնչիւն բարձրադադակ կը հնչեն
Զանգակատանց, Աշտարակի կատարէն,
Տօն օրերուն, Կիրակիին, Սրբոց տօնին,
Մեղաւորաց եւ շաքաթուան "լուր օրերուն":
Անոնց հնչեղ ձայնը բամբ կը խառնուի
Զանգիւններուն հետ մանրիկ զանգակներուն,
Բազմաձայնեան մերթ հանելի ելեւէջով,
Երբեմն նաեւ անբարեհունչ ցնծերգութեամբ:

Մայր Տաճարին մէջ կը հանգչի Գրլուխը Սուրբ
Յակոբոսին՝ այն սիրելի աշակերտին Տէր Յիսուսի.
Այնտեղ երբեք ո'չ առաւօտ, ո'չ իսկ գիշեր կը տեսնես.
Զէթով վառուող կանթեղներն երանգներով ծիածանի
Լուսապսակ Մութնուլուսուն կը գծագրեն
(Առաքեալի շուրջառին հետ նուրբ գոյներու մրցումի
Ելեր կարծես): Բիւրեղ, ճերմակ մոմերու շարքն՝ իրենց ոսկի
Լեզուներով, կը լափլիզեն փանդակ շուքերն,
Մինչ սուրբերուն խստասեւեռ նայուածքին հետ
Դաժանաբիր մարգարէներ կը սեւեռեն
Իրենց նայուածքն պատերէն վար,

Պատեր՝ ներկուած արուեստի կոշտ ձեռքերով
Եւ անորակ իւղաներկով:

Ահա այստեղ Հայր Աբրահամն է վշտալի,
Զեռքը դանակ, կրքած, պատրաստ մատուցելու
Իր նախանձոտ, խստապահանջ այդ Աստուծոյն
Մշտական գոհն իր խոստացած. մինչ հրեշտակն ալ
Կը տնտընայ ձեռքին բռնած խոյն գոհական:

Ահա Յիսուսն անդին կանգնած բարձրահասակ,
Կիսարդուր երկնքին դէմ բազկատարած
Իր թեւերովն եւ աչքերովն իր վերամբարձ,
Հաղորդուելով Սուրբ Հոգւոյն հետ՝ իբր աղանի
Կերպարանեալ: Նաեւ Սիւներն վերասըլաց
Որ կիսովին կ'ալեծփին մըթընշաղին
Մէջ խունկերու բարկ բոյրերուն, եւ ամպերուն
Մէջէն անոնց կիսով հալած:

Քահանայից ձայներըն ալ կ'ելեւէջեն
Ալիքածուփ, անօսրացած օդին մէջէն.
Եւ ծնկաչոք մի քանի դէմք՝ սեւ շղարշի
Մէջ փաթաթուած ծանրա-ականջ ալեւորներ,
Աստուծոյ խօսքն իսկ հագիւ թէ կրնան լսել:
"Օթեւաններն Անոր քազում են արդարեւ."
Բայց հեռակայ է այդ Աստուածն՝ կարծես անցած
Դէպի ուրիշ եւ երջանիկ երկիրներ.
Ու պարպըւեր է մարդոց սիրտն գերթ փողոցներն
Այս ամայի որ տարօրէն կ'արձագանգեն
Ոտքերուն ձայնը պարտասած հոգիներուն:

Մարդիկ նստած լոկ ծուլօրէն կը սպասեն,
Թղթախաղով ալ տարուած, ակընկալու
Որ յաղթական փրկիչ մը մուտք գործէ հրաշքով
Ու կերակրէ հինգ հազարներ - կտոր մը հաց
Ու մի քանի ձուկ օրհնելով:
Բայց անոնք չեն անդրադառնար որ այլեւս

Անցած է Օրն հըրաշքներուն: Ու մարմինով աղփատներն
Երկար պիտի ըսպասեն օրհնաբեր այդ փըրկիչին,
Անդամալոյծն ալ՝ հըպումին անոր բուժիչ ձեռքներուն:

Գանակոծուած խեղճուկ սէրեր, խեղճ աղփատներ!

Ու կործանուած շէն փաղափներ!

Ու թռչուններն այնտեղ այնքան բարձրադադակ

Ձեն նիչ հաներ, չեն նըռուողեր:

ԹՐԳՄՆ. ՇԷՆ-ՄԱՀ

ՀԱՅԿ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ԱՄԲՈՂԶԸ ԲԵԶ

Ինչ դառն ամօք եւ ցաւագիւմ՝
Մտածել թէ՛ կար ժամանակ
Երբ թոյլ տըւի որ Փըրկչին գութմ
Ջուր պաղատի, դէմն իմ գոռոզ
Պատասխանիմ՝ Իր երեսին.
«Ամբողջմ՝ անձիս, ոչի՛նչ՝ Բեզի:»

Ա՛ն զիս գըտաւ. ես զԱյն տեսայ
Անէծք ծառին վրայ՝ արիւնով.
Աղօթք շուրթիմ. «Հայր, թող դոցա:»
Ու կամակոր սիրտըս՝ զիջաւ
Նուաղում ձայնով ըսել Ամոր.
«Մա՛ս մը անձիս, մա՛ս մը Բեզի:»

Բայց օրէ օր գութմ Իր քննուշ
Բուժիչ, օգնող, լի եւ ազատ,
Քաղցր եւ ուժեղ, եւ համբերող,
Խոնարհեցուց զիս դէպ՝ Իրեմ,
Ու մրմունջով փսփսացի.
«Բի՛չը՝ անձիս, շա՛տը՝ Բեզի:»

Քամ բարձրագոյն երկինքէն բարձր,
Խորագոյն քամ ծովը խորունկ,
Սէրըդ, ո՛վ Տէր, զիս մերգրաւեց.
Շնորհէ ինձ արդ՝ իմ հոգիիս
Պաղատագիւմ խնդրամբն սրտփրաց.
«Ոչի՛նչ՝ անձիս, ամբողջը՝ Բե՛զ:»

Թրգմ. ՇԷՆ-Մահ ԱՆԱՆՈՒՆ

ՔԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀՈԼՈՎՈՅԹՈՒՄ

Գ. Եղե՞լ է Արդեօֆ Հայկական վերածնության

Չափով գանեղեղան ...

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

Այս հարցի դրական պատասխանը հայեցողական վիճակի է, որից բխում է հայությանը: Հայություն ունի տրամագծորեն հակադիր երկու տեսակետ, եւ եւ չեմ կարող չըջանցել հարցը, քանի որ այն կապուած է մեծագույն առաջ Գրիգոր Նարեկացու տեղի վերաբերյալ գնահատության հետ: Թէեւ Մ. Արեղեանը գտնում է, որ Նարեկացու լեզուաբանական երկերը «ըստ լեզվաբանական արտայայտիչ են ոչ թէ լեզվաբանական եւ փառաբանական, այլ լեզուաբանական, այլ այն դարի եկեղեցական ոգու կրօնական ոգու, որով տոգորուած էին եւ աշխարհականները», այնուամենայնիւ նշում է՝ «բայց եւ այնպէս նրա մի քանի քանաստեղծութիւնների մէջ շատ է արդէն վերածնութիւնը» եւ թէ՛ «ինչպէս էլ լինի, վերածնութեան սկզբնաւորման շրջանի գրականութեան խոշորագոյն դէմքը» (2):

Վերածնութեան շունչ է տեսել նաեւ ռուս քանաստեղծ Վ. Յա. Բրյուսովը Կոստանդին Երզնկացու՝ գարնանը նուիրած մի տաղի մէջ, գրելով, թէ այդ տաղի ոգին «պատկանում է վերածնութեան վեհ շնչին, երբ դա այն ժամանակ հագիւ էր ծագում Արեւմուտքի առաջաւոր երկրներում եւ անյայտ ուղիներով տարածուել էր Հայաստանի լեռները» (3): Կոստանդին Երզնկացին (մօտ 1250-1320) ժամանակակից էր Ալիգիբրի Դանտէին (1265-1321) եւ ապա չէ՞ որ Բրյուսովը չի նշում ոչ հայկական վերածնութեան որեւէ

շրջան եւ ոչ էլ ժամանակագրական սահման, եւ վերածնութեան հոսանքի սկիզբն էլ տեսնում է ոչ թէ Հայաստանում, այլ Արեւմուտքում:

Հայկական վերածնութեան հարցին առաւել հանգամանօրէն անդրադարձել է Վազգէն Չալոյեանը իր «Հայկական Ռեֆլեքս» գրքում (ռուսերէն, Մոսկուա, 1963. հայերէն, Երեւան, 1964): Գիրքը երեւոյթ են համարել Ն. Ի. Կոնրադը (4) եւ Ա. Յ. Լոսելը (5): Չալոյեանը եւս հայկական վերածնութիւնը կապում է Նարեկացու անուն հետ: Ինչպէս Դանտեն «Արեւմուտքում, այնպէս էլ Գրիգոր Նարեկացին Հայաստանում նշանաւորեց անցումը միջնադարից դէպի նոր ժամանակները» (6), գրում է նա, անտեսելով նրանց միջեւ եղած երեք հարիւրամեայ հեռաւորութիւնը: Բայց ինչպէս ասուեց հայկական վերածնութիւնը, Չալոյեանից առաջ, ընդունել են Մ. Արեղեանը, Մ. Մկրտչանը, Ա. Միքայելեանը (7), Վ. Նալբանդեանը (8), Ա. Սրապեանը, (9) փոքր ինչ ուշ՝ Հր. Թամրազեանը (10) եւ ուրիշներ:

Բայց իսկապէ՞ս եղել է հայկական վերածնութիւն: Զե՞ որ այդ հարցը ունի առնուազն երկու կողմ. ա) եղե՞լ է արդեօֆ հայկական վերածնութիւն եւ բ) արդեօֆ այդ շրջանը սկսում է Նարեկացուց: Կարելի է նաեւ յստակ սահմանազատել միջնադարի մշակոյթի վերելքի շրջանը վերածնութեան դարաշրջանի մշակոյթից,

որոնք զարգացման որակական տարբեր աստիճաններ են:

Անվիճելիորեն ընդունելով, որ Եւրոպայի ժողովուրդների պատմութեան մէջ եղել է մշակոյթի զարգացման մի շրջան, միջնադարի եւ նոր ժամանակների միջեւ, որը յայտնի է ֆրանսերէն Ռենեսանս, հայերէն՝ վերածնունդ կամ վերածնութիւն անունով, գիտնականները սակայն շարունակում են վիճել այդ յեղաշրջման հետ կապուած մի շարք հարցերի շուրջ (11): Արդեօք դա յատուկ է միայն Իտալիային, թէ նաեւ ուրիշ երկրներին, ժամանակագրորէն ո՞ր դարից որ դարն է ընդգրկում վերածնութիւնը, որո՞նք են նրա բնորոշ գծերը, ի՞նչ ազգային առանձնայատկութիւններ ունի այն, արդեօք Արեւելի ժողովուրդները եւս ունեցել են իրենց վերածնութիւնը եւ այլն: Հարցերի այս շղթայում, բնական է, որ ծագէր նաեւ հայկական վերածնութեան խնդիրը:

Վերածնութիւնը սկզբնաւորուել է Իտալիայում՝ 14րդ դարի երկրորդ կեսին: Իտալիան մինչ այդ անցել էր իր միջնադարի հազարամեայ ուղին: Եւրոպական պատմագիտութիւնը միջնադարի սկիզբը համարում է 476թ.՝ գոթերի կողմից Հռոմի գրաւման տարեթիւը, իսկ վերջը՝ Ամերիկայի յայտնագործման տարին՝ 1492 թուականը: Ըստ մէկ այլ տեսակէտի՝ միջնադարի սկիզբը համարւում է Կոստանդին Մեծի կայսրութեան մայրաքաղաքը Հռոմից Բիզանդիոն տեղափոխուելու տարին՝ 330 թուականը, իսկ վերջը 1453 թուականը՝ թուրքերի կողմից նոյն մայրաքաղաքը գրաւելու տարին: Ակնհերել է, որ պատմութեան հազարամեայ մի շրջան կրում է միջնադար անունը: Պատմականօրէն այդ յարաբերութիւններին համապատասխանում է ֆրիստոնէական եկեղեցու գաղափարախօսութեան տիրապետութիւնը

Արեւմուտում:

Հայաստանի համար եւս միջնադարը սկսւում է նոյն 300ական թուականներից: 301թ. ֆրիստոնէութիւնը պետական կրօն է հռչակուել Հայաստանում: Հայաստանի համար, սակայն, դժուար է նշել միջնադարի որոշակի վերջը: 13րդ դարի 30ական թթ. սկսուեցին թուրք-մոնկոլական արշաւանքները: 1375 թ. կործանուեց Կիլիկիայի հայոց թագաւորութիւնը: Օտար տիրապետութեան լծի տակ խաթարուեց Հայաստանի բնականոն զարգացման ընթացքը:

Զուգահեռը բնորոշ է նաեւ Բիզանդիայի համար: Բիզանդիան մինչեւ 15րդ դարի կէսը պահպանեց իր անկախութիւնը: Այստեղ եւս տիրում էին հասարակական-տնտեսական նոյն յարաբերութիւնները: Նոյն ֆրիստոնէական եկեղեցու գաղափարախօսութիւնը: Իսկ նա նշանակում է, որ չնայած յունական հայկական եւ իտալական մշակոյթների ազգային գծերին, նրանք գրեթէ մի ողջ հազարամեակ զարգացել են տիպաբանական համարնոյթ ընդհանրութիւններով: Մինչեւ 14րդ դարի սկիզբը մակարդակների զգալի տարբերութիւն չի եղել այդ երկրների մշակոյթների միջեւ: Զարգացման այն աստիճանը, որին հասել էր հայ մշակոյթը 14րդ դարի սկզբին, չվերանց վերածնութեան, եւ դա Հայաստանի հասարակական-գաղափարական անբարենպաստ պայմանների հետեւանքով: Բայց այդ ժամանակ դեռեւս վերածնութիւն չկար եւ Արեւմուտում: «Ամբողջ 14րդ դարը Իտալիայում եւ արեւմտեան միւս երկրներում նոյնպէս դեռեւս հանդէս է գալիս միմիայն իսկական վերածնութեան նախապատրաստութիւնը» (12)՝ գրել է Ա. Լոսելը՝ վերածնութեան դարաշրջանի գեղագիտութեանը նուիրուած իր մեծարժէք աշխատութեան մէջ:

Դեռեւս ոչ հեռու անցելու միջին

դարերը համարուել են կրօնական խաւարամտութեան, միստիկայի, դոգմատիկայի տիրապետութեան դարեր: Բարեբախտաբար, արդի միջնադարագիտութիւնը նոր հայեցակէտից է նայում մշակոյթի զարգացման այդ շրջանին: Ճիշտ այնպէս, ինչպէս միջին դարերի աշխարհայեցութիւնը բացասում էր անտիկ մշակոյթի աշխարհիկ ոգին՝ իր համար ընդունելի արժէքների ժառանգորդամար, այդպէս էլ վերածնութիւնը մերժում էր միջնադարի կրօնա-եկեղեցական եւ ասկետիկ ոգին՝ ժառանգելով իր համար ընդունելի արժէքները: Միջնադարը ստեղծել է իր մշակոյթը՝ անտիկ առանձին աւանդոյթների վերաիմաստաւորմամբ, վերածնութիւնը իր արժէքները՝ թէ՛ անտիկ աւանդոյթների վերարժարմամբ եւ թէ՛ միջին դարերի առանձին նուանումների զարգացմամբ: Այլ կերպ ասած՝ ամէն ինչ տեղի է ունեցել դիպիկտիկօրէն, բացասման օրէնքով, որի արդիւնքը նորից ստացում է սկզբնական ելակէտը՝ բայց աւելի բարձր աստիճանի վրայ:

Զարգացման այս օրինաչափութիւնը դասական արտայայտութիւն է գտել Իտալիայի մշակոյթի պատմութեան մէջ: Անտիկ շրջանին յաջորդել է միջնադարը, միջնադարին՝ վերածնութիւնը: Միջնադարի եւ վերածնութեան սահմանաբաժանը սկսում է Դանտեով: Դանտեն Միջնադարի վերջին քանաստեղծն է՝ հնի ու նորի սահմանաբաժանը: Այսպէս էր Իտալիայում 14րդ դարի սկզբին: Այսպէս չէր սակայն ո՛չ Արեւմուտքի միւս երկրներում եւ ոչ էլ Արեւելքում:

Հարցը չի վերաբերում նրան, թէ իբր ուրիշ ժողովուրդներ հետաքրքրութիւն չեն ունեցել իրենց հին մշակոյթի նկատմամբ: Ոչ. այդ հետաքրքրութիւնը միշտ եղել է, եւ դա վերածնութեան մեծաշնորհը չէր: Կարելի է այն, թէ ի՞նչը վերածնես, եւ ո՞ր հայեցակէտից: «Վերա-

ծնութեան դարաշրջանը անտիկ մտքի մէջ, - ի տարբերութիւն միջին դարերի - յայտնաբերում է նրա «հեթանոսական» հետաքրքրութիւնը դէպի մարդը, նրա ողջ «այսրաշխարհային» եւ «հումանիստական» էութիւնը» (13), - գրել է Պինսկին՝ վերածնութեան դարաշրջանի ռեալիզմին նուիրած իր հետաքրքիր ուսումնասիրութեան մէջ:

Հայ գրականութիւնը սկզբնաւորուել է 5րդ դարում: Դա քրիստոնէական գաղափարախօսութեամբ տոգորուած միջնադարի մշակոյթ էր՝ իր ազգային յուրայատուկ գծերով: Եւ շատ աւելի նշմարտաւօտ է Արեղեանի այն միտքը, թէ «Հին կրօնա-եկեղեցական ուղղութեան եւ վանական կեանքի ամենափայլուն ժամանակը մեզանում եղել է 10րդ դարի երկրորդ կէսին եւ 11րդ դարի սկզբներին, երբ դա ցայտուն կերպով արտայայտուել է եկեղեցական ճարտարապետութեամբ եւ Գրիգոր Նարեկացու երկերով» (14): Եւ եթէ Արեղեանը «վերածնութեան սաղմեր» է տեսնում Նարեկացու ստեղծագործութեան մէջ, հեթանոսական դարերի աշխարհիկ ոգու շորշոփներ, իսկ Զալոյեանը «հայ նոր պոեզիայի բողոքները» (15), ապա այն նորն այլքան չէր, քան աշխարհականացման տարրեր՝ նորալատոնականութեան հիմքի վրայ: Դարի ստեղծագործական ուժերը դեռեւս նպատակամղուած չէին աշխարհիկ արուեստ ստեղծելուն: Դա մարդու եւ քնութեան արժէքաւորման այն աստիճանն է, որը դեռեւս դուրս չէր եկել աստուածաբանութեան խնամակալութիւնից: Նարեկացին հզօր լիցքեր է տալիս գրականութեան աշխարհականացմանը: Բայց նա մարդու իդեալը բացառապէս տեսնում է Քրիստոսի եւ ոչ թէ հասարակական յարաբերութիւններով պայմանաւորուած անհատի մէջ:

Եւրոպական վերածնութիւնը սկզբնաւորուել է որպէս բուրժուական

հասարակարգի արշալոյսի մշակոյթ, համապատասխանելով կապիտալիստական յարաբերութիւնների ձեւաւորման նախնական աստիճանին: Հետեւաբար, դա զուտ պատմա-մշակութային երեւոյթ չէր, այլ ունէր իր հասարակական-տնտեսական հիմքերը: Արեւելի ոչ մի երկիր, սակայն, չի թեւակոխել կապիտալիստական զարգացման ուղին աւելի վաղ, քան եւրոպական երկրները: Պատմական իրողութիւն է, որ 10-14րդ դարերում ինչպէս Հայաստանը, Վրաստանը, այնպէս էլ Միջին Ասիայի մի քանի երկրներ ապրել են տնտեսական եւ մշակութային վերելք, անել են քաղաքներ, ծաւալուել է առեւտուրը, գոյացել է վաշխառուական դրամագլուխ, բռնկուել են ապստամբութիւններ, բայց դրանք չեն հանգեցրել կապիտալիստական կացութեան ձեւաւորման: Հայաստանում եւ, առհասարակ, Արեւելքում ֆեոդալական արտադրանքի տարբեր արտադրանքի ստեղծելու պատմական փորձ չի եղել: Գիւղատնտեսութեան մէջ չեն խախտուել քնատնտեսութեան հիմքերը: Արհեստագործութիւնը դեռեւս ֆեոդալական ապրանք արտադրելու ձեւ էր: Առեւտրական-վաշխառուական կապիտալը կարող էր ծախսուել վաճառքի ու պալատ, բերդ ու կամուրջ կառուցելու, բայց ոչ երբեք կապիտալիստական քոյրի ձեւաւորութիւն հիմնադրելու համար: Փողը կարող էր անցնել ձեռքից ձեռք, բայց դրանից արտադրանքի արտադրանք չէր փոխուել: Այնպէս որ «ֆեոդալիզմի անկման եւ կապիտալիզմի առաջացման օրրանը հանդիսացաւ Արեւմուտքը: Որչափ իր հերթին Ռեֆորմացիայի վաղ Ռեֆորմացիայի քեղման արտադրանքի էր ունենում հենց կազմաւորուող կապիտալիստական յարաբերութիւնների գեղնի վրայ, հասկանալի է, որ նրա օրրանը եւս պիտի որոնենք դարձեալ արեւմտեան իրականութիւնում եւ ամենից

առաջ իտալական քաղաքներում» (16), գրել է Ա. Յովհաննիսեանը՝ առակելով թէ՛ հայկական եւ թէ՛ արեւելեան վերածնութեան կողմնակիցներին: Տեղին է յիշել Ա. Լոսելի մի դիտողութիւնը եւս. «Արեւելեան վերածնութեան դարաշրջանի հասարակական-տնտեսական հիմքը ուսումնասիրողների կողմից գծագրուել է խիստ տարասեռ եւ հակասական» (17):

Հայկական վերածնութեան կողմնակիցների մի մասն էլ յենում է Մարքսի այն դրոյթի վրայ, որ արուեստի «ծաղկման որոշ ժամանակաշրջաններ ամենեւին չեն համապատասխանում հասարակութեան ընդհանուր զարգացմանը, նաեւ նրա նիւթական զարգացման հիմքին, որը մի տեսակ հանդիսանում է հասարակութեան կազմակերպման կմախքը» (18): Մարքսը արուեստի ծաղկման այդպիսի երկու շրջան է տեսնում մշակոյթի պատմութեան մէջ. մէկը հին Յունաստանում, միւսը Անգլիայում՝ Շեքսպիրի ժամանակ: Ստրկատիրական Յունաստանի չհասունացած հասարակական յարաբերութիւնների ժամանակ ստեղծուել է աւելի քարճար արուեստ, քան այդ յարաբերութիւնների հասունացման քարճար աստիճանում: Այդպէս էլ Շեքսպիրը հանդէս է եկել կապիտալիստական չհասունացած յարաբերութիւնների ժամանակ Անգլիայում, մինչդեռ աներեւակայելի է, որ նա հանդէս գար զարգացած կապիտալիստական յարաբերութիւնների ժամանակ: Արուեստի ծաղկման եւ նրա հասարակական-տնտեսական հիմքի անհամապատասխանութիւնը վերաբերում է նոյն տնտեսակարգի զարգացման տարբեր աստիճաններին: Մարքսը չի ասում, թէ հին Յունաստանի ծաղկած արուեստը ստրկատիրական հասարակարգի արուեստ չէր: Նա ասում է, որ այդ արուեստը չէր կարող ծաղկել ստրկատիրական յարաբերութիւնների զարգացման քարճար

աստիճանում: Այդպես էլ Մարգար չի ասում, թե Շեֆալիքը կապիտալիստական յարաբերութիւնների ձեւաւորման շրջանի տրամատուրկ չէ: Նա ասում է, որ այդ արուեստը չէր կարող ստեղծուել կապիտալիստական յարաբերութիւնների զարգացման բարձր աստիճանում: Ըստ այսմ էլ Փեռդելիզմի դարաշրջանում արուեստը կարող էր ծաղկել մի երկրում նրա չհասունացած յարաբերութիւնների շրջանում, բայց միշտ էլ մնալով նոյն դարաշրջանի արուեստ: 5րդ դարում Հայաստանում ծաղկել է արուեստը, մանաւանդ՝ պատմագրութիւնը, 10րդ դարում՝ ճարտարապետութիւնը եւ քանաստեղծութիւնը, 13րդ դարում՝ մանրանկարչութիւնը եւ այլն: Բայց այստեղ չկայ արուեստի զարգացման մի շրջան, որը չհամապատասխանէր նրա հասարակական-տնտեսական հիմքերին:

Եւրոպական վերածնութեան հիմնական գծերից մէկն էլ պայքարն էր եկեղեցու դէմ: Եկեղեցին Փեռդելիզմի գաղափարախօսութեան պատուանդանն էր, եւ անող հասարակական գիտակցութիւնը ձգտում էր ազատագրուիլ նրա գերիշխանութիւնից: Հայկական վերածնութեան կողմնակիցները նման պայքարի զուգահեռ են տեսնում թոնդրակեան շարժման մէջ: Թոնդրակեցիները իսկապէս պայքարում էին Փեռդալական ճնշումների դէմ, քննադատում էին եկեղեցու ծեսերը, մերժում նրա՝ իբրեւ միջնորդի դերը մարդու եւ աստծու միջեւ եւ այլն: Բայց դա կրօնի՝ իբրեւ աշխարհայեցութեան քննադատութիւն չէր: Նրանք քարոզում էին վերադարձ դէպի առաջին դարերի քրիստոնէական համայնքների սիրոյ, եղբայրութեան, անընչասիրութեան բարձր սկզբունքները: Այնպէս որ թոնդրակեան շարժումը աղանդաւորական շարժում էր, եւ ոչ մի հիմք չկայ նրանց պայքարը բարձրացնելու Ռեֆորմացիայի շրջանի

յեղափոխական շարժման մակարդակին, որը բուրժուական բնոյթ ուներ: Ռեֆորմացիայի ժամանակ կաթոլիկ եկեղեցին զրկւում էր իր հողերից, եւ սա ձեռնտու էր ձեւաւորուող բուրժուազիային, մինչդեռ նման բան չի եղել Հայաստանում: Ընդհակառակը, Հայաստանում վանքերն իրենք էին ընդարձակում իրենց տիրոյթները: Եւ եթէ 10րդ դարում Սիւնիքում ծագած գիւղացիական շարժումն ուղղուած էր Տաթևի վանքի դէմ, ապա գիւղացիները պայքարում էին ոչ թէ վանքից գրաւելու նրա տիրոյթները, այլ այն հողերը, որ իրենց իշխանն էր նուիրաբերել վանքին: Այսպիսով՝ թոնդրակեան շարժման պատճառները ոչ մի կապ չունեն կապիտալի ճախասկզբնական կուտակման հետ, նրա նպատակները՝ վերածնութեան դարաշրջանի գաղափարախօսութեան հետ: «Մի կողմից դա ազատագրական պայքար էր օտար տիրապետողների տնտեսական, քաղաքական եւ հոգեւոր ճնշման դէմ – գրում է Բ. Առաքելեանը – միւս կողմից՝ սոցիալական պայքար՝ ընդդէմ Փեռդելական կեղեքման» (19):

Բայց թերեւս հասարակական –պատմական եւ տնտեսական այս գծերը համարուեն երկրորդական, ելնելով այն ճախադրեալից, որ վերածնութիւնը մշակութային երեւոյթ է, որ նրա էական յատկանիշները պէտք է տեսնել արուեստի եւ գրականութեան մէջ մարդու կերպարի արտացոլման եւ հումանիզմի դրսեւորման տեսանկիւնից: Իսկապէս, վերածնութիւնն այլ մօտեցում ուներ դէպի մարդը, միջնադարը՝ այլ: Ըստ միջնադարի աշխարհայեցութեան՝ բարձրագոյն արժէքը ոչ թէ մարդն էր, այլ աստուած, ոչ թէ մարմինն էր, այլ հոգին, բարձրագոյն իմացութիւնը՝ ո՛չ թէ բնութեան ճանաչողութիւնն էր, այլ հաւատը եւ մարդն էլ ընկալւում էր ոչ թէ իբրեւ

բնութեան մի մասը, այլ իբրեւ աստծու պատկեր եւ նմանութիւն: Մինչդեռ վերածնութիւնը ամենից առաջ վերադարձ է դէպի բնութիւնը, դէպի կեցութիւնը, դէպի մարդն ու հասարակութիւնը: Դա գիտակցութեան անման մի ընթացք էր, որ տեւել էր դարեր, կուտակուել տարր առ տարր, գաղափար առ գաղափար, զգացմունք առ զգացմունք՝ վերանելով մտաւոր եւ մշակութային մեծագոյն յեղաշրջման: Բնական է, որ հումանիզմն էլ դարձաւ վերածնութեան էութիւնը: Անշուշտ, անտիկ եւ միջնադարի մշակոյթներն էլ ունէին իրենց հումանիստական բովանդակութիւնը: Բայց այլ է հումանիզմի պատմական բովանդակութիւնը, այլ՝ նրա գեղարուեստական արտացոլման եղանակը: Ահա թէ ինչո՞ւ «Ոչ թէ կարեւոր հումանիզմի կոնցիպցեան ինքնին» իբրեւ այդպիսին, այլ նրա բովանդակութիւնը» - գրել է Ն. Կոնրադը: - Այդ բովանդակութիւնը պատմականօրէն եղել է տարբեր: Յիշեմք այն հպարտ յայտարարութիւնը, թէ մարդն աստծու պատկեր է եւ նմանութիւն: Յիշեմք այն մարդուն, որ ձեռք էր բերել կրակը՝ կորզելով աստուածութեան ձեռքից: Սա մարդուն, որ ձեռք էր բերել կրակը՝ կորզելով աստուածութեան ձեռքից: Սա չի՞ նշանակում արդեօք, որ մարդը գիտակցել է, թէ ինքն օժտուած է նոյն այն ուժերով, որոնք վերագրուում են աստուածներին, այսինքն՝ այն ժամանակուայ պատկերացմամբ՝ ամենահզօր էակներին: Այդպիսին է եղել, ըստ երեւոյթին, հումանիզմի ամենահին կոնցեպցիան, մի կոնցեպցիա, որն ունեցել է վիթխարի նշանակութիւն, որովհետեւ առանց մարդու սեփական հզօրութեան հաւատի դժուար կը լինէր ստեղծել կեանք ու մշակոյթ, իսկ այդ գիտակցութեան նշանակութեան մասին վկայում է այն, որ այդ կոնցեպցիան ձեւաւորուել է ժամանակի մտքերի համար

ամենամեծ ուժի միջոցով՝ առասպելաստեղծման եղանակներով: Յիշեմք այնուհետեւ «մերձաւորի սիրոյ» «մարդու սիրոյ», «գթասիրութեան եւ կարեկցանքի» մասին պատուիրանները: Դրանք նոյնպէս հոչակուել են հնում, միայն թէ աւելի ուշ, երբ հասարակական կեանքն ու մշակոյթը արդէն զարգացման աւելի բարձր աստիճանի վրայ էին գտնուում» (20):

Վերածնութեան հումանիզմը Ն. Կոնրադը համարում է պատմականօրէն երրորդը, որը «իր ձեւակերպումը ստացել է արդէն ոչ թէ առասպելի, ոչ թէ կրօնի կամ կենցաղային բարոյականութեան կատեգորիաների մէջ, այլ փիլիսոփայութեան, ընդ որում՝ ոչ թէ միայն բարոյագիտութեան, այլ գոյաբանութեան պլանով: Հենց այս բովանդակութեամբ էլ հումանիզմը, թւում է, կազմում է վերածնութեան դարաշրջանի առաջին յատկանիշը՝ ըստ մատնանշուած մշակութային պատմական պլանի» (21):

Անտիկ հումանիզմի հիմքը գերազանցապէս դիցաբանական էր, միջնադարի մը՝ առաւելապէս աստուածաբանական: Վերածնութեան դարաշրջանի արուեստի հիմքը դարձաւ մարդու, կեանքի եւ բնութեան նոր եւ անմախապաշար հայեցողութիւնը: Միջնադարի գրականութիւնը աստուածակենտրոն գաղափարների արտայայտութիւն էր, վերածնութեանը՝ մարդակենտրոն: Սա է ահա այն սահմանաբաժանը, որ ըստ արուեստի ու գրականութեան բովանդակութեան եւ արտացոլման եղանակի՝ մի երկրի մշակոյթ դարձնում է միջնադարի, մէկ այլ երկրի մշակոյթ՝ վերածնութեան դարաշրջանի մշակոյթ: Այս տեսանկիւնից էլ ոչ միայն Նարեկացու դարի, այլեւ աւելի ուշ՝ 13-14րդ դարերի հայ մշակոյթը զարգացած փռոգելիզմի դարաշրջանի մշակոյթ էր: Զարգացման հունը դեռեւս դուրս չի գալիս աստուածաբանական խնամակալու-

թիւնից: Հայ արուեստի և մշակոյթի հումանիստական բովանդակութիւնը յանգում է քրիստոնէական մարդասիրութեան, սիրոյ, եղբայրութեան և կարեկցանքի միջնադարեան ընկալմանը:

Վերածնութեան դարաշրջանի մարդն արուեստի մէջ պատկերում է որպէս անձնաւորութիւն: Սա հանդէս է գալիս իր անհատական գծերով, իր ձգտումներով և շահերով, իրեն անջատում է իր դասից, կարող է հակադրուել նրա շահերին և այլն: Միջնադարի մարդը հանդէս է գալիս որպէս դասի ներկայացուցիչ, հանրութեան անդամ: Նրա անհատական կեցութիւնը դասային կեցութիւն է, դասային կեցութիւնը՝ անհատական: Միջնադարի մարդու անհատականութիւնը ձուլուած է նրա դասային էութեան հետ: Կերպարումն համար որքան կարեւոր են անհատական գծերը վերածնութեան արուեստի տեսանկիւնից, նոյնքան էլ դրանք անկարեւոր են միջնադարի հայեցակէտից: Միջնադարի համար կարեւորը մարդն է առհասարակ, նրա մարդկային վերացարկուած էութիւնը: Եւ եթէ գրողը երբեմն-երբեմն տալիս է մէկ-երկու անհատական գիծ, ապա դա անլի շուտ օրինախախտութիւն է, քան օրինաչափութիւն: Բայց սա ոչ թէ նախասիրութիւն կամ տաղանդի հարց էր, այլ բխում էր միջնադարի գեղագիտական ըմբռնումներից, նաեւ փիլիսոփայութիւնից: Ըստ Դաւիթ Անյաղթի՝ ընդհանուրն առաջնային է եւ գոյութիւն ունի մասնաւորից անկախ: Ընդհանուրն ամբողջն է, մասնաւորը՝ մասը: Ծառն ընդհանուր է, ընկուզենին՝ մասնաւոր: Մասը չի կարող իր մէջ պարունակել ամբողջը: Հետեւաբար, փիլիսոփայութիւնը գործ ունի ընդհանուրի և ոչ թէ մասնաւորի հետ, քանի որ մասնաւորը երբեք է գալիս իր քանակային անբաւ դրսեւորումների մէջ: Այսպէս էլ արուեստի նկիւրը պէտք է լինի մարդկային

էութիւնը և ոչ թէ մարդը՝ իր անձնական ու մասնաւոր գծերով: Որովհետեւ, ինչպէս պարզաբանում է Դաւիթ Անյաղթը, «անհատն անբաւ և անորիշք են առ ի թուել, վասն զի ոմանք ապականին և ոմանք լինին, գորս ոչ կարեմք ընդ թուով արկանել: (22):

Սա էր միջնադարի գեղարուեստական արտացոլման տիրապետող սկզբունքը, և Նարեկացին բացառութիւն չէր: Երբ նա ասում է, թէ իր Մատեանը գրել է այս երկրում ապրող ամեն հասակի բանականների համար՝ իր իսկ պատկերի մէջ նշանակելով բոլոր մարդկանց ներյատուկ կրքերն ու մեղքերը, արատները և յանցանքները, ապա Մատեանի քննարկան հերոսը հենց այստեղ հանդէս է գալիս իրրեւ մարդու հասարակական էութիւն, իրրեւ առհասարակ մարդ և ոչ թէ որոշակի անձնաւորութիւն: Միջնադարի ընթերցողը բանաստեղծի մէջ պէտք է տեսներ ու ճանաչէր իրեն, բացարձակաճանար նրա մէջ: Եւ իսկապէս Նարեկացին խօսում է իր անունից՝ բոլորի փոխարէն, հանրութեան յիւրաքանչիւր անդամ աղօթում է բանաստեղծի խօսքով՝ իր համար: Ի հարկէ, Նարեկացին երբեմն էլ չի խուսափում իր անհատական հոգեբանութիւնն արտայայտելուց, և դա բնական է, որովհետեւ Մատեանը քննարկան երկ է, և բանաստեղծի անհատականութիւնը դեռեւս անձնաւորութիւն չէ: Մարդը որպէս անձնաւորութիւն պատկերելու համար դեռեւս չէր ստեղծուել հասարակական գիտակցութիւն:

Կիրակոս Գանձակեցի (1202-1271) սրտառու էջեր է նուիրել վանական վարդապետին՝ Յովհաննէս Տառնեցուն (1181-1251): Տառնեցին դարի հեղինակաւոր մարդկանցից մէկն էր: Կիրակոսն աշակերտել էր նրան և ապա աշխատել նրա հետ: Թուով է՝ նկարագրելով վանականին, Գանձակեցին կարող էր տալ

նրա՝ իբրեւ անհատի ուրույն եւ ինքնատիպ հոգեբանութիւնն ու գծերը: Մինչդեռ հաւաստելով, որ նա եղել է վայելչատես, ներմակահեր, բարձրահասակ եւ քաղցրահայեաց, Գանձակեցին գծում է ներքին մարդու նրա կերպարը բացառապէս միջնադարի գրողի ստեղծագործման սկզբունքով: Լինելով բացառիկ ծանր պայմաններում, գերութեան մէջ, Վանականը հաւատարիմ է մնում հոգեբանի իր տիպական նկարագրին՝ իբրեւ դասի ներկայացուցիչ: «Որդեակ - ասում է Վանականը Կիրակոսին գերութեան մէջ - գրեալ է՝ թէ «Յորժամ ի նեղութիւնս անկանիցիք, համբերեցե՛ք»: Արդ եւ մեք կացցուք մնացուք խնամոցն աստուծոյ, մինչեւ այց արասցէ մեզ, որպէս եւ կամի: Եւ ասեմ. Որպէս հրամայես, հայր սուրբ, այնպէս արասցուք» (23):

Հայկական վերածնութեան կողմնակիցները այդ դարաշրջանի մտածողներ եւ գրողներ են համարում Յովհաննէս Սարկաւազին (1100-1173), Ֆրիկին (13րդ դ.) Յովհաննէս Նրզնկացուն (1230-1293), Կոստանդին Նրզնկացուն (մօտ 1250-1320) եւ ուրիշների առանց գէթ մէկ անգամ հարց տալու իրենց, թէ ինչու վերածնութեան դարաշրջանի բանաստեղծներ չեն, օրինակ, Գվիդո Կավալկանահին (1259-1300) Իտալիայում, Ջեֆրի Չոսերը (1340-1400) Անգլիայում եւ այլն: Ինչու վերածնութեան գրական յուշարձաններ չեն ասպետական վէպերը, «Ռուանդի երգը», «Աս Իգորի գնդի մասին» հերոսական պոեմները, տրուբադուրների քնարերգութիւնը եւ այլ գործեր: Չոսերի «գեղարուեստական երկերին յատուկ են շատ գծեր, որոնք իրենց լիակատար զարգացումն են գտել միայն շեֆապիրեան դարաշրջանում - կարդում ենք նրան տրուած մի գնահատութեան մէջ, - ռեալիզմ, իրականութեան լրիվ եւ ուժեղ ընկալում, կենսահաստատ աշխարհայեցու-

թիւն, լայն եւ հումանիստական հայեացք մարդկային կեանքի եւ մարդկանց փոխարարներութիւն- ների վրայ»: Թւում է, ոչինչ չի խանգարում վերածնութեան հեղինակների շարքը դասելու Չոսերին: Բայց այս գնահատութիւնն աւարտում է միանգամայն նիշտ քնութագրով. «Դրա հետ միասին, այնուամենայնիւ, նա դեռ եւս մնում է անգլիական միջնադարի մեծագոյն գրողը» (24):

Առարկելով «Վագրեմաւորը» վերածնութեան դարաշրջանի յուշարձան ընդունողներին, յայտնի միջնադարագէտ Ե. Մելետինսկին գտնում է, որ վիպական հերոսը հեռադրուած է պատմական ժամանակագրութիւնից, սերտօրէն կապուած է քրիստոնէական լեգենդի ազգային ինքնագիտակցման հետ եւ յարում է հերոսական էպիկական-հեքիաթային պատումին, գործողութիւնը ձուլուած է քափառական սուժէների եւ տեղական առասպելների հետ եւ այլն: «Միջնադարի վէպը - ընդհանրացնում է իր խօսքը Ե. Մելետինսկին - ամբողջութեամբ առած նշանաւորում է գեղարուեստական հնարանքի եւ անհատական ստեղծագործութեան սկիզբը: Նա կազմում է միջնադարեան պատմողական գրականութեան գագաթը: «Ներքին մարդու» յայտնագործումը «հերոսի» մէջ ծնեց որոշակի «հումանիստական» բովանդակութիւն միջնադարի վէպում, ինչ-որ չափով կանխելով նաեւ Ռենեսանսի հումանիստական անտրոպոցենտրիզմը: Բայց դա բաւական չէ, որպէս զի 11-13րդ դարերի այս կամ այն յուշարձանը վերագրուի վերածնութեան մշակոյթին» (25):

Հայ գրականութեան պատմութեան մէջ ընդունուած է Կոստանդին Նրզնկացուն համարել սիրոյ առաջին երգիչը: Արեղեանը տուել է այդ սիրերգութեան խորաթափանց գնահատականը. Կոստանդինը «կինը

երգում է նման ձեւերով ու յատկութիւններով, ինչպէս միստիկ երգիչն իր սիրած աստծուն կամ իր պաշտած Ս. Կոյսին: Կինը, թէեւ մարմնաւոր, ոչ աստուածային էակ, նրա համար հանդէս է գալիս գաղափարական պատկերով, միստիկական Սէր եւ Լոյս աստծու յատկութիւններով» (26): Բայց հենց սա էլ նրգնկացուն դնում է միջնադարի եւ ոչ թէ վերածնութեան դարաշրջանի բանաստեղծների շարքը: Նրգնկացու սիրոյ երկու տաղերից մէկի մասին Արեղեանը գրել է այսպէս. «Հնայած բանաստեղծը առանց այլաբանութեան է յօրինել սիրոյ երգը, բայց «դեռ ոչ կատարեալ վստահութեամբ է անում մարմնի գովեստը», իսկ երկրորդ տաղում «նա արդէն սկզբունք է դնում, թէ կին սիրողն է» ճշմարտութիւն եւ անմահութիւն գտնում, թէ «սէր ունեցողն է կենդանի հոգեւոր մարդը» (27) եւ այլն: Լայն ըմբռնմամբ՝ սա սիրոյ փիլիսոփայութիւն է եւ ոչ թէ սրտի ապրած կենսագրութիւն եւ միանգամայն ներդաշն է միջնադարի վերացարկմանը: Կոստանդին Նրգնկացին եւ նրա մերձաւոր ժամանակակիցները անգամ սիրերգութեան մէջ մնացին միջնադարի գեղարուեստական պատկերման մակարդակի վրայ:

Որ Նարեկացին զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի բանաստեղծ է, ակներեւ է նաեւ նրա իդեալից: Ի՞նչ է տառապագին տենչում նա, ինչի՞ է ձգտում. բարոյական ինքնակատարելագործման, աստուածացման եւ հոգու փրկութեան: Աստուածամանութեան եւ աստուածացման այս իդեալը միջնադարի մեծաշնորհն էր: Այն խորթ էր թէ՛ անտիկ եւ թէ՛ վերածնութեան արուեստին: Մինչդեռ այդ իդեալը բանաստեղծօրէն ոչ ոք այնքան բարձր արուեստով չի պատկերել, որքան Նարեկացին.

Ընկալ՝ եւ մատո՛ւ՝ փաւեալ եւ սրբեալ
գիս՝ զամենապարտս,

Բանըդ կենդանի, առ հաւասարապատիւ քո Հոգի,

Ձի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի,

Եւ ի ձեռն քո իւրովն կամաւ մաքուր նուիրեալ,

Ձարեղն ինքնութեամբ զիս Հար ընծայեալ,

Անդէն առ նմին նովմա՛ միշտ ի քեզ
Շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝
Ի քեզ միանալ անբաժանելի:

(Բան ԻԳ, դ)

Նարեկացին տուել է աստուածածին Կոյսի գեղեցկութեան սփռնչելի տիպար: Նրա տեսանելի գեղեցկութեան մէջ Նարեկացին ցանկացել է անդրադարձնել նրա ներքին գեղեցկութիւնը: Նա պաշտելի է, աստուածային, եւ Նարեկացին ձգտում է զգայելի երեւոյթների միջոցով եւ յուզական թրթիռների զուգորդմամբ խորացնել Ս. Կոյսի պաշտամունքը: Բարեպաշտութեան մէջ յուզական լիցքերի հարստացման այս երեւոյթը յատուկ էր նաեւ ֆրիստոնէական միւս երկրներին: «Արուեստը - գրում է միջնադարագէտ Էմիլ Մալը - մաքուր գաղափարների մարզից իջնում է զգացմունքների մարզը եւ սակաւ առ սակաւ դադարում է աստուածաբանութեան աղախինը լինելուց» (28):

Սա ասուած է 14րդ դարի ֆրանսիական արուեստի մասին: Բայց սա վերաբերում է նոյն դարի թէ՛ քրիզանդական եւ թէ՛ հայկական արուեստին: Իսկ այդ արուեստը վերածնութեան դարաշրջանի արուեստ չէր: Նրան ստեղծագործական աւիշ էր տալիս նորպլատոնականութեան ստոյգ բանաձեւը - գրել է Ա. Ֆ. Լոսելը - առաւել եւս՝ բանաձեւել նրա անընդհատ զարգացման փոփոխութիւն կրող աստիճանները» (29): Եւ ապա՝ «վերածնութիւնը նորպլատոնականութեան գեղագիտութիւնն օգտագործեց միանգամայն

մայն ինֆնատիպ ձեւով, կիրառելով այն իր միանգամայն աշխարհիկ պահանջների, իր միանգամայն ռեալիստական արուեստի եւ անհատի ու հասարակութեան իր առաջադիմական, հումանիստական ըմբռնումների համար»:(30)

Եւ այսպէս, 10-14րդ դարերի հայ մշակոյթը փետողալիզմի դարաշրջանի մշակոյթ էր: Հայ մշակոյթը զարգանում էր ժամանակի համաշխարհային մշակոյթի զարգացմանը համընթաց, եւ այդ վերելքն այլ բան չէր, քան արուեստի, գրականութեան եւ գիտութեան աշխարհականացման

նոր աստիճան՝ նորապատմականութեան աշխարհընկալման եւ գեղագիտական սկզբունքների հիման վրայ: Այդ վերելքն իր բարձրակետին հասաւ 14րդ դարի երկրորդ կեսին: Հայ մշակոյթի բարձրագոյն աստիճանը հասաւ նախավերածնութեան մակարդակին եւ, դժբախտաբար, ընդհատուեց օտար նուաճողների տիրապետութեան հաստատմամբ Հայաստանում:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԱՂԲԻԻՆԵՐ

- 1 Մ. Արեղեան, հ. գ. էջ 629
- 2 Մ. Մկրեան, Գրիգոր Նարեկացի, էջ 5
- 3 Վ. Յա. Բրիւտով, Հայաստանի եւ հայ Կուլտուրայի մասին, Երեւան, 1967, էջ 86-87
- 4 Վ. Կ. Զալոնան, Հայկական Ռեներեսանս, Երեւան, 1964, էջ 226
- 5 А. Ф. Лосев. Эстетика Возрождения, М., 1982, с. 15.
- 6 Վ. Կ. Զալոնան, նվ. աշխ. էջ 179
- 8 Վ. Նալբանդեան, նվ. յօդ. էջ 6
- 9 Ա. Սրապեան, Կոստանդին Երզնկացին եւ իր տաղերը: Տես՝ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Երեւան, 1962 էջ 44
- 10 Հր. Թամրազեան, Հայ բնագիտություն, Բ գիրք, էջ 25
- 11 КЛЭ, т. 1, М., 1962, с. 1009-1015.
- 12 Ա. Ֆ. Լոսեւ, նվ. աշխ. էջ 21
- 13 Л. Б. Пинский. Реализм эпохи Возрождения, М., 1967, с. 7.

- 14 Մ. Արեղեան, հ. Դ, էջ 18
- 15 Վ. Կ. Զալոնան, նվ. աշխ. 171
- 16 Աշ. Յովհաննիսեան, Արդեօք Միջնադարեան Հայաստանում Տեղի է Ունեցել Կապիտալի Նախասկզբնական Կուտակում, ՊԲՀ, նո. 1, 1959, էջ 222
- 17 Ա. Ֆ. Լոսեւ, նվ. աշխ. էջ 21
- 18 Կ. Մարքս, Բաղադատման տեսության բնագիտության շուրջը, Երեւան, 1948 էջ 270
- 19 Հայ ժողովրդի պատմություն, հ. 3 էջ 278
- 20 Н. И. Конрад. Об эпохе Возрождения. В кн.: Лит-ра эпохи Возрождения, «Наука», М., 1967, с. 34-35.

- 21 Նոյն տեղում, էջ 35
- 22 Դաւիթ Անյաղք, Սահմանի իմաստասիրութեան, համահաւաք բնական քննադիրը եւ ռուս. քարզմանութիւնը Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1960, էջ 138
- 23 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 250
- 24 История зарубежной лит.: Средние века и Возрождение, М., 1987, с. 327.
- 25 Художественный язык средневековья, Сб. статей, М., 1982, с. 264.
- 26 Մ. Արեղեան, հ. Դ, էջ 389-390
- 27 Նոյն տեղում, էջ 388
- 28 Emile Male, l'art religieux la fin du Moyen Age en France, Paris, 1908, p. 239
- 29 Ա. Ֆ. Լոսեւ, նվ. աշխ. էջ 44
- 30 Նոյն տեղում, էջ 79

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ՝ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԱՐՍՈՆԻ

Ներսէս Լամբրոնացու աշակերտներից Գրիգոր Սկեւոացի վարդապետը, այդ շրջանի մեր նշանաւոր մատենագիր, բանաստեղծ, ծաղկող, երաժիշտներից մէկը այսպէս է բնութագրում իր ուսուցչին:

«Մերկերին հագցնում էր, հիասքափուածներին սփոփում, տկարներին պաշտպանում, զրկեալներին օժանդակում, որքերին սնուցանում»:

Մեր հենքը նրան դեռ կենդանութեան օրօք անուանել են «տիեզերալոյս վարդապետ», «Ջահ լուսապայծառ» «Հայր որբոց», «Ճոխիմաստ եւ շնորհափայլ», «սուրբ», «աստուածամերձ փահանայ»:

Հայր Ղեւոնդ Ալիշանը (1820-1901) գրում է. «Սքանչացած հիանում եմ մեր եկեղեցու եւ դպրութեան՝ Աստուծոց շնորհուած անկողողպուտ գանձ Ներսէս Լամբրոնացու, ինչպէս եւ նրա անուանատու Ներսէս Կլայեցու (Շնորհալու) վրայ ... Գրիգոր Լուսաւորչից եւ Սահակ Պարթեւից յետոյ Կլայեցին իբրեւ Կաթողիկոս հաւասարում է նրանց, իսկ Լամբրոնացուն՝ հաւասար կամ մերձաւոր (գոնէ Կիլիկեան հայոց թագաւորութեան շրջանում) ... ոչ ոք չի երեւում: Գուցէ եւ ամբողջ Հայաստանում ոչ ոք չէր կարող հաւասարուել նրան, որ 46 տարուայ կարճատեւ կեանքի ընթացքում ունենար այդքան պէս-պէս շնորհափայլութիւններ եւ արգասաւոր գործեր ... Քանզի ո՞վ փանքեմք տարեկանում ... եպիսկոպոս կարգուեց եւ յիշատակարաններում «Տիեզերական վարդապետ անուանուեց»:

Իր սրբակենցաղ վարժութեամբ, հանճարեղ էութեամբ եւ անհուն իմաստութեամբ անուանի եղաւ նաեւ օտարների մէջ, որոնցից ոմանք նրան համեմատեցին Կիկերոնի եւ Դիմոսթենէսի, շատերը՝ Քրիստոնէական եկեղեցու մեծ

հայրեր՝ Յովհան Ոսկեբերանի եւ Գրիգոր Աստուածաբանի հետ:

Լեւոն Բ. Մեծագործին (թագաւորել է 1198-1219թթ) գրած իր նամակից եւ այլ աղբիւրներից յայտնի է, որ լատին, յոյն եւ ասորի վարդապետները նրան անուանում էին «երկրորդ Պօղոս առաքեալ», «Պօղոս Բ. Տարսնացի»: Պօղոս Առաքեալը ծնունդով Տարսնացի էր եւ ժամանակին այնտեղ քրիստոնէութիւն է փարոզել:

Նա մանուկ հասակից արդէն լցուած էր երկնային շնորհներով եւ նման էր Աստծոյ հրեշտակի: Նրան տեսնողները զարմանում էին մանկան խելի, հիանում նրա առաքինութեան եւ իմաստութեան վրայ:

Փոքր ժամանակ, երբ նրան տանում են Կոստանդնուպոլիս (այժմ՝ Ստամբուլ), Բիւզանդիայի Մանուէլ կայսրը համոզում է մնալ իր մօտ, խոստանում մեծ պատիւներ եւ փառք: Երեխան կայսեր յորդորին պատասխանում է, որ եթէ այդ պատիւներն անցաւոր չը լինէին, ինքը կը լսէր կայսեր յորդորները եւ կ'ընդունէր: Բայց ինքը անանց պատիւների ու մեծութիւնների է ձգտում:

Այս պատասխանից կայսրն ու իր խորհրդականները ափիքերան զարմանում եւ հիանում են:

Ներսէս Լամբրոնացու հօրական պապերը Հայկ Նահապետից շառաւիղուած բնիկ Հայկազուններ էին, մօրական պապերը՝ Արշակունիներից եւ Ս. Գրիգոր Լուսաւորչից սերուած Պահլաւունիներ:

Հայրը՝ Լամբրոն անառիկ քերդի եւ շրջակայ գաւառների տէր Օշին Ա-ի թոռն էր: Օշին Ա-ն Կիլիկիա էր գաղթել Արցախի Գանձակ ֆաղափից:

Մայրը՝ Ս. Ներսէս Շնորհալու եղբոր

դուստր Շահանդուխտ Պահլաունին էր: Հինգ եղբայր էին, երեք բոլոր: Աւագանի անունը Սմբատ էր:

Դեռեւս չծնուած, ծնողները ուխտում են նրան ընծայել եկեղեցուն: Բայց երբ ծնում է, ծնողները տեսնում են նրա հրաշալի ու արտասովոր գեղեցկութիւնն ու փարթամութիւնը, դժուար են իրենց ուխտը: Ափսոսում են այդպիսի գեղեցկադէմ երեխային կտրել աշխարհի վայելչութիւններից: Մտածում են եկեղեցուն ընծայեն իրենց նոր ծնունդի մէկ այլ գաւակի: Մինչ նրանք տատանում էին, մանուկը մահացու հիւանդացաւ, եւ ոչ մի բժիշկ որեւէ բան չը կարողացաւ անել երեխային փրկելու համար: Այս տեսնելով՝ մայրը մանկանը խանձարուրով վերցրեց տարաւ Լամբրոնի բերդի Սկեւոյի վանքը: Երեխային նոր ուխտով ընծայեցին Ս. Աստուածածին եկեղեցուն, որը շինել էր երեխայի հայրը՝ Օշին Բ-ն: Եւ մինչ ֆահանս մանկան վրայ օրհնութիւն էր կարդում, երեխան սկսեց լաւանալ:

Սմբատի առաջին դաստիարակը մայրն էր, որին ժամանակակիցներն անուանում էին «ֆաջահաւատ», «երկիւղազարդ», «ամենաբարի», «կին ժրգլուխ եւ պսակ առն իւրոյ»:

Լամբրոնացու կենսագիրներինց Սամուէլ Սկեւոյցին նշում է, որ Սմբատը մօրը ջանքերով փոքր հասակից արդէն վարժուել էր «հելլենական դպրութեանը»:

Սմբատ մանուկը մի առ ժամանակ ուսանեց Սկեւոյի վանքում: Իր հոգեւոր դաստիարակն էր առաքինի եւ ճգնակեաց Յովհաննէս վարդապետը:

Ունենալով ուշիմ եւ խորագին միտք, քննադատ արտասովոր աշխատասիրութիւն՝ այստեղ, հետագային՝ նաեւ Հռոմկլայի բարձրագոյն դպրոցում, ստացաւ հիմնաւոր կրթութիւն: Նա լատին իմաստասէրներին ապշեցնելու չափ հմուտ էր լատիններէն ու յատկապէս յունարէն լեզուին, գիտէր

եբրայերէն, ասորերէն, դպտերէն (հին եգիպտերէն): Տասնվեց տարեկանում կորցրեց հօրը: Մահուան մահնում հայրը պատուիրել էր որդուն դարձնել Սկեւոյի վանքի վանահայր: Երբ երանելին այդ մասին տեղեկացաւ, ուզեց խոյս տալ վանահօր պաշտօնից, քանի որ մտադիր էր առանց եկեղեցական աստիճան ստանալու անմիջապէս ճգնաւոր դառնալ որեւէ անապատում: (Անքնակ վայրում հաստատուած վանք-մենաստան կամ կացարան, ուր ապրում էին ճգնաւորները առանձին-առանձին կամ խմբերով):

Նրա բարեպաշտ մայր Շահանդուխտ իշխանուհին, որ այդ օրերին պատրաստում էր ուխտ երթալ Երուսաղէմ, մտածեց մի կերպ խափանել որդու մտադրութիւնը: Նա որդուն տարաւ Ս. Ներսէս Շնորհալու մօտ, Հռոմկլայի վանք, որը այդ ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսների նստավայրն էր:

Ս. Ներսէս Շնորհալին, տեսնելով պատանու աստուածային շնորհները, խելքն ու գիտելիքները, նրան ձեռնադրեց ֆահանայ եւ անուանակոչեց Ներսէս:

Մայրը մեկնեց Երուսաղէմ, որդին մնաց կաթողիկոսարանում, սովորեց Հռոմկլայի համալսարանում, արեւցաւ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի աստուածահրաշ վարդապետութեան վտակներից, լրացրեց ուսման թերին, է՛լ աւելի բարգաւաճեց ու պարարտացաւ հոգով:

Պատանին սուրբ հայրապետին յայտնեց ճգնաւոր դառնալու իր փափագը: Ս. Ներսէս Շնորհալին նրան ուղարկեց Սեւեռան վանքը, որտեղ ուսանեց Տիրացու մականուանեալ Ստեփանոս վարդապետ գիտնականին:

Իր վանական եղբայրները, տեսնելով երանելու մտքի պայծառութիւնը, հոգու վիթխարի ուժը, սուրբ վարքը, նրան յորդորեցին վերադառնալ Լամբրոն, զբաղուել ֆարոգչութեամբ՝ «ի պէտս

բազմաց»: 18-ամեայ Ներսէսը անսաց վանական եղբայրների հրամանին, եկաւ Լամբրոն եւ սկսեց ֆարոգել Աստուծոյ խօսքը: Քարոզչութեան մէջ եւս եղաւ երեսելի ու անձկալի: Նրա համբաւը շուտով հռչակուեց ամենուր:

Պատիւներից, պաշտօնից ու մեծարանքից փախչող Ներսէսին վանականներն ու աշխարհականները ամեն կողմից թախանձում էին ձեռնադրուել Լամբրոնի եպիսկոպոս, դառնալ Սկեւոյի վանքի վանահայր, ինչպէս պատուիրել էր լուսահոգի հայրը: Սակայն Ներսէսը նրանց ձեռքից խոյս տուեց-գնաց իր հոգեւոր հայր Յովհաննէս վարդապետի մօտ՝ Տորոսի լեռներում, ժեռակրա գետի հոսանքի մօտ գտնուող Սաղրուի Ս. Աստուածածին անապատը, ուր կար նաեւ Ս. Գեորգ անունով մի մատուռ:

Այստեղ, առանձնանալով իր փոքրիկ խցում, «տիւ ու գիշեր անձանձիր պարապում էր արտասուարուղիս մշտամբնունչ աղօթքներով, տփնութիւններով ու պահեցողութեամբ» (Միքայէլ Զամչեանց), Սուրբ Գրոց եւ Եկեղեցու հայրերի գործերի ընթերցանութեամբ, թարգմանութիւններով, ինքնուրոյն շարադրութիւններով:

Իսկ Կիրակիից-կիրակի գալիս էր եկեղեցի՝ Ս. Պատարագ մատուցելու:

Ժամանակակիցները միաբերան վկայում են, որ աղօթելիս նրա աչքերից արցունքի առուակներ էին հոսում:

Բազմաթիւ անգամներ իր սպասաւորները, ուտելիք բերելիս, տեսնում էին նրան աղօթելիս, իսկ նախորդ օրերին բերած ուտեստները դեռ հանգչում էին պատուհանին:

Երանելին Սաղրուի անապատում բազում հրաշք բժշկումներ կատարեց, շատերից հալածեց չար ոգիներ:

Ս. Ներսէս Շնորհալու վախճանից յետոյ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեց Շնորհալու եղբօր որդի Գրիգոր

Դ. Տղան, որը Լամբրոնացու մօր եղբօրորդին էր: Նորընտիր հայրապետը քաջ գիտէր երանելու իմաստութեան, երկայնամտութեան եւ հոգեշահ ֆարոգչութեան մասին: Ուստի «հրամայական նամակով» 23 ամեայ Ներսէսին կանչեց Հռոմկլայ եւ ձեռնադրեց Տարսնի, Լամբրոնի եւ շրջակայ գաւառների արքեպիսկոպոս: Սկեւոյի վանականների միակամ պահանջով կաթողիկոսը Ներսէս Լամբրոնացուն ստիպեց ստանձնել նաեւ Սկեւոյի վանքի առաջնորդութիւնը: Սրբազան հայրը ստիպուած էր նստել թէ՛ Լամբրոն, թէ՛ Տարսն եւ Սկեւոյի վանքում:

Իր վիճակի ժողովուրդը նրան էր նայում որպէս մի հրեշտակի, քանի որ հօտը հովում էր ամենայն զգաստութեամբ, բոլորին նայում էր հաւասար աչքով, անսահման արդարամիտ էր, քաղցրախոհ, ամենքին հասնող, սխալների հանդէպ՝ խիստ ու անգիշում: Ինչպէս Գրիգոր Սկեւոցին է գրում, նա «ախտաւոր խօսքերի համար կիզանող հուր էր, չարի համար՝ արմատից հատող սուր»:

Մօտ մէկ տարի անց, տեսնելով, որ իր պաշտօնը թոյլ չի տալիս պարապել աղօթքներով, ընթերցանութեամբ ու գիտութեամբ, դարձեալ թողեց պաշտօնը գնաց Սաղրուի անապատ՝ իր սիրելի ու անձկալի ուսուցիչ Յովհաննէս վարդապետի մօտ: Այստեղ, 24 տարեկանում, իր նգնաւոր եղբայրների խնդրանքով սկսեց «Մեկնութիւն Սաղմոսաց» հոգեշահ աշխատութիւնը, որն աւարտեց 1181թ.: Այստեղ գրեց նաեւ հայ մատենագիտութեան զարդերից մէկը՝ «Մեկնութիւն Պատարագին» անգուգադիր երկը: «Մեկնութիւն Պատարագին» կորել եւ հրաշքով գտնուել է: Երբ 1187թ. «անօրէնները» Երուսաղէմը դարձեալ առան, Հռոմի պապի յորդորով Երուսաղէմ սկսեց խաչակրաց երրորդ արշաւանքը: Այն գլխաւորում էր հռոմէական

կայսրութեան ծերունագարդ կայսր Ֆրեդերիկ Շիկամօրուսը: Նրուսաղէմ արշաւի ճամբին Շիկամօրուսն անցնում է Հայկական Կիլիկիայով: Հոռմի պապը նախօրօք Լեւոն Բ-ին եւ հայոց կաթողիկոսին նամակով խնդրել էր աջակցել կայսրին՝ խոստանալով արքայական թագ ուղարկել Լեւոնին: Լեւոն Բ-ին թագ էր բերում նաեւ կայսրը: Լեւոն Բ-ի յանձնարարութեամբ Ներսէս Լամբրոնացին գնում է Շիկամօրուսին դիմաւորելու: Սակայն ծերունի կայսրը գետում խեղդում է: Հանապարհին, Մարաշ քաղաքից այն կողմ, մահմեդականները յարձակում են, սպանում սրբազան հօր ուղեկիցներից մօտ 20 հոգու, յափշտակում են «Մեկնութիւն Պատարագի» միակ ձեռագիրը: Մի քանի տարի անց պատահաբար յայտնի է դառնում ձեռագրի տեղը եւ երանելին 1192թ. մեծ գումարով փրկագնում է ձեռագիրը:

Այն մեր պատարագի հանրագիտարանն է: Աշխատութիւնը վերականգնում է Ս. Պատարագի սկզբնական պատկերը, սրբում հետագայ աղաւաղումներից եւ օտարամուտ տարրերից, մեկնում քաղմաթիւ ծէսեր, խորհուրդներ, աղօթքներ եւ այլն: Պատարագի մեկնութեան մէջ առաջարկում է 18 քարեփոխումներ, որոնք հիմնականում հին հայոց օրէնքների ու կարգերի վերականգնման առաջարկութիւններ էին: Օրինակ՝ նշում է, որ պէտք է խափանել կաշառքով ու իշխողների միջամտութեամբ եկեղեցական աթոռների տիրանալը, խափանել անչափահասներին եւ անուսներին եկեղեցական աստիճան շնորհելը, Պատարագի խորհուրդը կատարել միայն եկեղեցու մէջ, սաղմոսերգութիւնները պէտք է կատարուեն յստակ արտասանութեամբ եւ մեղմաձայն երգեցողութեամբ, պէտք է վերացնել կաթողիկոսների եւ եպիսկոպոսների աթոռների ժառանգաբար

յաջորդութիւնը եւ նրանց պաշտօնի կոչել ընտրութիւններով:

Սկեռայի վանքի միաբանները, իր արիւնակիցները եւ ընդհանրապէս Լամբրոնի ու Տարսուսի հաւատացեալ ժողովուրդը այնքան էին կարօտել Ներսէս Լամբրոնացուն ու իր քարոզներին, որ կաթողիկոսին աղերսեցին նրան ետ կանչել: Գրիգոր Գ. Տղայ հայրապետը յատուկ հրամանագրով Ներսէս Լամբրոնացուն ետ բերեց իր վիճակը:

Հանազան ախտերի բուժումների եւ, մանաւանդ, իր սուրբ վարքի ու իմաստութեան համբաւն էլ աւելի հռչակուեց: Նա, այդ համբաւից ու պատիւներից խոյս տալով, ձգտում էր դարձեալ առանձնանալ մենաստանում: Ուստի փոքր անց նորից հանապարհ ընկաւ, այս անգամ՝ Եգիպտոսի ճգնաւորների անապատը:

Իր քաղաքային եւ եպիսկոպոսութեան օրերին մի քանի անյաջող փորձ արեց ռտարորիկ ուխտի գնալ նաեւ Սեպուի լեռ, ուր ճգնել էր հայոց սրբերի գլուխ, երիցս երանելի Գրիգոր Լուսաւորիչը: Բայց ամէն անգամ, հանապարհի կէսին չը հասած, նրա ետեւից ուղարկուած ժողովրդի ընտրեալները ետ էին բերում: Մէկ ուրիշ անգամ, աշխարհականների ձեռքից ազատուելով, ճգնաց Կիպրոս կղզի՝ յոյն ճգնաւորների մօտ: Կիպրոսում առաւել եւս հմտացաւ յունալեզու մատենագրութեան մէջ:

Աշխարհիկ փառքից, պատիւներից ու պաշտօններից խուսափելու եւս մի քանի փորձերից յետոյ, երբ տեսաւ, որ իրեն չեն թողնում զբաղուել իր սիրած գործով, ստիպուած համակերպուեց եւ ամբողջովին նուիրուեց եկեղեցական, քաղաքական եւ մշակութային գործերին:

Նա ծառայում էր թէ՛ իր վիճակում, թէ՛ վեհարանում, թէ՛ մասամբ նաեւ Լեւոն

Բ-ի պալատում: Գլխաւորում էր եկեղեցական ու պետական պատուիրակութիւններ, մասնակցում դիւանագիտական հանդիպումների, եկեղեցական միջազգային ժողովների, վարում էր իր վիճակի գործերը:

Օտարների մէջ հռչակուեց յատկապէս քրիստոնէական եկեղեցիները միասնական տեսնելու եւ հայադաւանութեան սկզբունքները պաշտպանող ատենաքանուութիւններով: Դրանցով մնաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու ծիսակարգը եւ դաւանութիւնն անխոտոր պահող նշանաւոր հայրերից մէկը: Իր այդ գործունէութիւնից պատմութիւնը մեզ է հասցրել մի քանի դրուագ, որոնցից առաւել յայտնին իր այցելութիւնն է Կոստանդնուպոլիս: Նա Բիւզանդիայի մայրաքաղաք էր մեկնել՝ մասնակցելու դաւանական խնդիրների քննարկմանը: Ժողովը նախագահում էին Բիւզանդիայի կայսրը եւ յունաց Տիեզերական Պատրիարքը:

Իր իմաստութեան ու առաքինութեան համբաւը վաղուց էր հասել Բիւզանդիա, ուստի թէ՛ կայսրից, թէ՛ պատրիարքից մեծ պատիւներ ու մեծարանքներ ընդունեց:

Ատենաւում հայադաւանութիւնը պաշտպանելիս երանելին «բազում օրեր» վիճեց յոյն հոռոտոր-վարդապետների հետ՝ «թէ՛ առանձին-առանձին եւ թէ՛ բոլորի հետ խոկալով» (Գր. Սկեւոացի): Այդ վիճարանութիւններում նա յաղթեց բոլորին: Կենսագիրն այսպէս է պատկերում վիճակը. «Մէկ մարդ գերազանցեց ամենին»:

Ատենաքանութիւններից հռչակաւորը Հռովմայի 1179թ. ժողովում խօսածն է՝ հայ հրապարակաստութեան անմրցելի կոթողը: Այն թարգմանուել է յունարէն, լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն, գերմաներէն եւ այլ լեզուներով:

«Ատենաքանութեան» աշխարհաբար առաջին թարգմանիչ Ատեփաննոս

Նազարեանցը գրում է. «Հարկաւոր է ասել, որ այդ հրապարակաստութիւնը ... պատկանում է առաւել հռչակաւոր ատենաքանական նառերին, որ երբեքիցէ ասած են աշխարհի վերայ» (Հիւսիսափայլ, 1859թ. էջ 83):

«Ատենաքանութիւնը» համաշխարհային նմանատիպ գրականութեան գոհարներից են համարել թէ՛ հայ, թէ՛ օտար բազմաթիւ մասնագէտներ՝ ինչպէս հեղինակի կենդանութեան օրօք, այնպէս էլ հետագայում:

Հայ մատենագրութեան կարեւոր արժէքներից են նրա ներքողները, նառերը, խրատականները, հայ եւ օտար պետական ու կրօնական այրերին յղած թղթերը (նամակ), որոնցից յայտնի են անտիոքի Ոսկան մենակեացին ու յատկապէս Լեւոն Մեծագործին գրածները: Այդ թղթում նա հերքում է Հաղբատի եպիսկոպոս Տուտեորդու եւ այլոց անհիմն մեղադրանքները, թէ իբր ինքը հեռանում է ազգային աւանդներից:

Ոսկան Մենակեացին ուղղած թղթում հիմնաւոր ապացոյցներով յոյների յարձակումներից պաշտպանում է Հայ եկեղեցու ծէսերը, ցուցանում է յոյների միտումնաւորութիւնն այդ խնդրում, հերքում Ս. Սահակ հայրապետի տեսիլքը աղաւաղելու նրանց փորձերը:

Սրբազան հայրը յօրինել է 20ից աւելի շարականների խօսքերը եւ եղանակները, քաղցր ձայնով երգել դրանք: Յայտնի են Ջատիկի, Համբարձման, Նոր Կիւրակիի, «Այսօր Յարեալ», «Նորոգեալ կղզիք», Ս. Գրիգոր Լուսաւորիչի թողնելին ձօնած «Որ զլոյս» կտորները: Դրանք ընդունուած են մեր եկեղեցու ժամերգութեան մէջ եւ մուծուած են Շարակնոց:

Ճառերից յայտնի են «Տէրունական տօների խորհուրդի», «Համբարձման եւ Հոգեգալստեան» սրտայոյզ էջերը, մեկնու-

թիւններից՝ արդէն յիշատակուած «Սաղմոսաց մեկնութիւնը», Ս. Գրիգոր Նարեկացու աղօթքների եւ Սողոմոնի Առակների մեկնութիւնները:

Ունի նաեւ տաղեր «Ի սիրելին իւր Յովհ. Աւետարանիչ փափուկ իմաստիւք», «Ի սուրբն Գեորգի», «Ի թաղումն Տեառն ազնիւ եւ խորագգեայ», «Մեղեդի ի սուրբն Աստուածածին», «Քերովքէից գերագունից» եւ այլն: Գրել է Ս. Գրիգոր Նարեկացու վարքը, Ս. Ներսէս Շնորհալուն նուիրուած յայտնի «Գովեստ Ներբողականը»:

Եղաւ հայ թարգմանական գրականութիւնը նոխացնող երեսելի հայրերից: Յունարէնից, լատիներէն ու այլ լեզուներից թարգմանեց բազում մեկնութիւններ, ճառեր, նահատակաց վկայաբանութիւններ, սուրբ ճգնաւորաց վարքեր, խրատներ, մարդակազմութեան մասին գրքեր:

Միֆայել Զամչեանը եւ ուրիշներ ճշում են, որ իրենից առաջ կատարած թարգմանութիւններն ի մի բերելով եւ պակասը լրացնելով՝ կազմեց նաեւ հոգեշահ ՀԱՐԱՆՑ ՎԱՐԲ (Ս. Հայրերի վարքը) մատենանը: Իր մասին տպագիր առաջին մենագրութեան հեղինակ Ներսէս Ակինեանը ճշում է, որ Լամբրոնացին ասորիների եւ յոյների հետեւութեամբ Ս. Գրքի բոլոր գրքերը հաւաքեց-ամփոփեց մէկ մատենանում՝ հայոց մէջ առաջին անգամ կազմելով Աստուածաշունչ միացեալ մատենանը:

Յունարէնից, լատիներէնից եւ այլ լեզուներից թարգմանել է Բիւզանդիայի կայսրեր Լեւոնի, Կոստանդինի եւ այլոց փառափառ օրէնքները, օտար ճգնաւորական ուխտերի կանոնագրութիւններ, որոնցից Կիրակոս Գանձակեցին յիշատակում է «Բենեդիկտոսի օրէնսդրութիւնը»: Լեւոն Մեծագործի թագադրութիւնը պատշաճ անցկացնելու

համար թարգմանեց յոյն եւ լատին թագաւորների ու կայսրերի թագադրութեան եւ օրհնութեան ծէսերը: Թարգմանութիւնների մէջ յիշում են նաեւ զինուորական օրէնքներ, որոնցում մարզում էին հայ մարտիկները: Այդ օրէնքներն իր կողմից լրացնելուց-տեղայնացնելուց յետոյ Կիլիկեան Հայաստանին ծառայեցին մինչեւ Միխայիլ Գօշի եւ Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքերի» տարածումը: Ս. Ներսէս Կլայեցու հետեւութեամբ եւ օրինակով նա կարգաւորեց նաեւ մեր եկեղեցական ծէսերը, որոնք խաթարուել էին Բագրատունեաց թագաւորութեան քարճումից յետոյ եկած հարիւրամեայ անիշխանութեան հետեւանով:

Այդ ամենով Լամբրոնացին դարձաւ մեր իրաւունքի պատմութիւնը կերտող խոշոր գործիչներից մէկը:

Երանելին նաեւ բարերար էր, մշակոյթի ու գիտութեան հովանաւոր: Նա հովանաւորում էր գրիչներին, նւիրապէս օժանդակում ձեռագիր ընդօրինակողներին, անձամբ օրինակում հին ձեռագրեր, պատուիրում նորերը: Օրինակ՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»՝ մեզ հասած հնագոյն (1173) եւ լաւագոյն ընդօրինակութիւնը Ներսէս Լամբրոնացու պատուէրով արտագրել է իր աշակերտ Գրիգոր Սկեւոացին (պահում է Երեսանի Մատենադարանում):

Հսկայական ծախսերի կարօտ այս մշակութային-բարեգործական ձեռնարկները նա ծաւալում էր հիմնականում իր անձնական միջոցներից: Այսպէս, հօրից իրեն ժառանգութիւն հասած երեսուն հազար ոսկու երկու երրորդը նա ծախսեց իր թեմի եկեղեցիների սպասքները նոխացնելու, գրքեր գնելու եւ ընդօրինակել տալու վրայ, հիմնեց Սկեւոայի մատենադարանը, կառուցեց եկեղեցի, նորոգեց հները: Այդ մասին տեղեկանում ենք Կիրակոս Գանձակեցի պատմիչից, որը

գրում է, «Սկեւոայի վանքում, անառիկ Լամբրոն բերդի մօտ, կառուցեց նաեւ մի հրաշագեղ եկեղեցի, վանքի պաշտամունքային արարողութիւնը կարգաւորեց այլագեղների օրինակով՝ սարկաւագով, դպիրով եւ անծածկոյթ գլխով (գլխաբաց), ինչը հայերից շատերը պարսաւում էին»:

Հօրից ժառանգած երեսուն հազար ռուկով մէկ երրորդը (տասը հազար) նա ծախսեց աղփատների վրայ: Լեւոն Բ-ին գրած թղթից յայտնի է, որ իր տնօրինութեամբ ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ Տարսոնի եկեղեցու դռանը երկու-երեք, նոյնիսկ չորս հարիւր աղփատի ճրի հաց ու բակլայ էր բաշխում:

Սուրբը ամենայն բծախնդրութեամբ պեղում-վերականգնում էր մեր եկեղեցու աւանդական ծէսերն ու կարգերը, կատարում բարեփոխումներ, ջատագովում քրիստոնէական եկեղեցու միասնութիւնը, գործնական ֆայլեր անում այդ համրով:

Այս ամենի համար նրա դէմ դուրս եկան ժամանակի անգէտ, նախանձոտ ու անբնական մարդիկ: Իր դէմ ուղղուած ամբաստանութիւնները համբերատար չսկսեց յետոյ Լեւոն Մեծագործին յղած վերոյիշեալ նամակով հերքեց իր դէմ եղած ամբաստանները եւ «է՛լ աւելի սիրելի եղաւ ամենին»:

Իր մայրը՝ Շահանդուխտ տիկինը, որ զարդարուած էր «ամենայն առաքինութեամբ», իր երկու այրիացած դուստրերի հետ (Շուշան, Տալիթա) մտաւ կուսանոց: Մօր եւ քոյրերի կուսանոց մտնելն օրհնեց Ներսէս Լամբրոնացին եւ ստանձնեց նրանց հոգեւոր հայրութիւնը: Որոշ ժամանակ անց մօրը եւ քոյրերին միացաւ երրորդ քոյրը՝ Մարիամը: Նրանք չորսով էլ իրենց ճգնակեաց կեանքով եղան երեսելի:

Այդ ժամանակ իր Հեթում եղբայրը, որը Լամբրոնի տէրն էր, Սկեւոայի ուխտում շինեց մի եկեղեցի: Նոր կիւրակէի տօնին

եղաւ եկեղեցու նաւակաւորներ (նորաշէն եկեղեցու օծման արարողութիւն): Նաւակաւորին պատարագ մատուցեց Ներսէս Լամբրոնացին եւ, ինչպէս ենթադրում է Միքայէլ Չամչեանը, այդ նոյն օրն էլ երգեց իր յօրինած սփանջելի շարականը՝ «Նորոգեալ կղզիք»:

Կեանքի վերջում մասնակցեց Լեւոն Բ-ի շքեղ թագադրութեանը, որը եղաւ Տարսոնի տաճարում 1198թ. Յունուարի 6ին:

Կենսագիրներն այսպէս են պատմում երանելու վախճանը. —

«Պատարագ մատուցելիս բոնուեց ինչ որ ցաւերից, հիւանդացաւ: Իմանալով, որ մերձեցել է իր երկրային կեանքի վերջը՝ սկսեց ցնծալ իր հոգին, փանգի անձկութեամբ ցանկանում էր դուրս գալ իր մարմնից, մտնել Աստուծոյ մօտ: Ապա իր փոքր կանչեց աշակերտներին, խրատեց նրանց, օրհնեց, աչքերը յառեց երկինք եւ ասաց իր վերջին խօսքերը. «Քո ձեռքն եմ աւանդում հոգիս, Յիսուս, ընդունիր Քո Ներսէսի հոգին»: Այս ասելով՝ հոգին աւանդեց 1198թ. Յուլիսի 14ին, 45 տարեկանում: Նրա պատուական մարմինը թաղեցին Սկեւոայի վանքի Ս. Փրկիչ եկեղեցու մեծաշէն դամբարանում՝ Լամբրոն զոհակի մօտ: Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով որոշուեց ամէն տարի Յուլիսի 14ին (Յասմաւուրքում՝ Յուլիսի 17ին) նշել նրա յիշատակը:

Հայ երեսելի գրող եւ մեր նոր գրականագիտութեան խոշորագոյն դէմք Յակոբ Օշականն այսպէս է բնորոշել Ներսէս Լամբրոնացուն.

«Խստակրօն՝ մոլեռանդ ըլլալու չափ. Լայնամիտ չը հասկցուելու չափ.

Կրփոտ՝ իր հակառակորդները նախատել զիջանելու չափ.

Ազդեցիկ՝ արքունիքներ տապալելու չափ:

... Եղաւ ազատագրուած իմացակա-

նութիւն, բոլորանուէր հասկացութիւն եւ սիրտ, գիտցաւ անցաւորէն ինքզինքը վերացնել եւ ըլլալ մէկը այն փչ մարդերէն, որոնք կրկէս կը նետուին՝ աշխարհներ նուաճելու առաջադրութեամբ, կը պայքարին իրենց պայքարը աննահանջ, կը սեւեռեն իրենց ժամանակի խոր կնիքը իրենց յիշատակի վրայ, կը ստեղծեն հիացում եւ հակառակութիւն՝ հաւասար ուժգնութեամբ, եւ կը գոցեն աչքերնին իրենց անաւարտ երազին վրայ՝ մեզի ձգելով երբեմն քզկտուած, երբեմն պատմութեամբ իրենց համբաւը»:

Երանելու այս փոքրիկ կենսագրականը պատշաճ է աւարտել նրա մէկ այլ աշակերտի՝ Խաչատուր վանականի հիւսած «Ողբի» հետեւեալ խօսքերով, որ նա գրել է իր տիեզերալոյս վարդապետի մահուան առթիւ.

«Իմ տէրն արքուն էր ամէն տեղի,
Կիրք էր ու վարժ ամէն իմաստի,
Կեցօքն (կեանքով) սուրբ էր՝ ոչ
փոպիտի (կոպիտ),
Սրտովն՝ ողորմ՝ նման Պօղոսի,
Աղբատասէր՝ նման Յիսուսի ...»

ՌԱՖԱԵԷԼ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Աղբիւրներ

1. Գրիգոր Սկեւոացի, «Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, Սոփերգ Հայկական, հտ. ԺԵ, Վենետիկ, 1854թ.
2. Միքայէլ Զամչեան, Պատմութիւն Հայոց, հտ. Գ. էջ 88-95
3. Ստ. Նազարեանց, Ներսէս Լամբրոնացի (համառօտ կենսագրական եւ Ատենաբանութեան աշխարհաբար քարգմանութիւնը), Հիսսիսափայլ, 1859թ. էջ 81-134
4. Ղեւոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885թ. էջ 86-96
5. Մաղափա Օրմանեան, Ազգապատում հատոր Ա.

6. Յ. Օշական, Ներսէս Լամբրոնացի, ՍԻՌՆ ամսագիր, Երուսաղէմ, 1954 թիւ 1-8, 10
7. Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956թ.
8. Գ. Յակոբեան, Ներսէս Լամբրոնացի, Երեւան 1971թ.
9. Սմբ. Սատեթեան եպիսկոպոս, Ներսէս Լամբրոնացի, Անթիլիաս, 1981թ.

ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Առաքելական թուղթերեն մի քանի օրինակներ փառենք յորս, անուանց այլայլութեամբ հանդերձ, եպիսկոպոսական աստիճանը պարզ յայտնի է:-

1.- Պօղոս առ Փիլիպեցիս գրած թղթոյն մէջ, զկնի «սրբոց, եպիսկոպոսակցաց եւ սարկաւագաց» ողջոյն տալու, յետոյ առանձին կերպով կը խօսի թղթին մէջ անունը չը յիշուած մարդու մը հետ, որում անպատեհառ այդ թուղթը յանձնուած էր եւ որ պաշտօն ունէր զայն իւր ժողովրդեան կարդալու կամ որ եւ է վերապի հաղորդելու: «Այո՛ աղաչեմ եւ զքեզ, կ'ըսէ Պօղոս, մտերիմ իմ եւ լծակից, եւ դու օգնական լինիչիւր նոցա, եւ այլն»:- Երբմէ կ'երեւի որ երբ բազմաթիւ երիցանց եւ սարկաւագաց մէջ մէկը իբրեւ «լծակից» Պօղոսի կը կոչուի որ ունի պաշտօն ճշդեան վերակացութեան Փիլիպեցոց ճկեղեցւոյ վերայ եւ առաքելական թղթոյն պատնէնն անոնց հաղորդելու, չենք գիտեր թէ ուրիշ ի՞նչ աստիճանի կրնայ լինել այս ակնարկութեան քայց եթէ եպիսկոպոսութեան:

2.- Ասկէ աւելի կարեւոր է Տիմոթէոսի օրինակն, որ եպիսկոպոսական իշխանութեանց եւ շնորհաց ինքնիշխան եւ կատարեալ տէր կը թուի լինել: Տիմոթէոսին յանձնուած էր Նփեսոսի եկեղեցւոյ հովութեան պաշտօնն, եւ իրեն գրած թղթոյն մէջ Պօղոս կը խրատէ զնա իւր պաշտօնն եկեղեցւոյ ամէն կարգի պաշտօնէից վերայ խղճի մտօք եւ արդարութեամբ վարել, նոյնպէս ալ ժողովրդեան վերայ լաւ հսկել. եկեղեցական պաշտամանց պատշաճ եւ վայելուչ արարողութեանց համար հոգալ, կանանց

թոյլ չտալ հրապարակային ֆարձութեան: Նորա պաշտօնն է նաեւ հսկել իրենց ստորադասեալ վարդապետաց ֆարձութեան վերայ, եւ 'ի հարկին արժանահաւատ մարդիկ կացուցանել 'ի վարդապետութիւն. եպիսկոպոսուն (այսինքն երիցուն կամ ֆահանայս) եւ սարկաւագունն ձեռնադրել. սակայն, կը պատուիրէ Առաքելին, «Զեռս վաղվաղակի յուրօք վերայ մի դնիցես»: Նոյնպէս կը պատուիրէ հոգեւորականաց ապրուստի համար միջոցներ հնարել, եւ եկեղեցական դատաւորութեան պաշտօն կատարել՝ ոչ թէ միայն աշխարհականաց վերայ, այլ նաեւ հոգեւորականաց, եւ 'ի հարկին զանոնք յանդիմանել ու պատժել: Այս ամէնը ցոյց կու տայ որ Տիմոթէոսի ունեցած իշխանութիւնը եպիսկոպոսական կատարեալ եւ լիազօր իրաւասութիւնն էր ինչպէս որ Առաքելին ինքն կամ ներկայ ժամանակի եպիսկոպոս մը կարող է ունենալ: Եկեղեցւոյ աւանդութիւնն եւս կը հաստատէ այս կարծիքն, եւ 'ի հնուց հետէ Տիմոթէոս իբրեւ առաջին եպիսկոպոս Նփեսոս ֆաղափի ճանչցուած է: Արդարեւ Յովհաննէս Առաքելոյն անունն եւս կը յիշուի իբրեւ Նփեսոսի հետ կապուած, քայց այդ միայն ասել կ'ուզէ թէ Յովհաննէս իւր ծերութեան ժամանակ այդ ֆաղափը զնաց իւր կենաց վերջին օրերը անդ անցուց առանց որ եւ է եպիսկոպոսական իրաւասութիւն գործածելու:

3.- Միեւնոյն տեսակ խրատներ եւ խորհուրդներ կու տայ Տիմոսին, զոր Պօղոս թղթեր էր 'ի կրեւտ «զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեացես, եւ կացուցես ըստ ֆաղափաց երիցունս,

որպէս եւ ես ինչ պատուիրեցի»- եւ տարակոյս չկայ որ Տիտոս եպիսկոպոսութեան աստիճան ունէր եւ նոր ու անփորձ լինելուն համար Առաքելոց խնամակալութեան տակ կը վարէր իւր բարձր պաշտօնը, որ էր՝ Կրետէի եպիսկոպոսութիւն:

4.- Յովհաննու երրորդ կաթողիկոսայրոյն մէջ Դիոտրեփէս ուն կը յիշուի այնպիսի պարագայիւ որ միայն եպիսկոպոսական աստիճանի կը յարմարին: Եկեղեցւոյ այս «յառաջադէմ» առաքելական իշխանութիւնը խոտելով՝ օտար տեղերէ եկող հաւատացեալները չ'ընդունիր 'ի հաղորդութիւն եկեղեցւոյ թելէտեւ արժանահաւատ յանձնարարական ունենան իրենց եկեղեցւոյ, եպիսկոպոսէն կամ հոգեւոր հովուէն, այլ գնոսա եւս կը մերժէ որ այդպիսիներ կ'ընդունին:

5.- Ծատ պարզ կերպիւ եպիսկոպոսական աստիճանը կը նկարագրուի Յովհաննու Յայտնութեան մէջ, երբ Աստուծոյ պատգամը կ'աւանդուի առ եօթն եկեղեցիս Փոքր Ասիոյ եւ անոնց վերակացու եպիսկոպոսներն «հրեշտակ» անուանելով՝ զանազան ազդարարութիւններ ու խրատներ կու տայ:

Նախընթաց քննութենէն 'ի մասին զարգացման նուիրապետութեան յԱռաքելական դարու հետեւեալ կէտերը հաստատեցին:-

Նախ, զկնի Համբարձման՝ ըստ խոստման Փրկչին՝ Հոգին Սուրբ իջաւ Երկոտասանից վերայ եւ անոնց 'ի Քրիստոսէ ընկալեալ իրաւունքներն ու իշխանութիւններն հաստատելով՝ օծեց գնոսա յԱռաքելութիւն Աւետարանին. եւ այս օծումն մի այնպիսի հրաշալի ազդեցութիւն գործեց Առաքելոց վերայ, որ նոքա գրեթէ բոլորովին փոխուեցան, եւ յետ այնու անակնկալ վստահութեամբ եւ քաջասրտութեամբ իրենց պաշտօնին հետեւեցան:

Երկրորդ, Երկոտասանից թիւը յաւելցաւ Պօղոսի արտաքին կարգի կոչմամբ, որ ըստ ամենայնի միեւնոյն առաքելական իրաւաց արժանացաւ որպէս Երկոտասանին, եւ նորա ասածներն ու գործերն ոչինչ նուազ առաքելական ու ներշնչեալ են քան թէ մնացեալներունը:

Երրորդ, Երեւտասանք ունէին մեր ներկայ եկեղեցւոյ նուիրապետութեան բոլոր աստիճանաց շնորհներն. եւ քաց աստիճանի Առաքելութեան աստիճան, որով նոքա եւ միայն նոքա պաշտօն ունէին եկեղեցւոյ հիմունքն դնել եւ զառաջինն եպիսկոպոսունս ձեռնադրել:

Չորրորդ, այս պաշտօնի համեմատ Առաքելքն անդադար շրջեցան ընդ ամենայն աշխարհ՝ եկեղեցիս հաստատելով եւ եպիսկոպոսունս ձեռնադրելով, հետեւաբար չչատացան միայն մէկ քաղաքի եկեղեցւոյ վերատեսչութեամբ որպէս 'ի նոցանէ կարգեալ եպիսկոպոսունք, եւ հետեւաբար՝ Յակովբոսէն զատ, ոչ մի Առաքել կրնայ մէկ յատուկ քաղաքի եպիսկոպոս կամ առաջին գահակալ համարուիլ:

Հինգերորդ, ըստ այսմ՝ բառի բուն նշանակութեամբ, Յակովբոսէն զատ ոչ մի Առաքել եպիսկոպոս էր, եւ Երուսաղէմէն զատ՝ ոչ մի աթոռ Առաքելական է, միւս աթոռք յԱռաքելոց հաստատեալ են եւ միայն այս միտքով առաքելական կրնան կոչուիլ:

Վեցերորդ, 'ի Նոր Կտակարանի՝ եպիսկոպոսական աստիճանի յորջորջմանց մէջ խառնաշփոթութիւն կայ, քայց եպիսկոպոսութեան էութեան վերայ ամենեւին տարակոյս չկայ թէ նոյն էր 'ի ժամանակի Առաքելոց, որպէս եւ այժմ նորաբողոք տունկը կար առանց որոշ անուան. քահանայութեան աստիճանի անուններն եւս նոյնքան անորոշ են, եւ իւրաքանչիւր տեղ ուր որ յիշուած է՝ հետը կցուած իշխանութիւններէն պիտի իմացուի ինչ լինելն:

Եթե ներքոյ, շատ կանուխ Առաքելաբաշխ Գրգիսի սարկաւագութեան աստիճանի հաստատութեան, եւ Եկեղեցւոյ արտաքին իրաց հոգատարութիւնն որ իրենց վերայ օր ըստ օրէ կը ծանրանար՝ սարկաւագաց յանձնեցին:

5.- Զարգացումն Նուիրապետութեան զկնի Առաքելոց:

Ա.- Բարձրագոյն դասակարգութիւն:

Նախընթաց յօդուածներէ տեսնմբ որ Եկեղեցւոյ ներկայ նուիրապետութեան բոլոր հոգեւոր իրաւունքներն Առաքելոց ձեռնէն էին, եւ միայն անուանց եւ պաշտօնի բաժանմանց անորոշութիւն կար եւ զանազան պաշտօնները դեռ լիովին չէին զարգացած, որոյ պատճառներէն մին, ըսինք: Եկեղեցւոյ նորութիւնն էր: Մի ուրիշ եւ աւելի մեծ պատճառ եւս կար: Առաքելական դարու հաւատացեալ գրիստոնէութիւն իբրեւ շարունակութիւն կամ կատարելութիւն եւ բարեփոխումն մովսիսական օրինաց կը նկատէին. քանզի հրէութիւնն եւս աստուածային կրօն մի էր ու կարելի չէր որ Աւետարանն անոր սահմանեալ օրէնքները ջնջելով՝ բոլորովին նոր օրէնքներ հաստատէր. մանաւանդ որ նախկին հաւատացեալ ըստ մեծի մասին Հրէից ազգէն լինելով՝ քրիստոնէութեան մէջ հին մարգարէից կանխասացութեանց եւ իրեանց բազմամեայ բաղձանաց կատարումն կը տեսնէին, եւ շատերուն ալ մեծ հրապոյր մի կ'ընծայէր այդ յոյսն: Կը տեսնենք 'ի Գործոց Առաքելոց որ հաւատացեալ՝ իրեանց քրիստոնէական առանձին ժողովներէն եւ խորհրդակատարութենէն զատ՝ տակաւին շարունակ կը մասնակցին Հրէից կրօնական սովորութեանց: Տաւարի արարողութեանց, պատարագի, ուխտի, ժողովրդանոցաց այցելութեամբ եւ այլն. եւ մինչեւ իսկ փորձեր կ'ընեն հեթանոսութենէ

դարձողներու վերայ եւս մովսիսական օրինաց պարտաւորութիւնները դնել: Այս պարագայից մէջ քնական էր որ Առաքելաբաշխ Գրգիսի հրէական հոգեւորականութեան հակառակ կամ նորա հետ մրցակից քրիստոնէական քահանայութեան անուն եւ աստիճան սահմանել, կամ որեւէ կերպիւ իրենց հայրենակցաց գայթակղութիւն տալ: Քանզի ո՞չ ապաքէն հին Տաւարը դեռ կանգուն էր, եւ հին ուխտի պատարագի պաշտօնը անընդհատ կը կատարուէր. ո՞չ ապաքէն Երուսաղէմի մէջ տակաւին քահանայապետ մը կը նստէր եւ ահարօնեան եւ դեւտական համայն դասակարգութիւններն իրեանց իրաւանց ու պաշտօնին լիագոր տէր էին, գոր Գրիստոս եւս յարգանքով յիշած եւ ընդունած էր: Ուստի քանի որ դեռ Սուրբ Քաղաք ու Տաւար կործանուած չէին, ժամանակը հասած չէր որ քրիստոնէական քահանայութիւնը բացարձակապէս հրէական քահանայութեան տեղ հռչակուէր եւ քահանայական անունը անկասկած եւ անբերկիւղ գործածուէր: Այդ քառի գործածութիւնը միայն գայթակղութիւն կրնար տալ, խառնաշփոթութիւն պատճառել, եւ փոխանակ Աւետարանի միտքով ըմբռնելու՝ օրինական միտքով կը հասկցուէր: Բայց երբ Տաւարն ինկաւ եւ դեւտական քահանայութիւնն աննպատակ եւ անպաշտօն մնաց, ժամանակն հասած էր քրիստոնէական քահանայութիւնը բարձրաձայն խոստովանելու, անկէ յետ էր որ Յովհաննէս Առաքելուն Եփեսոսի մէջ սկսաւ խոյրն ու ոսկի թիթեղն կրել, որ Ահարօնի յաջորդաց միայն յատուկ նշան էր, անկէ յետ է որ քրիստոնէական նուիրապետութեան գլխաւոր աստիճաններն որոշ եւ հաստատուն կերպարանք կ'առնուն եւ իւրաքանչիւրի անուն ու պաշտօն յատկապէս կ'որոշուի: Երկրորդ դարու սկիզբն եպիսկոպոսութեան, քահանայութեան եւ սարկաւագութեան աստիճաններն

իրեանց զարգացման կատարելութեան մէջ կը գտնենք, թէ՛ անուամբ եւ թէ պաշտօնիւ, այլ եւս անուանց եւ յորջորջմանց խառնաշփոթութիւն չկայ, եւ իւրաքանչիւրի իշխանութիւնն ու պաշտօնն պարզապէս գծեալ է: Արդարեւ յետոյ եկեղեցական պաշտօնէից ուրիշ եւ նոր ստորաբաժանումներու եւս կը հանդիպինք, բայց այդ բաժանումներն մինչ ցարդ եղածներէն տարբեր չեն, այլ միայն անոնց ընդարձակութիւնն եւ երկրորդական նիւղերն են: Բուն եւ հիմնական աստիճաններն, ինչպէս տեսանք, են եպիսկոպոսութիւն, ֆահանայութիւն եւ սարկաւագութիւն. ասոնք էին Առաքելոց բաժանումներն եւ անմիջապէս զկնի Առաքելոց այս բաժանումները միայն կը գտնենք եկեղեցւոյ մէջ եւ նախկին սուրբ Հարց գրութեան մէջ:

Ասոնցմէ ամենէն կարեւորն ու պարզն է Ս. Իգնատիոս Անտիոքայ հայրապետ, որ 'ի մանկութենէ Յովհաննէս Առաքելոյն աշակերտած էր եւ աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ Քրիստոս զայն առաւ իւր գիրկը եւ օրհնեց եւ երկնից արքայութեան ժառանգութիւնը այդպիսի մանկական անմեղութենէ կախեալ փարոզեց: Ի սկզբան երկրորդ դարու այս սուրբն հեթանոս իշխանութեան հրամանաւ բռնուեցաւ եւ Հռովմէ տարուեցաւ՝ եւ զազանաց կերակուր եղաւ: Այս իւր վերջին ուղեւորութեան միջոցին թուղթեր կը գրէ այլ եւ այլ եկեղեցեաց եւ զանոնք կը յորդորէ 'ի սէր եւ 'ի միութիւն եւ 'ի հաստատութիւն հաւատոյ: Այս թղթոց մէջ Ս. Իգնատիոս յանախ առիթ կը գտնէ նուիրապետութեան աստիճաններն յիշելու, եւ երբեմն ալ անոնց պաշտօններու վերայ այնպիսի պարզութեամբ, թէեւ անուղղակի կերպիւ, խօսելու, որով քաջ յայտնի կերպիւ կը տեսնուի որ նորա ժամանակ եկեղեցւոյ երբեակ պաշտօնէութիւնը կատարելապէս զարգացեր էր, եւ ըստ էութեան միեւնոյն

էր որպէս այժմ: Վերոյիշեալ թուղթերէն մի քանի հատուած յառաջ բերենք իբրեւ ապացոյց: Առ Ձմիւռնացիս գրեալ թղթոյն մէջ (Գլ. Գ) այսպէս կը գրէ. «Ամենեքեան եպիսկոպոսի հնազանդ լերուք որպէս Յիսուսի Քրիստոսի եւ Հօր Աստուծոյ, եւ ֆահանայից իբրեւ Առաքելոց Քրիստոսի. եւ 'ի սարկաւագաց պատկանեցէք իբրեւ 'ի հրամանէ Աստուծոյ: Եւ մի ոք գործիցէ ինչ առանց եպիսկոպոսի յեկեղեցական գործոյ: Ճշմարիտ պատարագ համարեսցի որ ինչ յեպիսկոպոսէն գործիցի. կամ յայնմանէ որ 'ի նմանէ գործել հրամայի: Ուր որ երեւի եպիսկոպոսն՝ անդ եղիցի ամենայն ժողովն, որպէս թէ ուր իցէ Յիսուս Քրիստոս, անդ իցէ կաթողիկէ եկեղեցի: Զիք իշխանութիւն առանց եպիսկոպոսի ունեք, ոչ մկրտել զոք, եւ ոչ առնել հանգիստ. բայց զոր ինչ նա ֆնենցէ՝ այն է հաճոյ Աստուծոյ. զի լինիցի ճշմարիտ եւ հաւատարիմ, զոր ինչ եւ գործիցէ: Արդ պատշաճ է արթուն կալ, մինչ զոյ ժամանակ ապաշխարութեան: Բարւոք է ճանաչել զԱստուած եւ զեպիսկոպոս եւ որ պատուէ զեպիսկոպոս՝ պատուի 'ի յԱստուծոյ, եւ որ գործէ ինչ եւ ծածկէ յեպիսկոպոսէ՝ ծառայ է նա սատանայի»: Առ Նփեսացիս (Գլ. Գ.) կը գրէ. «Արդ՝ հնազանդ լերուք եպիսկոպոսի եւ ֆահանայից, զի յամենայնի սուրբ եղիչիք: Որպէս եւ եպիսկոպոսք որ յամենայն տիեզերս ընտրեցան՝ 'ի Յիսուսի Քրիստոսի կամսն են: Վասն այսորիկ եւ ձեզ վայել է փութալ 'ի բարի կամս եպիսկոպոսաց, որպէս եւ գործէք իսկ: Այսպէս եւ ֆահանայք ձեր, ոյք արժանի են անուանն իւրեանց՝ եւ Աստուծոյ՝ միաբանեալ ընդ եպիսկոպոսի իբրեւ զաղիս ֆնարի»: Առ Մագնիոնացիս (Գլ. Բ.) այսպէս. «Եւ վասն զի յառաջագոյն զոր գրեցի վասն եպիսկոպոսի եւ երիցանց եւ սարկաւագաց՝ տեսի զամենայն ժողով ձեր լի սուրբ հաւատով եւ սիրով: Եւ խնդրեմ 'ի ձեզ

գի միաբանութեամբ եւ Աստուծոյ գործիցէք գամնայն ինչ. եւ նստցի Եպիսկոպոսն 'ի գլուխս ձեր իբրեւ զԱստուած, եւ քահանայք իբրեւ զհրեշտակս քաղաւորի, եւ սարկաւագունք 'ի կերպարանս Առաքելոց որք յոյժ սիրեցեալքն են իմ, որ հաւատարումքն են սպասուցն Յիսուսի Քրիստոսի»:

Այս հատուածներէն պարզապէս յայտնի է որ նուիրապետութիւնն երեք որոշ աստիճաններէ բաղկացեալ էր, որք էին Եպիսկոպոսութիւն, քահանայութիւն եւ սարկաւագութիւն: Եպիսկոպոսի աստիճանն իւր զարգացման զագաթնակէտն հասեր է, այլ եւս Առաքելոց հսկողութեան եւ հրահանգաց տակ չեն գտնուիր Եպիսկոպոսութեան, նոքա բոլորովին անկախ, բոլորովին ինքնիշխան են. ամեն հաւատացեալ՝ Եպիսկոպոսին հնազանդիլ պարտի ինչպէս «Յիսուսի Քրիստոսի եւ Աստուծոյ Հօր», որ ասել է թէ Եպիսկոպոսն Քրիստոսի փոխանորդ է, եւ ամեն ինչ նորա հրամանաւն պիտի լինի նոյն իսկ պատարագել, մկրտել, քաղել, ապաշխարութիւն դնել. որով կ'իմանանք թէ Եկեղեցւոյ ընդհանուր կառավարութիւնն ամբողջովին Եպիսկոպոսի ձեռքն է: Ուստի «վայել է հաւատացելոց փութալ 'ի բարի կամս Եպիսկոպոսաց», «եւ նստցի Եպիսկոպոսն 'ի գլուխս ձեր իբրեւ զԱստուած»: Այս թղթոց մէջ այլ եւս Եպիսկոպոս եւ երեք բառերն խառնախառն եւ իրարու նշանակութեամբ գործ չեն ածուիր ինչպէս Նոր Կտակարանի մէջ, ուր յայտնապէս քահանայ եւ երբեմն ալ երեք բառերն մի եւ նոյն նշանակութեամբ կը գործին: Առանց երկբայութեան քահանայն Եպիսկոպոսի ստորակայեալ է. հանդէպ Եպիսկոպոսի միեւնոյն է նա որպէս Առաքեալք հանդէպ Քրիստոսի. ինչպէս Առաքեալք առանց Քրիստոսի հրամանի ոչինչ կը գործէին, նոյնպէս եւ քահանայք առանց Եպիսկոպոսի հրամանին

ոչինչ գործելու են: Իսկ սարկաւագաց պաշտօնն արդէն Առաքելոց ժամանակ իսկ ըստ բաւականին որոշեալ էր, եւ թէ այս թղթոց մէջ մասամբ եւ թէ մանաւանդ բոլոր յաջորդ երեւելի վարդապետաց գրուածոց մէջ ամենայն պարզութեամբ յատկացեալ է: Նոյնպէս երկրորդ դարու վերջերը գումարուած Եպիսկոպոսաց ժողով մի յԱնտիոք՝ իւր շրջաբերական թուղթը կ'ուղղէ «Եպիսկոպոսաց՝ երիցանց եւ սարկաւագաց եւ ամենայն կաթողիկէ եկեղեցւոյ որ 'ի ներքոյ երկնից» (Նւէր. է. 30), Նիկիոյ ժողովոյ մէջ երրեակ բաժանումն նուիրապետութեան Եպիսկոպոսութիւն, 'ի քահանայութիւն եւ 'ի սարկաւագութիւն իբրեւ աներկբայ եւ յայտնի իրողութիւն ընդունուելով՝ իւրաքանչիւր աստիճանի պարտաւորութիւններն եւ իրաւունքներն ամենայն պարզութեամբ կ'որոշուին, եւ անոնց մէջ ելած զեղծումները բառակաւ օրէնքներ եւ արգելքներ կը սահմանուին. եւ այսու աւելի պարզութեամբ կ'երեւի հոգեւորական անձնիւր աստիճանի իշխանութիւնն ու սահմանը: Վերը յիշուած առաքելական գրուածներէ քաղեալ Եպիսկոպոսաց անուններէն զատ, մի քանի ուրիշ կարեւոր անուններ եւս կ'աւանդէ մեզ Եկեղեցւոյ Պատմութիւնն եւ ստոյգ աւանդութիւնն, որք յԱռաքելոց անտի ձեռնադրուելով՝ Եպիսկոպոսութեան առաջին օրինակն ու նախագաղափարն եղան, եւ կամ անոնց անձամբ աշակերտած լինելով՝ առաքելական աւանդութեանց եւ վարդապետութեանց լիովին տեղեակ էին.:

1. Անտիոք քաղաքի առաջին Եպիսկոպոսն էր Նուդիոս, 'ի Պետրոսէ ձեռնադրեալ: 2. Որում կը յաջորդէ վերոյիշեալ առաքելական աշակերտ սուրբ Իգնատիոս: 3. Ի վախճանել սրբոյն Յակովբայ՝ Նրուսաղէմի աթոռոյն կը յաջորդէ յամի Տեառն 71 Սիմոն ազգական Տեառն: 4. «Սմանչելի էր ընդ ժամանակսն ընդ

այնոսիկ 'ի կողմանս Ասիացոց Պողիկարպոս' որ կենակիցն եղև ընդ Առաքելսն, եւ որոց ականատես եւ սպասաւորք եղեն Տեառն, եւ 'ի ձեռնադրութենէնցա ընկալաւ նա զԵրեսնականութիւն Ջմիւռնացոց եկեղեցւոյն»։ Պողիկարպոսի մահուան թուականն է 167։ 5. Պողիկարպոսի ժամանակակից է Պապիաս Երեսնական Հերապոլոյ։ Եւ 6. Նորա աշակերտ Իրէնէոս կամ Նրանոս յաջորդեց յԵրեսնականութեան Ջմիւռնացոյ զկնի

մահուան Պապիասայ։ Ս. Իգնատիոսի թղթոց մէջ եղած ականարկութիւններէն կ'երեւի որ Փոքր Ասիոյ եկեղեցիք ամեն ուրեք Երեսնականութեան ունէին որք մեծաւ մասամբ Յովհաննոս Առաքելոյ ձեռնադրեալներն էին ըստ վկայութեան Կղեմայ Աղեքսանդրացոյ։

(Շարունակելի)

ԹՈՐՈՍ Տ. Ի. ԶՈՒՂԱՅԵՑԻ

c. *The Definition of Chalcedon*, 451.

Council of Chalcedon, Actio V, Mansi, vii. 116 f.
(Heurtley, *De Fide et Symbolo*, 216.)

Therefore, following the holy Fathers, we all with one accord teach men to acknowledge one and the same Son, our Lord Jesus Christ, at once complete in Godhead and complete in manhood, truly God and truly man, consisting also of a reasonable soul and body; of one substance [*ὁμοούσιος*] with the Father as regards his Godhead, and at the same time of one substance with us as regards his manhood; like us in all respects, apart from sin; as regards his Godhead, begotten of the Father before the ages, but yet as regards his manhood begotten, for us men and for our salvation, of Mary the Virgin, the God-bearer [*Θεοτόκος*]; one and the same Christ, Son, Lord, Only-begotten, recognized in two natures, without confusion, without change, without division, without separation¹; the distinction of natures being in no way annulled by the union, but rather the characteristics of each nature being preserved and coming together to form one person and subsistence [*ὑπόστασις*], not as parted or separated into two persons, but one and the same Son and Only-begotten God the Word, Lord Jesus Christ; even as the prophets from earliest times spoke of him, and our Lord Jesus Christ himself taught us, and the creed of the Fathers has handed down to us.

ԳՐԱԿԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ «ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆՈՒ» ՎԷՊՈՒՄ

Պատմութեան էութիւնը եւ նրա արդիական նշանակութիւնը, Օտեանի հանճարեղ մախորդ՝ Պարոնեանը քացատրում էր այսպէս. «Ետեղ մայէ, որ առաջդ տեսնես»: Այս իմաստով էլ յոյժ արդիական է Օտեանի հիւսած գեղարուեստական պատումը Փանջունու եւ նրա գործունէութեան մասին:

Օտեանի հերոսի կերպարը, թէեւ հիւսուած գեղարուեստական միջոցներով, իրական է եւ այնքան կենդանի, այնքան սերտօրէն առնչուող հայ ընկերային ու քաղաքական կեանքին, որ նրան առանց յատուկ ջանքերի էլ կարելի է տեսնել եւ մօտիկ անցնալի հայ քաղաքական գործիչների մէջ, եւ մեր մէջ ու մեր շուրջը՝ համագային ազատագրական շարժման ներկայ փուլում: Իսկ մարդկային հասարակութիւնը փանջունիներից առ հասարակ ազատագրուել չի կարող, գալիքն էլ դատապարտուած է ունենալու իր փանջունիները: Կարծես իբրեւ սպառնալիք է հնչում Օտեանի քնութագրական մախազգուշացումը. «Իրենին մամն նկարագիրները ո՛չ տարիններէն, ո՛չ դէպքերէն, ոչ յուսախաբութիւններէն կ'ազդուին»:

«Ապահովաբար օր մը կրկին պիտի լսեմք իր անունը: Երբ ժամը հնչէ՝ ան իր շարքերուն գլուխը պիտի գտնուի»:

«Ծապլվարի հերոսը իր վերջին բառը չէ ըսած տակաւին» (113):

Բնական հարց կարող է ծագել. ի՞նչ միջոցներով ու գեղարուեստական հմարքներով է Օտեանը կարողացել ապահովել տիպականութեան այսպիսի բարձր մակարդակ, ինչպէ՞ս է նա առանձինի, կոնկրետի մէջ խտացրել ու ընդհանրացրել մեծ բովանդակութիւն, որի շնորհիւ էլ նրա երկում կեանքի նշմարտութիւնը եւ գեղարուեստի նշմար-

տութիւնը չունեն որեւէ հակասութիւն, թէեւ լայնօրէն օգտագործուած են չափազանցութիւն - գրոտեսկը, փանթասթիկան, գեղարուեստական պայմանականութեան այլեւայլ ձեւեր:

Ամէնից առաջ՝ Օտեանն ստեղծել է կենդանի մարդկային քնաւորութիւն, որը ձեւաւորուել է կենսական որոշակի պայմաններում ու հանգամանքներում: Մեր աչքի առջեւ է այդ «համակրելի հերոսը»՝ իր ծննդեան օրից, մանկութեան, պատանութեան, հասունութեան շրջափուլերով, յեղափոխական տենդոտ գործունէութեան աղետաւոր հետեւանքներով:

Ընթերցողն, անշուշտ, յիշում է, որ փանջունին չի քարեհաճել կանոնաւոր յանախել դպրոց ու համալսարան: Դրա փոխարէն զբաղուել էր անձնդիր կեանքով, իսկ գիտելիքներ ձեռք էր բերել իր կեանքի «գլխաւոր կայաններում»՝ գարեջրատներում: Ո՛չ գիտելիքներն էին կանոնաւոր, ո՛չ միտքն ու տրամաբանութիւնը: Իր ընկերվարական համոզումներն ու գաղափարներն էլ խառնիխուռն փաղել էր Մարֆսի ու Էնգելիսի, Չերնովի ու Կապուցկու, Շիշկոյի ու Վիլիսիանելի, Կրապոսկինի, Բեռնշտայնի ու Գօլուբի տեսութիւններից:

Թուարկուած մտածողներն բոլորն էլ ընկերվարական էին, բայց տարբեր թեքումներով եւ հակումներով. նրանց աշակերտը, սակայն, իրար էր խառնել համայնավարական, օպորտունիստական, ռեւիզիոնիստական ու անարխիստական տեսութիւնները եւ այդ իւրօրինակ խառնուրդից կազմել իր «աշխարհայեացքները»: Իսկ թէ որքան է նրա ըմբռնողութեան աստիճանը եւ հասկացողութեան գործակիցը, կարելի է պատկերացնել՝ յիշելով նրա մանկութեան ու դպրոցական

տարիները, հոր մահից յետոյ եղբոր հետ յարաբերութիւնների, Մարսէլի վաճառականական դպրոցից հրաժարուելու, ժնեւի համալսարանում «սոցիալ գիտութիւններու ազատ ուսանող» արձանագրուելու պատմութիւնը՝ մինչեւ յեղափոխական գործիչ դառնալը:

Փանջունու ծալկարեան գործունէութեան հանգոյցը արտափուստ չնչին, աննշան մի դէպք է, որ գրեթէ բոլոր գիւղերում էլ կատարուում էր ու մնում աննկատ: Փանջունիական ուղեղ, տրամաբանութիւն ու չարի հանճար էր պէտք՝ այդ ջնջին դէպքը «ապագայ մեծ կատակի զմեռի» սկզբնապատճառ դարձնելու, գիւղացիներին երկու բանակի բաժանելով անհաշտելիօրէն թշնամացնելու, անընդհատ նրանց միջեւ կռիւ բորբոքելու, բարեկեցիկ գիւղը քրոջերի աւարառութեանը մատնելու եւ նրա բնակիչներին գոհելու կամ տեղահանելով ցրելու համար:

Ռէս Սերգոն, որ հենց Փանջունու նամակների տուեալներով ամենֆից յարգուած, բարեհամբաւ անձնաւորութիւն է, իր ծոյլ, գող, անբարոյ մշակ Սմեց վարդանին վճռուել է: Հենց սա էլ համարում է «դասակարգային հակամարտութեան» սկզբնապատճառ եւ Սմեց վարդանի (Փանջունու բնորոշմամբ՝ «հողային պրօլետարիատի») շահերի պաշտպանութեան պատրուակով պայքար է ծաւալում Ռէս Սերգոյի դէմ: Փանջունու հարուածային ուժը Աւօն է, որի համար «շատ հեշտ բան է կրակի տալ Ռէս Սերգոյի կալը կամ գումը» (42): Նրա միջոցով էլ Փանջունին ուղարկում է իր սպառնական վերջնագիրը՝ որով Ռէս Սերգոյից պահանջում էր անմիջապէս վերստին աշխատանքի ընդունել վարդանին: Իսկ երբ հաշտարար միջնորդ Տէր Սահակը յայտնում է, թէ Ռէս Սերգոն, նկատի ունենալով նրա խեղճ վիճակը, համաձայն է երաշխաւորութեամբ նրան ընդունելու, Փանջունին դա համարում է

գաղափարական առաջին լուրջ յաղթանակը, եւ տեսէք ինչպիսի հրճումնաժողով եւ ի՞նչ որակումով է կենտրոնին հաղորդում այդ ցնցող լուրը. «Իսկոյն տեսայ, որ միջնադարեան կղերականութիւնը եւ գիւղային պուրժուագիւն արդէն իսկ սկսած էին տեղի տալ որոտացող յեղափոխութեան դիմաց» (43-44): Ինչ խօսք, սա չափազանցութեան գորեղ տեսակն է, երգիծական գրօտեսկը, որով Օտեանը ծաղրում է փանջունիական գործելակերպը, սակայն ոչ միայն անհաւանական չէ, այլեւ իրական է ու հաւաստի՝ իբրեւ ստալինեան ժամանակների բռնապետական ընկերակարութեան բնորոշ երեւոյթներից մէկը:

Տէր Սահակը, որ Փանջունու ըմբռնումով «միջնադարեան կղերականութեան» խորհրդանշն է, ընդամենը մի քանիսն է, որը թէեւ գրել-կարդալ էլ չգիտի բայց մարդկայնօրէն ջանում է հարթել սրուող բախումը երկու կողմերի միջեւ ի շահ գիւղի խաղաղութեան: Իսկ Ռէս Սերգոն, ահա, միանգամից երկու դրդալի բնորոշում ունի՝ «ագրարային կապիտալիզմ» եւ «գիւղական պուրժուագիւն»: Նրան էլ Փանջունին ներկայացնում է մի քանի «նուագագոյն» պահանջներ՝ քաղուած ընկերակարութեան իրեն յայտնի հանգանակներից: Պահանջում է, որ Ռէս Սերգոն կրկին ընդունի ծոյլ ու գող վարդանին, նրան վճարի վճռուելու օրումանից, կրճատի աշխատաժամն ու աւելացնի վճարը, յանձն առնի նրան առնուագն 20 տարի իր մօտ պահել: Ի յաւելումն այս ամենի՝ միջադէպը կարգաւորելու համար իր մատուցած ծառայութեան դիմաց Փանջունին պահանջում է «դրամական կարեւոր նուէր մը ընել կուսակցութեանս ծալկարի գանձին» (47): Փանջունին որոշել է այս պայմանները պարտադրել Սերգոյին, իսկ վերջինս համաձայն է թէ ոչ, ի վիճակի է թէ ոչ՝ կարեւոր չէ. Փանջունին իր որոշումը

գլխի իրագործի «դասակարգային պայքարի գեներով»:

Վարդանն ինքը Սերգոյից դժգոհ չէ, ինչիսկ ուրախացել է, որ բարի Սերգոն ներել է իրեն, եւ ինքը կարող է վերսկսել շխտանքը: Թուում է՝ կննդի ու հարթուած է, բայց «որոտացող յեղափոխութեան» անհիշարան ընկրկող չէ. Վարդանի միջոցով մա պիտի լուծի «միջազգային պրոլետարիատի» խնդիրները. «- Քանի որ Ռէս Սերգո ներել է ինձ՝ երբեք գործիս սկսիմ, - կը կրկնէր այդ ապուշը, - եզրնով այդպէս ոտնակոխ ընել միլիոնատո պրոլետարներու իրաւունքը, իր անձնական անհի համար» (47):

Ինչպէս տեսնում ենք, չափազանցութեանց վրայ յենուած դրութեան կօմիզմն այստեղ դարձել է երեւոյթի ողջ իմադրելութիւնը բացայայտող միջոց: Ժուգահեռաբար օգտագործուել են նաեւ գործողութեան կօմիզմն ու պարագաների կօմիզմը, խօսքի կօմիզմը, լօգիզմն ու լօգիզմը, որոնց շնորհիւ երգիծական պատկերը դառնում է կատարեալ, որողութիւնը բնորոշում է համակողմանիօրէն: Փանջունին որեւէ գործ ձեռնարկում է, իբր, յանուն վիճակի բարելաման, բայց քանի որ նա իրականում պայքարում է յանուն անձնօգուտ գաղափարի կենսագործման՝ քանզում աւերում է եղածն էլ, դժբախտութիւններ ափռում իր շուրջը: Ծապկարեան ու վասպուրականեան նամակներում յատկապէս նկատուած է մի օրինաչափութիւն էլ. գրեթէ միշտ՝ եւ Ռէս Սերգո - Տէր Սահակ - Սեւ Աւօ - Սմենց Վարդան - Կոլոշենց Սեդօ, ե՛ւ առ հասարակ ծապկարցիներ ու քոմրաշցի քոմր, ե՛ւ ջուլիականոցի քանուորներ ու Մակար Մրկորեան, եւ մանկապարտէզի սան Կայծակ ու դաստիարակչուհի, ե՛ւ գաւառ - Պոլիս, ե՛ւ լայն առումով հայ - թուրքական, հայ - քրդական յարաբերութիւններում

դոգմատիկ Փանջունին նախ եւ առաջ փնտռում է դասակարգային հակասութիւններ, եռանդով «յայտնագործում» է ընդդիմադիր ուժեր ու անհաշտելի թշնամիներ ու բոլորին դուրս բերում միմեանց դէմ: Զի կարելի ասել, թէ նա ուժեղի եւ թոյլի, զոհի ու դահնի յարաբերութեան մէջ չի տեսնում պարտուողների վիճակի ողորդակացութիւնը: Ընդհակառակն, սուսկալին այն է, որ նամակներում նա անկեղծօրէն ներկայացնում է նաեւ իր գոհերի ողորմելի դրութիւնը, չարախնդում, սառնասրտօրէն հեզմում է նրանց եւ անթափոյց հրնուանքով շարունակում իր դիւային գործը: Նա գուրք եւ կարեկցանք, խղճմտանք չունի իր «յեղափոխական գործունէութեան» հետեւանքով տապալուած մարդկանց հանդէպ: Յանուն այն գաղափարների, որոնց մէջ խոթել է իր գլուխը, պատրաստ է զոհել ամէն ինչ եւ ամէնքին:

Փանջունիատիպ կուսակցականի վարժագծի ու գործելակերպի բացայայտումն ու ցուցադրումը Օտեանի գեղարուեստական հանճարեղ գիտերից մէկն է: Գործիչ Փանջունու բնաւորութեան, ըմբռնողութեան ու վարժագծի մէջ մանկութեան օրերից գրեթէ ոչինչ չի փոխուել. անման ու հասակի հետ պարզապէս մեծացել են չարիք գործելու հնարաւորութիւնները: Դէպքերն ու իրադարձութիւնները նա շուտ տուած է ընկալում, գործում է կեանքի տրամաբանութեանը հակառակ: Ինչպէս փոքրիկ Փանջունին էր ջարդուփշուր անում թանկարժէք իրերն ու անօթները եւ պարծանքով ասում՝ շինեցի, հայրիկ, այդպէս էլ գործիչ Փանջունին հպարտանում է իր աւերածութիւններով. փակում է դպրոցը, մանկապարտէզը, ջուլիականոցը, քոմրի քոմրի, գրաւում ու կողոպտում է Բջիջ գիւղի սուրբ Վարդանայ վանքը եւ այդ

բոլորը «խղճի հանդարտութեամբ» անուանում «գաղափարական շօշափելի յաղթանակ», սրտապնդիչ ու միփարական երեսոյք: «Սիրելի ընկերներ - գրում է Փանջունին ծապլվարեան վերջին՝ ժրնամակում - յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն: Վերջապէս մեր կորովի գաղափարային ազնիւ պայքարը անպայման տարաւ յաղթանակը, անկեղծ յեղափոխական սկզբունքը փրկուեցաւ, թէւ ծապլվար կործանեցաւ: Ափսո՛ս, ի՞նչ անել, կարելի չէ ձուագեղ եփել առանց հաւկիթ կոտրելու, կ'ըսէ ֆրանսիական առածը: Ծապլվարի աւերակներուն վրայ այժմ կը բարձրանայ մաքուր իտէալական պայքարի հոյակապ յաղթակամարը» (103):

Այսպիսին է Փանջունին թէ՛ Ծապլվարում, թէ՛ Վասպուրականում, թէ՛ տարագրութեան մէջ, թէ՛ Նրեւանում: Ամէնուր նա գործում է մի մտահոգութեամբ՝ մղել յեղափոխական պայքար՝ բարձրացնելու համար իր եւ իր վարկաբեկուած կուսակցութեան հեղինակութիւնը: Վասպուրականեան Գ. նամակում ակնյայտօրէն երեւում է, որ կուսակցական կենտրոնն էլ շահագրգռուած է իր պրեստիժի բարձրացմամբ եւ համապատասխան ցուցում է տուել այդ մասին՝ կուսակցութեան վարկը բարձրացնելու եղանակը կամ միջոցը թողնելով Փանջունու ընտրութեանը: Իսկ Փանջունին պրեստիժը բարձրացնելու մի եղանակ գիտի միայն՝ պայքարը: Խաղաղ գործունէութիւնը, նրա կարծիքով, վարկաբեկիչ է, հեղինակագրկող: Եւ բերում է մկների շրջանում կատուի հեղինակութեան անկման բնորոշ օրինակը: «Մեր պրեստիժը թեփուեց այն օրէն՝ ուր խաղաղ գործունէութեան աղետալի փորձը ընել ուզեցինք: Կատուն որ չի ճանկեր ու կը փորձէ՝ ետեւի ոտներուն վրայ կենալ ու ձեռք լիզել, այլեւս կը դադարի կատու ըլլալէ. նա ա՛յլ կորցրած է իւր պրեստիժը

մուկերու հով: Պէտք է միշտ ճանկել, այդ է մեր պատմական, եւ կամ այսպէս ասած՝ մեր ֆիզիոլոգիական դերը հայ իրականութեան մէջ» (126-127):

Ահա ինչու է Փանջունին այդքան յանդուգն ու ագրեսիւ, ահա ինչու է նա աննուագ եռանդով խառնաշտորում հայ կեանքը եւ բոլորին պահում լարուածութեան մէջ:

Մակար Մրկորեանի ջուլհականցում Փանջունին գտել էր իսկական պրօլետար բանուորուհիների, որոնք երկու դուրուշ օրականով աշխատում էին առանց դժգոհելու, որովհետեւ Վանում մէկ դուրուշով էլ կարելի էր կանոնաւոր ապրել: Բայց Փանջունին եւ Սարսափունին դրսեւորում են իրենց յեղափոխական բնաւորութիւնը: Նրանք մատնացոյց են անում նոյն աշխատանքի դիմաց տասնապատիկ աւել վարձատրուող ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի բանուորուհիների օրինակը՝ պահանջում են գործադուլ սկսել՝ ջուլհականցի տիրոջը ներկայացնելով անկարելի պահանջներ: Վստահեցնում են բանուորուհիներին, թէ իրենք ամէն կերպ կ'օժանդակեն եւ թոյլ չեն տայ, որ նրանք ջախջախուեն «ամբարտաւան ու անխիղճ ֆապիտալիզմի լուծին տակ»: Իսկ իրողութիւնն այն էր, որ Մրկորեանը մի մեծահարուստից պարտք էր վերցրել, որ գործ սկսի, կարողանայ կատարել մի երեսելի թուրքի գաւակի հարսանեկան հագուստների պատուէրը՝ պարտքը վերադարձնելու եւ որոշ գումար շահելու ակնկալութեամբ: Սկսւում է գործադուլը «երեք-ուրեքի» (երեք ժամ աշխատանք, երեք ժամ հանգիստ, երեք ժամ հուն) եւ հինգ դուրուշ օրականի պահանջով: Գործարանատէրը պատրաստ էր կատարելու պահանջը, միայն թէ կարողանար պատուէրը ժամանակին աւարտել, բայց Փանջունին եւ Սարսափունին ամէն կերպ խանգարում են

աշխատանքը վերսկսելուն՝ դա համարելով ծանրագույն հարուած իրենց եւ կուսակցութեան պրեստիժին. «Իսկ գործողութիւնը ընդ պանուորուհիներու դրութիւնը շատ ողորմելի էր - ցինիկ անկեղծութեամբ գրում է Փանջունին: - Նոքա չունէին ոչ նիւթական կարողութիւն եւ ոչ տարրական կորով՝ դիմադրելու համար սուժամեայ զրկանքներու եւ պատրաստ-եմութիւն կը յայտնէին երթալ գործի տեղելու նախկին օրականով, ինչ որ պիտի բար մեր պրեստիժի համար աղետաւոր էրուած» (155): Ուրեմն Փանջունուն եւ Սարսափունուն բուն ժողովրդի կացութիւնը բնու չի հետաքրքրում, այլ միայն կուսակցութեան հեղինակութիւնը. ո՛չ թէ կուսակցութիւնն է ժողովրդի համար, այլ ժողովուրդը՝ կուսակցութեան հեղինակութիւնը. ո՛չ թէ կուսակցութիւնն է ժողովրդի համար, այլ ժողովուրդը՝ կուսակցութեան: Բնական է, որ գործողութեան, թշուառութեան մատնուած բանուորուհիները, որ գրեթէ ամէն օր ներկայանում էին Փանջունուն ու Սարսափունուն եւ նրանց էին մեղադրում իրենց ողբերգական կացութեան համար, չպիտի բաւարարուէին ընկերվարական տարբեր առաջնորդներից բերուած ֆաղ-ուածքներով ու «փաստացի օրինակներով», այլ պիտի պահանջէին հարցի որեւէ գործնական լուծում. «- Հիմիկուան մեր վիճակին ճար մը մտածեցէք, կը կրկնէին այդ կիները ամէն անգամ որ իրենց կը բացատրեմք ընկերվարութեան սկզբունքները, որոնցմէ կախուած է իրենց փրկութիւնը» (159): Նիւթական, դրամական որեւէ օգնութեան փոխարէն Փանջունին եւ Սարսափունին բանուորուհիներին մատուցում են օդային կերակուրներ, լաւագոյն դէպքում խոստանում էին նրանց մտցնել «Միջազգային գործավարական ընկերվարութեան Գալիֆորնիոյ մասնաճիւղին մէջ»: Իսկ ջուլհականոցի

նախկին տէրը երեք դուրուշ օրականով աշխատանքի է անցնում մէկ ուրիշ գործարանատիրոջ մօտ այն բանից յետոյ, երբ թուրք բեկի «արդարացի որոշումով» նրան պարտք տուած վաշխառուն կառավարութեան միջոցով սեփականում է նրա գործարանն ու սարքաւորումները: Իսկ ի՞նչ է Փանջունու եզրակացութիւնը. «Այսպէս, ուրեմն, անխիղճ ֆապիտալիստն իր կարգին գոհ է դարձնել մի ուրիշ՝ ա՛յլ անլի անխիղճ ֆապիտալիստի ձեռք» (156):

Փանջունին եւ «դիւալեգտիկական ցնցող ուժ» Սարսափունին բանուորուհի-ների ծանր ճակատագրի մէջ ոչ միայն իրենց մեղաւոր չեն ճանաչում, այլեւ չունեն առհասարակ մեղաւորութեան գիտակցում: Ընդհակառակն, ջուլհականոցի փակումը համարում են «մի ահագին յաղթութիւն գաղափարական հողի վրայ», ընկերային ու դասակարգային ապագայ մեծ կատակլիզմի մանրանկարը: Ի պատասխան բանուորուհիների արդարացի բողոքների՝ նրանք արդարացում են որոնում ընկերվարութեան տեսարանների ու փութերի ասոյթներում, որոնք «միանգամայն համոզիչ» են: Իսկ եթէ բանուորուհիները դա չեն ընդունում, իրենք են մեղաւոր. «Ի գո՛ւր՝ ես եւ ընկեր Սարսափունի կը ջանամք Կարլ Մարքսէն, Բակունինէն, Կրապտկինէն, Հեգելէն, Լասալէն, Բեքելէն փաստացի ապացոյցներ բերել ապացուցանելու համար թէ՛ իրենց թշուառութեան եւ անգործութեան պատճառը պէտք է փնտռել ընկերային արդի կազմին մէջ, ֆապիտալիզմի բռնակալութեան եւ տիրող փոքրամասն տարրերու դարաւոր կեղեքումին մէջ եւ թէ ներկայ դրութիւնը ջնջելու միակ միջոցն է բոլոր աշխարհի գործաւորներու ընդհանուր միութիւնը բոլոր աշխարհի գործարանատէրերու դէմ» (159):

Կենտրոնի հրահանգներով ու ցուցումներով գործող Փանջունին ու

Սարսափունին դառնում են հայ կեանքի փաղկեղը՝ նրա բոլոր ոլորտներում տարածելով իրենց մահաբեր ճիւղերը, փոխակայելով ամենուր։ Նրկուն էլ նաևում են առաջադիմութեան ու լուսաւորութեան անունից, իբրեւ թէ պայքարում են մեռելային անշարժութեան դէմ եւ կամենում են արմատապէս փոխել մարդկանց հին կենսաձեւը, բարոյական ըմբռնումներն ու իրաւական նորմերը։

Կանանց ազատագրութեան խնդիրը, որ անցեալ դարից դարձել էր լայն ֆնմարկման առարկայ, նոր դարի առաջին տասնամեակներում էլ զբաղեցնում էր հասարակական միտքը՝ կարեւոր տեղ գրաւելով ընկերվարական տեսութիւններում։ Իսկ թէ հայ ընկերվարականներն ինչ վերաբերմունք ունէին այդ հարցի նկատմամբ, կարելի է պատկերացնել Փանջունու ծալվարեան ու վասպուրականեան գործունէութեան, Սարսափունու՝

«Կնոջական էմանսիպացիայի» վերաբերեալ կոչի ու դասախօսութեան, Վանում կազմակերպուած անդրանիկ փառական ամուսնութեան, նոր-սերնդական ու Ազատսէրեան խմբակցութիւնների տեսանական բնորոշումների միջոցով։ Զափազանցութիւն եւ սրում անշուշտ կայ, եւ առանց դրանց անկարելի է պատկերացնել երգիծական ստեղծագործութիւնը։ Կարեւորն այն է, որ փանջունիական ծայրայեղութիւնների ծիծաղելիութիւնը ցուցադրելով Օտեանը բացայայտում է երեւոյթի ողորդականութիւնը։ Դարձեալ առաջ է փառում կուսակցական եւ անհատական հանգամանքի խնդիրը, որը Փանջունին եւ իր ընկերները կիրառում են գրեթէ բոլոր իրադրութիւններում։ Նրանք, այսպիսով, ֆողարկում, ծածկում են իրենց աչառու վարձագիծը՝ իրենց դատապարտելի արարքները վերագրելով ոչ թէ կուսակցական գործչին, այլ մարդուն,

որը գործում է իր անհատական պատանախանատութեամբ։

Ծալվարում Փանջունին առաջադրում է կնոջ դերի նոր ըմբռնում, ընտանեկան յարաբերութիւնների վերակառուցում՝ յենուելով «բնական պահանջին» եւ ամուսնական շղթաներից կնոջ ձերբագատուելու տեսութիւնների վրայ։ Իսկ Սարսափունին Վասպուրականի հայուհիներին ուղղուած իր դիմում-դասախօսութեամբ առաջարկում է կնոջ հասարակական դերի բարձրացման այնպիսի ցնորական ծրագիր, որը ոչ միայն Վասպուրականի պայմաններում, այլեւ առհասարակ իրագործելի չէ։

Փանջունու «աշխարհայեացքներով» ոգեւորուած, նրա հովանաւորութիւնից օգտուելով՝ «ծոյլ, գող եւ անբարոյ» Սմեկ Վարդանը «ոչ կուսակցական հանգամանքով» առեւանգել է Սիւ Ջանը հարսներից մէկին։ Ծալվարում կատարուած այս արտառոց դէպքը կատարեալ խայտառակութիւն է եւ դէմ է գիղացիների ընկերային ու բարոյական ըմբռնումներին, համակեցութեան նորմերին։ Դառնացած, ըմբոստացած գիղացիներին ի՞նչ պատասխան է տալիս Փանջունին, ինչպէ՞ս է մեկնաբանում երեւոյթը՝ արդարացնելով իր կուսակցի անբարոյական արարքը, եւ վերջապէս, կուսակցական կենտրոնի՞ն ինչպէս է ներկայացնում այդ «յեղափոխական ակտը»։ ԺԱ. նամակում նա գրում է. «Նազուի ամուսինը, մի կեղտոտ պուրժուա, իր կուսակիցներու հետ վատաբար կը յարձակի Վարդանի տան վրայ եւ կ'ուզէ բռնի ետ առնել իւր կինը։ Թէեւ Սմեկ Վարդան ոչ կուսակցական հանգամանքով առեւանգած էր Նազուն»՝ այսուհանդերձ մեծ չէինք կարող պարզ հանդիսատես մնալ, մանաւանդ որ խնդիրը ունէր իր ընկերային-բարոյական կողմը, որը հարկ էր երեւան հանել։ Ես, Խեւ Աւօ, ընկերուհի

Սառա, Կարօ, Կոլոշենց Սեդո եւ պայտար Միօ փութացին մեր ընկերոջ պաշտպանութեան: Տեղի ունեցաւ կատաղի կռու, բայց Նազուր մնաց մեր մօտ» (100): Անաչառութեան մասին որեւէ խօսք չի կարող: Իրենց յանցաւոր կուսակցին պաշտպանելու նպատակով համախմբուած են Փանջունիութիւն դաւանողները: Նրանք ստեղծուած են դատապարտուած են ոչ թէ իրենց ընկերոջը, այլ քրիստոնէական ընտանիքի կազմութեան սկզբունքները, այսինքն՝ ոչ թէ կարգազանցն է մեղաւոր, ապա կարգն ինքը, որը ենթակայ է անկերպապահ փոփոխման՝ ինչպէս ողջ կուսակցութեան, այնպէս էլ նրա առանձին անդամների նաշակին, վարձագծին ու ցոյցութիւններին համապատասխան: Փանջունու կազմած ատեանը յատուկ որոշում է կայացնում այս առթիւ՝ ընդգծելով Վարդանի արարքի ոչ միայն արդարացիութիւնը, այլեւ օրինակելի լինելը նախ սերունդների համար: Իր «հիմնաւորման» մէջ Փանջունին յատկապէս նշելով, որ «կնոջ միմիայն իր ամուսնուն պատկանելը սեփականատիրական սխալ սկզբունքէն բխած է», որ «կինը իր մաքմնոյն բացարձակ տէրն է եւ անոր գործածութեան ազատ տնօրինուի»՝ Փանջունին «գիտակից հայուհիներին» կոչ է անում փշրել ամուսնական շղթաները եւ հետեւիլ Նազուրի ձեռքազատման օրինակին: Ահա ինչպէս էր Փանջունին «յայտնագործում» ծալկարգիներին իրար դէմ դուրս բերելու «մութ ուժերու եւ «գիտակից տարրերու» ամենօրեայ բախումներ առաջ բերելու շարժառիթներ ու պատճառներ եւ ինչպէ՛ս է մեկնաբանում ու գնահատում դրանք: Արժէ յիշել ազատ սիրոյ հողի վրայ ստեղծուած կոնֆլիկտի փանջունիական մի մեկնաբանութիւն եւս: Իր որոշումը նա համարում է միակ նշմարիտը եւ արդարացին, ուստի եւ՝ անբեկանելի, իսկ երբ հակառակ կողմը,

չընդունելով այդ որոշումը, բողոքում է Արաքլիի առաջնորդարանին, Փանջունին այդ բողոքը մեկնաբանում է մի բնորոշումով, որ առաւել քան զանշտական է. «Հակառակ ընկերվարական ատեանի այս արդար եւ հաշտարար կարգադրութեան, ծալկարի մութ ուժերը չուզեցին կատարուած իրողութեան առջեւ խոնարհիլ եւ նոյնիսկ վատարար դիմում ըրին Արաքլիի առաջնորդարանին, որպէս զի բոնի յափշտակեմ Նազուր իր օրինաւոր ընկերակցին բովէն եւ յանձնեմ ապօրէն երկան ձեռքը» (101): Արտաքին լրջութիւնը այս դէպքում ոչ միայն չի մեղմում, այլեւ, ընդհակառակն, աւելի է սրում սարգազմի հասնող հեզմանքը: Եւ ո՞րք է երեւոյթների ընկալման ու գնահատման փանջունիական չափանիշը. առեւանգող, գող ու անբարոյ Սմեց Վարդանը՝ «օրինաւոր ընկերակից», իսկ Նազուրի օրինական ամուսին Խեչոն՝ «ապօրէն երկի», Վարդանի դատապարտելի արարքը՝ արդարացի եւ օրինակելի ... Սա, ինչ խօսք, երգիծելի է, եւ օտեանական ծաղրը՝ խորապէս հասկանալի: Բայց սա միեւնոյն ժամանակ ողբերգական է, որովհետեւ այսպէս թեթեւամտօրէն ծանր հարուած էր հասցում հայ ընտանիքի եւ հազարամեակներով սրբագործուած բարոյական նորմերին:

Փանջունին եւ Սարսափունին խորթ եւ օտար մարմին էին հայկական միջավայրում, ուր նրանց իրաւացիօրէն անուանում էին խառնակիչ եւ խոռվարար: Միջավայրը ըստ հնարաւորին դիմադրում էր, հակահոսանք ստեղծում նրանց դէմ, բայց նրանք գործում էին «Մեմօ օրէնք ենք եւ մեզմէ դուրս ամէն ինչ ապօրէն է» սկզբունքով: Կնոջ ազատագրութեան խնդիրը նրանք շահարկում էին, գերազանցապէս արծարծում խժոժութիւններ առաջացնելու, դասակարգային պայքարը թեժացնելու նպատակով: Իրենց իւրացրած դասակարգային պայքարի եւ

քաժանումների տեսութեան մէջ նրանք կատարեցին չտեսնուած ու չլսուած գիտ: Վասպուրականում յայտնաբերեցին կանանց դասակարգ եւ հրահրեցին նրա պայքարը տղամարդկանց դասակարգի դէմ: Նորսերնդեան եւ Ազատութեան խմբակցութիւնների առկայութիւնից օգտուելով եւ հենց նրանց աջակցութեամբ կազմակերպեցին մի «ցնցող երեւոյթ»՝ անդրանիկ Բաղդասարեանի ամուսնութիւնը հայ իրականութեան մէջ: Սրանով չքաւարարուելով՝ հենց Ծննդի խթման գիշերը, եկեղեցում, ժամերգութեան պահին, մի որոտածայն հառով «էմանսիպացիայի առաջնալ» Սարսափունին առաջադրում է ազատ կենակցութեան իր «տեսութիւնը»՝ վկայակոչելով Բիրմայի օրինակը, ուր ամուսնութիւնը բազմայր է, առաջարկում է թօթափել ամուսնական շղթաները եւ ապահովել կնոջ լիակատար ազատութիւն: Բայց ժամերգութեան եկած բազմութիւնը, չկարողանալով հանդուրժել ինքնակոչ դասախօսի անպատկառ արտայայտութիւնները, արարողութեան խանգարումը, ծածկելով է լոնցնում խանգարիչ հոռետորին: Նոյն պահին Փանջունին իր ընկերոջն օգնութեան չի հասնում, այլ մեկուսի խորհում է այն ժողովրդացուէր հերոսների մասին որոնք չհասկացուելով նոյն ժողովրդի կողմից՝ արժանանում են նրա պատիժներին ու հալածանքներին: Իրեն եւ Սարսափունուն էլ նա այդպիսի ժողովրդացուէր հերոս է համարում, որին, սակայն, չի հասկանում եւ չի գնահատում «ապերախտ» ժողովուրդը: Ի դէպ, Օտեանը դիպուկ է նկատել Փանջունիատիպ կուսակցականին քնորոշ մի կարեւոր հանգամանք եւս. նա, այդ կուսակցականը, միմիայն դեկավարել գիտի, գիտի կազմակերպել, զօրացնել հակառակորդ ուժերին եւ իրար դէմ դուրս բերել, իր կուսակիցներին, իր գաղափարական ազդեցութեանը ենթակայ մարդկանց դուրս

բերել վնասական կոուի եւ այդ նակատագրական պահին լքել իւրայիններին ու մտածել միմիայն իր անձի ապահովութեան մասին: Ծապլվարում Փանջունին հենց այդպէս է վարում:

Քրդերի յարձակման օրը նա մի կատաղի «դասակարգային կոու» էր հրահրել, միմեանց դէմ դուրս բերել ծապլվարի ընդդիմադիր ուժերին, իսկ Աւօն երգում էր ազատագրական պայքարի մարտական երգերից մէկը՝

«Կռուցե՛ք, տղերք, կռուցե՛ք Բաշ-Բաշ, Անվեհեր կանգնած թշնամու առաջ ...»

Այսինքն՝ փանջունիականները ծապլվարի իրենց համագիւղացիների, իրենց ազգակիցների դէմ կուում էին այնպիսի ոգեւորութեամբ, ասես դարաւոր ոստիկ դէմ էին կուում անձնուրացօրէն: Բայց հենց այդ պահին յարձակում են ֆրդերը, սկսում է կատաղի հրացանագութիւն, եւ այդ նակատագրական պահին, տեսէ՛ք, Փանջունին ինչպէ՛ս է վնասում իր անելիքը. «Մի ուժգին հրացանագութիւն լսուց. Ռէս Սերգո վատաբար փռուցաւ գետին. մեր Բաշ ընկեր Աւօ եւս առիւծի պէս ընկաւ: Նրկու՛մ ալ մեռած էին: Մոմեմտը կրիտիկական էր. ես շտապեցի դէպի եկեղեցի, մտայ ներս, դիմեցի դէպի խորանը, որու ետեւ գտայ մի ինչ-որ նկուղ, վերցրի կափարիչը եւ ծածկուցայ հոն՝ կափարիչը վերստին գոցելով: Դասնչորս ժամ մնացի այդտեղ, անախորժ դրութեան մէջ:

«Նրբ ամէն աղմուկ դադրեցաւ եւ վստահ եղայ թէ Քոմրաշի ֆրդերը մեկնած էին, դուրս ելայ թափստոցէն» (107-108): Վնասում էլ նոյն կերպ է վարում: Իր գաղափարական ընկերոջը, կուսակցին, նրա դէմ ըմբոստացած ժողովուրդը ծեծում է, սակայն Փանջունին Սարսափունուն օգնելու, փրկելու փորձ անգամ չի անում:

Իրենց ճախողումների համար

փանջունիները միշտ գտնում են արդարացում եւ մեղաւորներ՝ իրենցից դուրս: Իրենմ միայն նուիրեալներ են, գաղափարական ազնիւ պայքարի մարտիկներ, իսկ ժողովուրդը, որ հասկանում է իրենց շահատակութիւնները եւ հնազանդութեամբ չէ ենթարկւում, անհասկացող է, իր լաւը չգիտակցող: Ահա այս պատճառով է, որ Փանջունին իրեն եւ Սարսափունուն համեմատում է Իրսենի հերոս դուրսը Շտոկմանի եւ Արիստոտելի հետ: Որո՞նք իրենց անձնուէր գործունէութեան համար փոխանակ գնահատուեալ, հալածանք ու նախատիք էին ստանում իրենց ժողովրդից կամ դատապարտում էին ոստրէվնոով: Իր այս խորութիւնների մէջ «մի անկիւնի խորը նստած», նա հանգիստ լսում էր, թէ ինչպէս են ծնւում Սարսափունուն, լսում էր վերջինիս օգնութեան կանչերն ու ցաւի աղաղակները, բայց տեղից չէր շարժւում: Յամարձ իրեն չծնծե՛ն: Վերջապէս նա որոշում է շտապել ծնծուած ընկերոջ մօտ այն ժամանակ միայն, երբ աղմուկը դադարել էր արդէն, եւ ընդհատուած ժամերգութիւնը՝ վերսկսուել: «Այն ատեն խորհեցայ, որ պէտք էր օգնութեան հասնիլ մեր տարաբախտ ընկերոջ եւ թոյլ չտալ որ նա վատերու ձեռք ալդպէս ծնծի ու նախատիքի ենթարկուի» (171): Եկեղեցուց դուրս գալով՝ փողոցի մի անկիւնում նա հանդիպում է ցաւից աղիողորմ հեծկլտացող իր ընկերոջը, եւ զանշտական այն է, որ վերջինիս կրած ծնծ ու ջարդն էլ համարում է փառաւոր յաղթանակ. « - Այսօր մի գաղափարային փառաւոր յաղթանակ տարիր, որու համար ապագան երախտապարտ պիտի մնայ քեզ - ըսի, մեր սիրելի ընկերոջ նակատը համբուրելով: Նա համեստութեամբ պատասխանեց. - Դա ոչինչ, խնդրեմ մի քիչ ջուր: (171):

Փանջունին եւ Սարսափունին գաղափարական նոյն խմորից են հունցուած: Սարսափունին նոյնպիսի մտազար է,

ինչպէս փանջունին: Այդ անխնայ ծնծից յետոյ էլ նա չի խրատւում, գիշերային իր գառանցանքների մէջ նա շարունակում է ընդհատուած դասախօսութիւնը Ֆիջիի, Սումատրայի, Նումբայի եւ խաղաղօվկիանոսեան այլ կղզիների բարբերի, նիստուկացի, ամուսնական, ընտանեկան եւ ընկերային յարաբերութիւնների մասին՝ «հիմնուելով միմիայն փաստացի իրողութիւնների վրայ»: Արանց օրինակով էր ձգտում յեղափոխել հայ ընկերային կեանքը՝ առանց հաշի առնելու ազգային առանձնայատկութիւններն ու ժողովրդի կամքը:

Փանջունին եւ Սարսափունին կատարեալ պատուհաս էին ժողովրդի համար. իրենց գործունէութեամբ նրանք միայն աղէտ են բերում ժողովրդին, խարխում նրա համախումբ միասնութիւնը: Ցանկացած պահի, եթէ կուսակցական շահը պահանջի, նրանք պատրաստ են համագործակցել նրա արիւնարբութշնամիների հետ անգամ եւ դա էլ ներկայացնել իրրեւ ժողովրդանուէր ու ազգափրկիչ գործ: Եթէ Աւիս Նուրիջանեանի, Գեորգ Աթարբեկեանի եւ ուրիշ նմանատիպ հայ գործիչների օրինակը չըբաւարարի, կարելի է յիշել ւելի թարմ օրինակ՝ Լիտւայի, այսպէս կոչուած, Ազգային փրկութեան կոմիտէն, որը լիտական ժողովրդի դէմ կազմակերպեց Վիլնիւսի յունուարեան արիւնայեղութիւնը: Սակայն դիմենք վէպի փաստերին:

Վասպուրականում Փանջունին եւ Սարսափունին գործում են ճիշտ նոյն կերպ: Նրանց համար Վասպուրականի հայութիւնը արժէք չունի, իսկ եթէ ունի, ապա այնքան, որ կարողանան նրա վրայ փորձարկել իրենց ընկերվարական տեսութիւնը: Նրանց համար Վասպուրականի հայութիւնը միայն իրենց հատուկեմտ համակիրներն են, իրենց նման գաղափարագարներն ու իրենց ազդեցութեան տակ ընկածները: Իսկ մնացած ազգաբնակչութիւնը, որ չի

ընդունում իրենց, ենթակայ է դաստիարակման՝ ամենատարբեր միջոցներով ու եղանակներով, ընդհուպ մինչև բռնությունն ու ջարդը, թուրքերի ու ֆրդերի սպառնալիքը: «Մի լաւ ջարդ նրանց կը զգաստացնի - կ'ըսէր անցած օր ընկեր Սարսափունի» (160):

Փանջունին իմեն էլ չի խորշում Վասպուրականի հայութեանը ֆրդերի ու թուրքերի միջոցով «դաստիարակելուց»: Երբ նա ինքնապաշտպանութեան համար գէնք հայթայթելու պատրուակով դրամ հանգանակելու առաջարկ է անում, վանեցիները ոչ թէ հրաժարում են դրամ տալուց, այլ դնում են մի էական ու սկզբունքային պայման՝ դրամ կը հաւաքեն բոլոր հայ ֆաղափական կուսակցութիւնների միաւորման դէպքում: Այս արդարացի պահանջը, սակայն, Փանջունուն զրկում էր միայն իր կուսակցութեան համար դրամ հաւաքելու հնարաւորութիւնից, ուստի այն համարում է, մեղմ ասած, անընդունելի. «Այդ կեղտոտ արարածները չհամարձակեցան բացէ ի բաց մերժել մեր պահանջումները, բայց դիմեցին մի ֆիզիկական ստոր միջոցի:

- Մենք յօժարակամ կը վնարենք գէնքի համար պէտք եղած դրամը - պատասխանեցին - բայց նախ՝ հարկ է որ բոլոր կուսակցութիւնները միանան եւ համերաշխ գործեն:

- Ի՞նչ կուսակցութիւններ - հարցուցի զարմացած:

- Արմենական, Հնչակեան եւլն. պատասխանեցին անամօթաբար, միայն այդ պայմանով կու տանք, եթէ ոչ՝ տասը փարայ չենք վնարեր:

- Բայց մենք ձեր աղտոտ էութիւններու պաշտպանութեան համար է, որ գէնքի դրամ կը պահանջենք, գոչեցի» (115):

Վերջին արտայայտութեամբ Փանջունին խնամով ֆողարկում է իր բուն նպատակը՝ միայն իր կուսակցութեան համար դրամ հաւաքելը, եւ տեղն ու տեղը

առաջարկում միւս կուսակցութիւնների համար անընդունելի պայմաններ. հանգանակութեան համար ժողովողին պիտի տրուի բոլոր կուսակցութիւններից միասնական դիմում, սակայն դրամը պիտի պահուի միայն իր կուսակցութեան մօտ, պէտք է զինուեն միայն իր կուսակցութեան մարտական խմբերը, իսկ միւսներին տրուում է իրենց միջոցներով անջատ մարտական խմբեր կազմելու իրաւունք: Իսկ երբ միւսները պահանջում են հաւասարութիւն եւ փոխադարձ հսկողութիւն, Փանջունին դա համարում է «յիմարական պահանջ»: Բնական է, որ վանեցի հարուստները այսֆանից յետոյ պիտի հրաժարուէին դրամ տալուց: Ահա այս պահին էլ դրսեւորում է Փանջունու իրական էութիւնը: Նա յղանում է մի դաժան ծրագիր. դիմում է թուրք ջարդարարների օգնութեանը՝ իբր թէ «դաւանան պուրժուաներուն» դաս տալու համար. «Մի երեկոյ դիմեցի 96ի ջարդերու կազմակերպիչ թուրք խուժանավար Համուտ Աղեմց Հասանին եւ առաջարկեցի որ, եթէ կարելի էր մի փոքր, այսպէս ասած՝ մի աննշան ջարդ կազմակերպէր, սարսափ տալու համար հայ չոջերուն: Դա պիտի լինէր մի պարզ առողջապահական արիւնառութիւն որ իբր անհերքելի փաստ պիտի ծառայէր գէնքի համար դրամ հաւաքելու հարկաւորութեան մասին» (117): Իսկ թուրք խուժանավարը, որ շատ էլ շոյուած էր այդ անակնկալ «առողջապահական արիւնառութեան» առաջարկից, ցաւով մերժում է նրան՝ գտնելով, որ ժամանակը յարմար չէ. սահմանադրական խանդավառ օրեր էին, թուրքերն առերեւոյթ զոյում էին նախկին ջարդերի համար, ժողովուրդների եղբայրութեան, հաւասարութեան ու համերաշխութեան կոչեր էին հնչում ամէնուր: « - Յարմարատեմին ես միշտ պատրաստ եմ գործելու - եզրակացուց Համուտ Հասան» (117):

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Նիկողոս Սարափեանի «Վեցնեմի անտառ»ի
ֆրանսերեն թարգմանութեան առթիւ)*

Ատենէ մը ի վեր կը մտադրէի մեր նորագոյն թարգմանական գրականութեան իրականացումներէն ներշնչուած կարգ մը մտածումներ գրի առնել: Նախապէս ներկայացած պատեհութիւնները՝ դժբախտաբար չէի կրցած օգտագործել: Այժմ վերջապէս կ'իրականացնեմ ծրագիրս մէկ նոր իրականացման շնորհիւ, որ Նիկողոս Սարափեանի «Վեցնեմի անտառ» երկին ֆրանսերէն թարգմանութիւնն է, նուրբ հասկացողութեամբ կատարուած՝ Անահիտ Տրեգեանի կողմէ, հմտօրէն ներկայացուած Մարկ Նշանեանի նախաբանով, լոյս ընծայուած՝ Editions Parentheses-ի Collection Armenies շարքին մէջ:

Թարգմանական գրականութիւն: Ահա նիւզ մը որ տրամաբանօրէն՝ խոստմնալից ապագայ պէտք է ունենայ Սփիւոֆի մէջ:

Զեմ ակնարկեր օտար գրական երկերը հայերէնի վերծանելու գործունէութեան, որ Սփիւոֆի ներկայ իրականութեան մէջ գրեթէ չի կիրարկուիր դժբախտաբար: Անոր վերընծիւղումի բնական միջավայրը Հայաստանը միայն կրնայ ըլլալ՝ գրական կեանքի բազմակողմանի զարգացման

համար բնականոն պայմաններու ստեղծումէն ետք:

Խօսքը կը վերաբերի հայերէնէ դէպի օտար լեզու մը գրական վերծանումի նիւղին, որ միջազգային թէ ներազգային մակարդակներու վրայ չափազանց կարեւոր ազդակ մը կը հանդիսանայ: Մեր գրականութիւնը ոչ-հայ ընթերցողներուն ծանօթացնելու միակ միջոցը այս ըլլալէն զատ՝ իրատեսութիւնը կը պարտադրէ ընդունիլ, թէ սփիւոֆահայ նոր սերունդին մեծամասնութիւնը մեր գրականութեան հաղորդակից դարձնելու գլխաւոր միջոցը եւս այս մնացած է: Հանգամանք մը որ ուզենմ-չուզենմ առաւել եւս պիտի շեշտուի տարիներու ընթացքին: Բնաւ պիտի չուզէի, որ այս իրատես հաստատումը ընկալուէր որպէս գուրգուրանքի նուագում հանդէպ հայագիր հեղինակներուն:

Որքան ալ գօտեպնդիչ ըլլայ Սփիւոֆի մէջ հայկական նախակրթարաններու եւ միջնակարգ վարժարաններու գոյութիւնը, իրականութիւնը այն է, որ այս հաստատութիւններու մեծամասնութեան ներս հայերէնը կ'ուսուցանուի որպէս երկրորդ լեզու: Անոնց ծրագիրները ինչքան ալ ընդգրկեն

հայ գրականութեան ընդհանուր ծանօթացումը եւ որոշ թիով երկերու ընթերցումը, շրջանաւարտներու կարեւոր մեծամասնութեան մը համար հոն ալ կանգ կ'առնէ հայերէն գիրք կարդալու անհրաժեշտութիւնը: Ուսումնական կամ արհեստագիտական յաջորդ հանգրուաններուն՝ հայերէն գրքի ու գրականութեան հետ կապը կ'ընդհատուի յաճախ՝ աշխատանքային նոր պարտադրանքներու պատճառաւ:

Կարգ մը երկիներու դպրոցական կամ պետական ֆննութեանց ընթացքին հայերէնը որպէս երկրորդ կամ երրորդ լեզու ներկայացնելու հնարաւորութիւնը դրական երեւոյթ մըն է անշուշտ: Սակայն այս առիթը օգտագործողներու համեմատութիւնը առայժմ անլի նուազ է, քան՝ չօգտագործողներունը:

Սփիւռքի հայաշատ ֆաղաֆներէն ոմանց մէջ կան նաեւ համալսարանական մակարդակի հայագիտական կեդրոններ: Արձանագրուած ուսանողներու ճշգրիտ վիճակագրութիւնը թէեւ չունիմ, բայց մօտաւոր (լաւտես) հաշիւով՝ ասոնց ընդհանուր թիւը հազիւ թէ 150-էն 200 ըլլայ:

Յամենայնդէպս՝ իրականութիւնը այն է, որ արեւմտեան երկիրներու մէջ վերոյիշեալ բոլոր մակարդակներու վրայ հայերէն սորված մեր մանուկներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն ընդհանուր թիւը շատ անլի նուազ է, քան՝ մեր այրութեան իսկ չգիտցողներունը:

Եւ վերջապէս՝ հանոյքի համար հայերէն գիրք կարդացող երիտասարդներու համեմատութեան մասին նախընտրելի է չխօսիլ:

Կացութիւնը այս ըլլալով հանդերձ՝ սխալ պիտի ըլլար հայկականութեան որպէս միակ չափանիշ նկատել լեզուի գիտութիւնը կամ գործածութիւնը: Այսօր մեր արեւմտեան գաղթօջախներուն մէջ օրէ օր

կ'անի թիւը երիտասարդներու, որոնք հայերէն չեն խօսիր ու կարդար, բայց եւ այնպէս կապուած կը զգան հայութեան: Այս երեւոյթը բացառիկ թափով դրսեւորուեցաւ Հայաստանի վերջին երկրաշարժէն եւ անկախացումէն ի վեր: «Հայութենէ կտրուած» ֆանի՝ երիտասարդներու դէպի հայութիւն հոգեկան վերադարձին ականատես կ'ըլլանք ամէն օր:

Այժմ՝ անոնք կարիքը կը զգան իրենց գիտցած օտար լեզուով ծանօթանալու հայ մշակոյթին: Կասկածէ վեր է, որ անոնցմէ ոմանց պարագային՝ մշակոյթի նանաչումը պիտի ստեղծէ նաեւ լեզուն սորվելու գիտակից փափաքը:

Այսպէս՝ վերոյիշեալ այլազան տուեալները համադրելով՝ կը վերադառնամ այն հաստատումին, թէ մեր ներկայ իրականութեան մէջ չափազանց կարեւոր դեր վերապահուած է հայերէնէ-օտար լեզուներ բարձրորակ թարգմանական նիւղին:

«Բարձրորակ թարգմանութիւն», այսինքն՝ օտար լեզուին ճշգրիտ նրբերանգներով հարազատօրէն վերարտադրել հայերէն բնագրին էութիւնն ու ոգին, մոռցընել տալով թէ հրամցուածը թարգմանութիւն մըն է:

«Բարձրորակ թարգմանութեան» այս յատկանիշը կը պատշաճի ոչ միայն «Le Bois de Vincennes»-ի այլեւ Ֆրանսայի մէջ 1986էն ի վեր դանդաղ բայց հետեւողական ընթացքով դրսեւորուած հայերէնէ ֆրանսերէն թարգմանական գրականութեան նոր ալիքին, որուն յառաջապահ դէմքը Պիեռ Տէր-Սարգիսեանը հանդիսացաւ՝ Կոստան Զարեանի «Նաւը Լերան վրայ»-ի սֆանջիկ թարգմանութեամբ, որ 1986ին հրատարակուեցաւ աշխարհա-ծանօթ Editions du Seuil-ի կողմէ:

Ըստ ունեցած տեղեկութիւններու՝

այս հրատարակչական տունը կը մտադրէր շարունակել հայ գրականութեան այլ կտորներու ալ լոյս ընծայումը, պայմանաւ որ առաջին փորձը արդիւնաւետ ըլլար: Ըստ երեւոյթի՝ ակնկալուած արդիւնքը չստացուեցաւ, քանի որ Seuil հրատարակչականը այնուհետեւ չգրադուեցաւ հայերէնէ թարգմանութեան հարցով:

Սակայն Պիէռ Տէր-Սարգիսեան անվատօրէն շարունակեց իր շնորհակալ աշխատանքը՝ իրեն յատուկ հմտութեամբ, արհեստավարժութեամբ եւ քծախնդրութեամբ իրականացնելով նորանոր թարգմանութիւններ, ինչպէս՝ Տիգրան Զեօկիւրեանի «Վանքը», Գուրգէն Մահարիի «Ծաղկած փշալարերը», Եղիշէ Զարեանի «Յիշողութիւններ Երեսանի ուղղիչ տնից»ը, իսկ այժմ լծուած է Հրանտ Մաթեոսեանէն պատմուածքներու փունջի մը թարգմանութեան:

Presses universitaires de France.

Վերոյիշեալներէն երկուքը լոյս ընծայուած են Մարտիլի «Editions Parentheses»-ի կողմէ, որ Ֆրանսայի մէջ վեր կը պահէ հայ թարգմանական գրականութեան ջահը, հետզհետէ հրատարակած ըլլալով նաեւ այլոց կողմէ պատրաստուած որակաւոր թարգմանութիւններ Աւետիս Ահարոնեանի, Պարոյր Սեւակի, Դանիէլ Վարուժանի երկերէն: Ասոնց վրայ է, որ այժմ կ'աւելնայ Նիկողոս Սարաֆեանի «Վենսէնի անտառ»ին նուրբ թարգմանութեան հրատարակութիւնը, որուն ընթերցումը գեղարուեստական գոհացումի աղբիւր մը կը հանդիսանայ ընթերցողին համար:

Ինչ կը վերաբերի Editions Parentheses-ին, կ'արժէ ամէն ձեւով փաջալերել զայն, որպէս զի շարունակէ եւ հետզհետէ ընդլայնէ հայ գրողները ոչ-հայախօս ընթերցողներուն մատչելի դարձնող իր օգտաշատ առաքելութիւնը:

ՇԱՔԷ ՄԻՆԱՍԵԱՆ

* Nicolas Sarafian, Le Bois de Vincennes, Traduit de l'armenien par Anahide Drebian. Presentation de Marc Nichanian, 1993, Editions Parentheses, Collection Armenies, 92 p. Diffusion:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՅԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԽՕՍԲԷՆ

ՊԱՀԱՆՋՈՒԱԾ

ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Քանի մը թելադրութիւններ միայն կ'ընեմ իբրեւ կարեւոր յատկութիւններ յանպատրաստից խօսքի:

Ա.- Խօսքի նշգրտութեան, կանոնաւոր ընթացքի: Խօսքը պէտք է ունենայ միութիւն մը մէկ ծայրէն մինչեւ միւսը: Այս յատկութիւնները կը սպասուին ոչ միայն ատենաբանութիւններէ, այլ նաեւ խօսակցութեանց ալ մէջ: Պէտք է տէր ըլլալ անձին, թոյլ չտալ որ յուզումը, այդ գէշ յուզումը փոքորիկ հանէ մեր մէջ ու ամէն բան իրար խառնէ: Կայ աղէկ յուզում մըն ալ որ թռիչք կու տայ, բայց այդ ալ մեր ձեռքը չէ, կրնայ գալ եւ չգալ եւ զայն պէտք չէ հաշուի առնել, այլ վստահիլ մի միայն մեր մտքին:

Բ.- Այդ խօսքը պէտք է պատշաճի պարագային, քանի որ պարագան է որ կու տայ մեզի նիւթը:

Գ.- Խօսքը նիւթին պէտք է վերաբերի բայց նիւթին շրջանակին մէջ գիտ մը պէտք է ըլլայ: Ոչ տափակ ըլլալ եւ ոչ պայմանադրական այլ մասնաւոր իտէ մը գտնել, պարագան այդ իտէ-ին կապել եւ անով խօսիլ: Պարագայական նշանաւոր խօսող մը եղած է Թորգոմ Սրբազան որ թէ՛ քնատուր ձիրքը ունէր եւ թէ վարժութիւնը, որով միշտ բան մը կը գտնէր ըսելիք: Ամէն հաւաքական առիթ առօրեայէն վեր ելլել մըն է: Ի՞նչ է անունի օր մը: Բաղձանք մը որ այդ անունին տիրողը տիրօջը պէս ըլլայ: Գիտի համար կանոն չկայ, պէտք է գիտնալ որ կը սպասուի գտնել մը, հետեւաբար պէտք է փնտռել: Գիտ ընելու համար պարագային մէջ պէտք է մտնել. բաց սիրտ, հաղորդական սիրտ պէտք է ունենալ, որովհետեւ մեծ

մտածումները սրտէն կու գան ըսուած է:

Դ.- Այդ պարագայական խօսքը պէտք է ըլլայ պարագային յարմար թօնի մը մէջ, ինչպէս եղանակ մը որ Do Majeur-ի մէջ է: Ամէն հաւաքոյթ որոշ tonalite-ի մը կը պատկանի, ինչպէս musique-ի մէջ շատ մը նօթեր կը բերուին. բայց՝ նոյն tonalite-ին մէջ: Ան որ կերուխումի ատեն յուղարկաւորութեան բաներ կ'ընէ՝ «չերթար», «տեղին չէ» կ'ըսենք:

26 Դեկտ. 1942

«ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵՆԷ ՄԸ ԵՏԲ ԿԱՐԾԻՔ ՄԸ»

Ամէն արուեստի գործի արժէքը խորքին ծաղկած ըլլալն է ձեւին մէջ, նիւթի մը transfigure ըլլալն է: Գրականութիւնը դէպի երկու բեռներ ձգտուած է, ոմանք դէպի մին կ'երթան, ուրիշներ դէպի միւսը: Մին՝ poesie pure, միւսը՝ Pure Prose: Poesie Pure-ի մէջ խորքը ձեւ առած է մինչեւ ձայնին մէջ: Ձեւ կրնար կարգաւ առանց այդ ձայներով այդ բառերուն: Ջուտ արձակ՝ ուր բառերը իրենց ձայնով մաս չեն կազմեր, այլ նշաններ են թելադրող, ինչպէս գիրքերուն ուղադրութիւն չենք ըներ եւ անոնց պարզապէս թելադրողներն են: Բառերը կը ջնջուին իրենց իմաստը ի յայտ բերելու: Poesie Pure-ի մէջ տեսակ մը երաժշտութիւն կայ «De la musique avant toute chose» ըսած է Վերլեն: Բայց արձակները ո՞ն չունի՞ն: Անոնց ո՞ն իտէ-ներուն ընդելուզման մէջ է: Ձեւը մաս չը կազմեր արտայայտութեան: Poetsie Pure-ը որքան արժէքաւոր է, այնքան անթարգմանելի է, իսկ գործ մը որքան դէպի արձակ գացած է այնքան թարգմանելիութեամբ արժէք կը ստանայ:

14 Նոյ. 1942

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՄԷՅԷՆ ԵՒ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայագիտական աշխարհը հանդիսատրապէս կ'ոգեկոչէ մեծանուն հայագէտ եւ դարուս խոշորագոյն լեզուաբան՝ Անթուան Մէյէի ծննդեան 125 եւ մահուան 55 ամեակները:

Մէյէի գիտական գործունեութիւնը անձայրածիր է եւ կարելի չէ սահմանափակել զինք այս կամ այն բնագաւառի մէջ: Մէյէն միաժամանակ լեզուաբան էր, լեզուագէտ, քերականագէտ, բառագէտ, համեմատաբան, ստուգաբան:

Մէյէի հայագիտական ուսումնասիրութիւնները ծաւալուն են եւ իրստ ծանրակշիռ: Ներհուն գիտնականը անդրադարձած է հայագիտութեան վերաբերող գրեթէ ամէն մէկ կարեւոր հարցի: Անոր յօդուածները կ'ընդգրկեն հայոց լեզուի հնչիւնաբանութիւնը, բառագիտութիւնը, ձեւաբանութիւնը, շարահիւսութիւնը: Ասոնց առընթեր հեղինակած է բազմաթիւ գիրքեր, ստորագրած բանասիրական արժեքաւոր յօդուածներ, բարբառագիտութեան ու հայոց պատմութեան մասին անթիւ գրութիւններ եւայլն:

Համառօտ ակնարկ մ'իսկ Մէյէի գիտական վաստակին վրայ կու գայ փաստելու անոր հմտութիւնն ու մեծութիւնը լեզուաբանութեան մէջ: Սոյն յօդուածով ամենեւին մտադիր չենք ներկայացնելու Մէյէն իր ամբողջական արժանիքներով: Այստեղ մենք պիտի անդրադառնանք լոկ հայերէնի ուղղագրութեան բարեփոխման մասին իր տուած շինիչ գաղափարներուն եւ բարի թելադրութեան:

Արեւելահայ ուղղագրութեան փոփո-

խութեան պատմականը չէ որ պիտի ընենք, վասն զի այդ մասին առատօրէն գրուած է: Մեզի հետաքրքրողը այն է թէ ինչպիսի մօտեցում ցուցաբերած են օտար լեզուաբաններ եւ հայագէտներ այս հիմնական փոփոխութեան հարցի կապակցութեամբ:

Հայերէնի ուղղագրական բարեփոխութեան յամաժողովին կողմէ Մանուկ Աբեղեան, ի թիւս այլոց, նամակ մըն ալ յղած էր Մէյէին՝ շօշափելու եւ իմանալու անոր կարծիքը այս առնուելիք պատմական որոշման շուրջ: Դժբախտաբար, մենք ի ձեռին չունինք այդ նամակին բովանդակութիւնը: Բայց դժուար չէ կռահել այն, որովհետեւ մեր տրամադրութեան տակ ունինք Աբեղեանին ուղղեալ պատասխան-նամակը, գրուած 15 Հոկտեմբեր, 1913 թուականին: Ի պատասխան վերջնոյս նամակին, Մէյէն համեստօրէն կը խոստովանի որ «օտարագէին չի կրնար այսպիսի խնդիրներուն միջամտել»: Մէյէն չակնարկեր անշուշտ խնդրին լեզուաբանական կողմին, այլ՝ ազգային-մշակութային անհղութեանց եւ սրբութեանց փոփոխութեան եւ ոտնակոխման:

Յարգելի գիտնականը չուզեր միջամուխ ըլլալ այնպիսի նուրբ ու զգայուն հարցի մը որ վերջիվերջոյ կապուած է ազգային զգացմունքներու եւ նուիրականութեանց հետ: Վերոյիշեալ խօսքէն յայտնի կը դառնայ նաեւ որ ինք չի փափաքիր պատասխանատու, հետեւաբար եւ հաշուետու ըլլալ ապագայ հայ սերունդին:

Փորձառու ու փափկանկատ

հայագետը հեռուէն (Փարիզէն) կը զգար եռեւեփը հայ մտաւորականներուն քաղաքական գործիչներուն՝ իրրեւարդինքն զանազան իդոներու գործադրման եւ ձգտումներու քաւարարման:

Մէյէն իր սուր հոտառութեամբ կը զգար թէ տիրող կացութիւնը պայթուցիկ է եւ թէ հին, պատմականօրէն նուիրագործուած Մեսրոպեան ուղղագրութիւնը կը գտնուի անդունդին եզրին: Քաջ գիտակցելով իրերու դրութեանը եւ ահաւոր կացութեանը եւ Հայոց լեզուին անոնց բերելիք աղիտալի հետեւանքներուն, Մէյէն կը շտապէ աւելցնելու հետեւեալը. «Նս ինծի թոյլ կու տամ միայն նշելու, որ այնպիսի ազգի մէջ, ուր չկայ որոշ ուղղագրութիւն պարտադրելու ընդունակ հեղինակութիւն, ամենախելօք բանը աւանդական ուղղագրութեամբ քաւարարուիլն է»:

Մէյէի այս շատ խելօք ու իմաստուն խօսքերը կը հասնէին ճիշդ ժամանակին, քայց՝ սխալ մարդկանց: Աւանդական ուղղագրութեամբ գոհանալու եւ քաւարարուելու այս խոհեմ պատգամը կամ յորդորը պատահական չէր, այլ հիմնուած էր այլ լեզուներու փորձառութեանց վրայ: Գիտնականը վստահաբար նկատի ունէր նաեւ իր մայրենի լեզուին (Իմա՝ ֆրանսերէնի) ուղղագրական խառնիքադանն ու խիստ շփոթ դրութիւնը: Իր անձնական փորձով գիտէր թէ ֆրանսերէն ուղղագրութիւնը անհամեմատելիօրէն աւելի բարդ է քան հայերէն գիրերուն անհամապատասխանութիւնը ընդհանուր հնչիւնական համակարգին:

Ֆրանսերէնի ուղղագրածներու խառնափնթոր վիճակը, ի շարս այլ լեզուաբաններու, Մէյէին եւս կը մտահոգէր ու կը նեղէր: Լեզուի մը մէջ, ուր միեւնոյն հնչիւնները կ'արտայայտուէին տարբեր միաւորներով եւ գիրերով, օրինակ՝ *ajouter* եւ *agir*, *present* եւ *zebre*,

motion եւ *facon*, *facher* եւ *physique*, *kilo* եւ *presque*, *preux* եւ *de*, եւ կամ՝ միջնատառեր եւ յետնագրեր կորսնցուցած էին իրենց հնչական արժէքը՝ օր. *vie* (վի), *eaux* (օ), *les* (լէ), *aout* (ու), *homme* (օմ), *oeufs* (ֆր.օ), կ'ակնկալուէր որ լեզուաբաններ լուրջ քննարկումէ ետք քարեկարգէին եւ քարտէին ծանր վիճակը: Այս եւ այլ երեւոյթներուն իրագեղ գիտնականը դոյզն չափով իսկ չէ մտածած ու համարձակած որեւէ փոփոխութիւն առաջարկելու ֆրանսական լեզուի կանոնին, որովհետեւ նման թելադրութիւն մը պիտի ստեղծէր քառսային ու անել վիճակ մը լեզուէն ներս:

Մէյէն կը գիտակցէր որ ուղղագրական փոփոխութեամբ պիտի կորսուէր ստուգաբանական դրութիւնը: Այս գիտութեան շնորհիւ է որ կարելի է քառարմատը ճանչնալով ճշդագոյնս ստուգաբանել: Աւանդական ու պատմական ուղղագրութեան խախտումով, հետեւաբար, հիմնայատակ պիտի կործանէր ստուգաբանութիւն կատարելու հնարաւորութիւնը եւ կարելիութիւնը: Բացի ասկէ, պէտք է ստեղծուէին ուղղագրական կանոններ:

Այն կանոնները որ ի գօրու էին, չեղեալ պիտի համարուէին եւ անոնց պիտի փոխարինէին արուեստական կամ շինծու կանոնները: Կար նաեւ մի այլ կարեւոր հանգամանք որ լրջօրէն պէտք է նկատի առնուէր, այդ՝ աչքը աւանդական ուղղագրութեան վարժուած ըլլալու եւ նոր ուղղագրութեան անընդունակ ըլլալու երեւոյթն էր: Ահա թէ ինչ կը գրէ Մէյէ իր նամակին մէջ. «Ահա 1500 տարիէ աւելի է, որ հայերէնը կը գրուի, եւ հին ու ժժ. դարու քննարկող իրականութիւններն են, որ ազգը պէտք է հաշուի առնէ: Պէտք է որ ընթերցողը շատ անվարժ չգայ իրեն, երբ ուզէ կարդալ քարեփոխութիւններէ առաջ եղած հեղինակներու երկերը»:

Ուղղագրութեան փոփոխութեան «Բարեկարգիչներ», սակայն խցկած իրենց ականջները ի դիմաց այս օգտաշատ խորհուրդներուն, եւ ի բացէ կարծրացուցած իրենց խիղներն ու միտքերը, կը շարունակէին հպատակիլ ի վերուստ իրենց պարտադրուած հրահանգներուն: Այդ օրերուն, Պր. Մակինցեանը եւ իր նմանները, պարպուած ազգային զգացումէ, ուղնուծուծէ ու նկարագրէ, կը շտապէին յայտարարել՝ «որքան շուտ մեր արխիւը նետեմք սահակ-մեսրոպեան անկիւնաւոր տգեղ եւ աչքերի համար վնասակար այրուքէնը, այնքան շուտ կ'ազատուինք Արեղանի ուղղագրութիւնից»:

Մէյէին համար պարզ էր ու յստակ որ «ուղղագրական անիշխանութիւնը» տիրական էր ու յաղթական: Թէկուզ «միջակ» նկատուած գրաբարեան ուղղագրութիւնը աւելի նախընտրելի էր Մէյէի համար, որովհետեւ «բոլորին կողմէ ընդունուած ուղղագրութիւնը աւելի լաւ է, քան ուղղագրական անիշխանութիւնը», կը գրէր ան իր նամակին մէջ:

Մէյէի «ուղղագրական անիշխանութիւն» որակումը նիշդ էր ու տեղին, վասն զի այդ օրերուն մի ոմն՝ Բոգդատիւ կոչեցեալ, տեմդագին գործի լծուած էր մշակելու հայերէնին յարմար նոյնիսկ լատինական այբուրէն: Պատմիչին նման մեմք եւս այստեղ կրնամք բացագանչել՝ «աւա՛ղ, փառացս անցաւորի»:

Հակառակ Մէյէի տուած քարի խորհուրդներուն, անդրդուելի էին տեղական իշխանութիւնները եւ մտաւորականութիւնը: 1922 թուին, Հայաստանի կառավարութեան կողմէ յատուկ որոշումով ընդունուած ու վաւերացուած «բարեփոխեալ» ուղղագրութիւնը իր աննոռնի ու այլանդակ տեսքով շուտով հրապարակ իջաւ եւ լայն տեղ գտաւ մամուլի մէջ: Այսպիսով մեր աննման եւ շաղկապը դարձաւ յեվ, որ յարաբերական դերանունը՝ վոր, յաջողութիւնը՝ հաջողու-

թյուն. յ ձայնորդի գործածութիւնը խիստ սահմանափակուեցաւ, բառավերջի յ գիրը վերացաւ. ye, yo, ya, you հնչիւնները ստանալու համար ե-ի, ա-ի, ու-ի եւ օ-ի (իմա ո-ի) առջեւ գետեղուեցաւ յ ձայնորդը. այսպիսով ստացանք յերր, յաթաղան, յուր, յոթը, յոթնամյա: Արմատական օ գիրը ջնջուեցաւ եւ տեղի տուաւ ո-ի. այսպէս՝ օր - որ, օրուանից - որվանից. օրէնք - որենք, ստրկօրէն - ստրկորեն: հանուեցաւ նաեւ է գիրը. էջ բառը դարձաւ՝ եջ, էութիւն - եություն եւայլն:

Արեւելահայ ուղղագրութեան գործիչները իրենց նորելուկ ուղղագրութեամբ շանքահարեցին արեւմտահայ զանգուածը: Մայրենի լեզուի դէմ գործուած այս ահռելի եւ աններելի ոհմիրը ցնցեց ողջ սփիւտի մտաւորականութիւնը: Տարիներու կատաղի ու անվերջ բանակոյի մը սկսաւ արեւմտահայ ու արեւելահայ մտաւորականներու եւ գործիչներու միջեւ: Աւանդական ուղղագրութեան դէմ այս անտեղի ու սանձարձակ արշաւը չէր արդարանար ոչ մէկ ձեւով: Հին գրութեան կառչողներ (ընդ որս եւ արեւելահայ մտաւորականներ) ոգի ի բոհն կ'աշխատէին, բանիւ եւ գործով, պաշտպանելու հարազատ ու ինքնատիպ ուղղագրութիւնը:

Վեներտիկի Ս. Ղազար կղզիէն Հ. Վարդան Վրդ. Հացունին իմաստուն կերպով դիտել կու տար որ «լեզուն պետութեան մը ստացուածքը չէ, այլ հասարակութեան» («Նրեւանեան ուղղագրութեան դէմ». 1925թ. Վեներտիկ): Պետութեան կողմէ հնարուած ու հովանաւորուած սոյն սեւ ծրագիրը հարկ էր գործադրել անյապաղ: Շփոթութիւն ամենուրեք էր սակայն: Հետգհետ ընդդիմախօսներու եւ հակառակողներու խմբակը մեծցաւ: Զախողութիւնն աներկբայ էր: Արեւելահայ մտաւորականներէն շատեր, իրենք իսկ կը խոստովանէին «նոր ու բարեփոխեալ, ուղղագրութեան բացայայտ աննոռնի-

ուրիշներն ու ձախողությունները: Ստեփանոս Մալխասեանց կը վկայէր որ շատեր չընդունելով նորը, հինը կը գործածէին: Արդարեւ, սկուտեղի վրայ հրամցուած այս նորամուծութիւնը մեծ վիհ մը կը բանար ու անջրպետը հետզհետէ աւելի կ'ընդլայնէր Արեւելահայ ու Արեւմտահայ հատուածներուն միջեւ: Հայոց լեզուն իր դարերու հռչակովն ու մշտական գոյապայքարին մէջ այդքան չէր նսեմացուած ու այլանդակուած որքան կ'ըլլար այդ բարեկարգութեան տարիներուն՝ կարգ մը անպատասխանատու անձանց կողմէ:

1940 թուականին վերստին ֆենարկուեցաւ ուղղագրական հարցը եւ այս առիթով վերականգնուեցան օ եւ է գիրերը: Անոնց կիրառումը դարձաւ աւելի

յանախակի: Արմատական բառերու մէջ անոնք խստագոյնս ցարդ կը պահուին: Նոյն կարգ մը այլ փոփոխութիւններ եւս (ինչպէս՝ վոր - որ, յերթալ - երթալ եւլն):

1940էն մինչեւ այժմ կը գործածուին ներկայ ընդունուած ուղղագրութիւնը:

Այս օրերուն, երբ հայ ժողովուրդը կը ստանայ իր անկախութիւնը, եւ ընդհանուր ձգտում կայ ու փափաք վերադառնալու դէպի մերը՝ հինը, հարագտող, իսկականը, գեղեցիկը, վնիտը, հոգեւորը եւ բարոյականը, տխրութեամբ եւ մեղամաղձոտութեամբ կը վերլիճեմ մեծանուն լեզուաբան Հրաչեայ Աճառեանի խօսքը մեր արեւելահայ ուղղագրութեան դարձի մասին. «Դա մի իտեալ է որին կարելի է ձգտել, բայց ոչ երբեք հասնել»:

ԶԵՆՈՐ ՔԷՆՅ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

•ԳԻՐՔ ԹՂԹՈՑ•. Բայ աստուածաբանական գրականութեան անփոխարինելի հաւաքածոյ մը, մեր հայրապետներու եւ վարդապետներու դաւանաբանական տեսութեանց լաւագոյն արտայայտիչը (Ե-ԺԳդդ.): Փաստօրէն, մեր եկեղեցական հայրերուն մամականին, ուր առկայ է աստուածաբանական-դաւանաբանական զանազան հարցերու նկատմամբ Հայ Եկեղեցիի մնայուն դիրքորոշումը, մասնաւորաբար՝ ընդդէմ նեստորական եւ քաղկեդոնական վարդապետութիւններու, եւ, ի վերջոյ, հայ-լատին միութեանական շարժման առիթով արծարծուած դաւանական խնդիրները՝ գերազահութիւն Հոռովմայ Աթոռի, երկու քննութիւնք, ներգործութիւնք եւ կամք Բրիստոսի, Սուրբ Հոգու ի Հօրէ եւ յՈրդոյ թխումն (Filioque), քաւարան եւ այլն⁶:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Նման նախորդ տարիներուն, այս տարի եւս, Յունուար ամսու վերջին լման եօթնեակը - Կիրակիէ Կիրակի - յատկացուեցաւ Եկեղեցիներու Միութեան աղօթաժողովներու, ամէն երեկոյ տարբեր համայնքի պատկանող աղօթավայրի մը մէջ: Գովելի պարտաճանաչութեամբ մը, Ս. Քաղաքիս Քրիստոնեայ տասնըմէկ համայնքները, բացի Յոյն-Օրթոտոքներէն, բերին իրենց մասնակցութիւնը յիշեալ ԷՔԻԻՄԷՆԻՔ շարժումին:

23 Յունուար, Կիրակի, կէսօրէ ետք ժամը 5ին, բաւական թիով ժողովուրդ, եկեղեցական թէ աշխարհական, տեղացի թէ այցելու, հակառակ ցուրտ օդին եւ վայրին հեռաւորութեան, լեցուցած էին Անկլիկաներու Սէյնթ Ջօրն (Ս. Գեորգ) եկեղեցին, որ քաղաքիս միջնամասէն բաւական հեռու կը գտնուի, Դամասկոսի դռնէն հիւսիս: 50 վայրկեան տևող յայտագիր մը իրագործուեցաւ, Անգլիկները ըլլալով տիրապետող լեզուն: Անկլիկան Եկեղեցւոյ Կանոնիկոսներէն մէկը ճառ մը խօսեցաւ: Նոյն աղօթքներ եւ երգութեան տաղեր ընկերակցութեամբ երգեհոնի:

24 Յունուար, Նրկուշաբթի, նոյն ժամուն, Լատինաց Պատրիարքարանի փառայեղ տաճարին մէջ ալ ներկայ էր նոյնքան բազմութիւն, որոնց կարգին հոգեւոր պետեր, առաջնորդներ կամ անոնց ներկայացուցիչները: Պատրիարք Միշէլ Սապպահ ճառով մը (Անգլիկներէն) շեշտեց սիրոյ, համագործակցութեան եւ անկեղծ աղօթքի դերը՝ իբր շաղախ օր մը իրագործուելիք միութեան: Ներկայ էին մեր կողմէ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արքեպս. եւ Հոգշ. Տ. Գուսան Վրդ.:

25 Յունուար, Նրեքշաբթի, դարձեալ

նոյն ժամուն, Լուսերականներու եկեղեցւոյ մէջ էր հաւաքոյթը (մօտիկը Ս. Յարութեան Տաճարին): Գերմաններէն, Անգլիկներէն ու Արաբներէն էին տիրապետող լեզուները յայտագրին, ուր կային նաեւ կրօնական մեղեդիներ, ընկերակցութեամբ երգեհոնի: Հիւրասրահին մէջ, ապա, ուրիշ տարիներու նման, հաց եւ զինի հրամցուեցաւ ներկաներուն:

26 Յունուար, Չորեքշաբթի, նոյն ժամուն, քաղաքիս արեւմտեան (Հրէական) բաժնին մէջ գտնուող Նթովական կլորիկ (ուրոյն ճարտարապետութեամբ շինուած) եկեղեցին հիւրընկալեց աղօթաժողովը: Նթովական միալար եկեղեցական երաժշտութիւնը թէեւ քիչ մը ձանձրացուցիչ՝ այսուհանդերձ ներկայ հոգեւորականներն ու աշխարհական ժողովուրդը սպասեց մինչեւ վերջը յայտագրին, որուն աւարտէն քիչ առաջ այլ Եկեղեցիներու հոգեւորականներ ըրին իրենց մայրենի լեզուներով Ս. Գրական ընթերցումներ:

27 Յունուար, Հինգշաբթի, կէսօրէ ետք ժամը 4ին, Սիոն լեռան վրայ գտնուող Վերջին Ընթրեաց սրբավայրը ամբողջովին - մինչեւ արտաքին գաւիթը՝ հակառակ ցուրտին - լեցուած էր տեղացի եւ այցելու հաւատացեալներով: Այլ համայնքներու ներկայացուցիչներու կարգին, կար նաեւ խումբ մը նորադարձ Հրեաներու, որոնք իրենց մայրենի լեզուով երգեցին: Մեր սարկաւազները, առաջնորդութեամբ Տ. Գուսան Վրդ.ի, երգեցին կարգ մը շարականներ: Յետոյ բոլորն ալ բարձրացան Ս. Հոգիի կիսաւեր մատուռը, ուր հինգ վայրկեանի լուռ խոկումէ մը ետք առաջնորդութեան մօտակայ Ս.

Կոյսի ննջման (Տօրմիսին) Գերման-կաթուղի վանքի հիւրանոցը՝ թեթեւ պատուասիրութեան մը մասնակցելու:

28 Յունուար, Ուրբաթ, երեկոյեան ժամը 5ին, կարգը եկած էր Ս. Յակոբեանց Մայր Տաճարին, ուր պլպլացող կանթեղներու խորհրդաւոր լոյսին տակ ընթացք առաւ ժամ մը տեւող յայտագիր մը, քաղկացած մեծ մասամբ մեր երեկոյեան ժամերգութեան ընթերցուածներէն, աղօթքներէն եւ մեղեդիներէն: Հոգշ. Տ. Բագրատ Արեղայ բովանդակալից քարոզ մը կարդաց՝ Անգլերէն լեզուով: Եղան զանազան լեզուներով ընթերցումներ՝ Ս. Գրիգի ալլազան քաժիններէն, տարբեր եկեղեցիներու պատկանող հոգեւորականներու կողմէ, որոնք ապա Լուսարարապետ Ս. Հօր կողմէ հիւրասիրութեան ժառանգ. Վարժարանի սրահը՝ բարեկամական ջերմ մթնոլորտի մէջ թեթեւ պատուասիրութեան մը մասնակցելու:

29 Յունուար, Շաբաթ, նոյն ժամուն, Ասորւոց Ս. Մարկոս եկեղեցւոյ մէջ,

Ասորիներ եւ Ղպտիներ միասնաբար գործադրեցին իրենց հոգեւոր երգերէն եւ աղօթքներէն կազմուած յայտագիր մը: Լիովին խնդողած էր փոքրիկ եկեղեցին: Ներկայ էին, մեր կողմէ, Լուսարարապետ Տ. Դաւիթ Արքեպս. եւ Հոգշ. Տ. Գուսան Վրդ.:

30 Յունուար, Կիրակի, երեկոյեան նոյն ժամուն տեղի ունեցաւ եզրափակիչ հանդիսութիւնը, նման այլ տարիներու՝ Յոյն-Կաթուղիներու (Մելիթ) եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան այլ եկեղեցիներու հոգեւոր պետերու կամ ներկայացուցիչներու: Լուսփի Լահիամ Եպիսկոպոսը իմաստալից քարոզ մը խօսեցաւ: Հացի եւ գինիի օրհնութենէն եւ ճաշակումէն առաջ եղան մասնաւոր աղօթքներ՝ ներկաներուն կողմէ: Վերջաւորութեան, ներկայ քաղմագգի եպիսկոպոսները իրենց օրհնութիւնը տուին բոլորին: Յետոյ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՄԷՋ ՔԱՐՈՋԽՕՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վերջերս հարկ եղաւ որ ծխատէր հովիւի մը արտասահման ուղեւորութեան միջոցին պատարագեմ անոր եկեղեցւոյն մէջ: Ինչպէս առ հասարակ գրեթէ ամէն տեղ Հիւսիսային Ամերիկայի մէջ, հայկական Ս. Պատարագին ներկայ գտնուելիք անհատներէն շատերը եկեղեցի հասան պատարագը վերջանալէն քիչ առաջ, մանաւանդ անոնք որոնք գիտէին թէ այս կամ այն ննջեցեալին համար խնդրուած հոգեհանգստեան պաշտօնին ներկայ պիտի ըլլային: Ըստ իմ շատոնց որդեգրած սովորութեան, պատրաստուած էի քարոզխօսութիւնս ընել Ոսկեքերանի «Որ

օրհնես զայնոսիկ ...» աղօթքէն անմիջապէս ետք, երբ արդէն քեմէն իջած եւ դասին մէջտեղը կանգնած պիտի ըլլայի: Այդ օրը սակայն անսացի սեղանին սպասարկող տարեց ներգաղթողի մը թելադրութեան, որ էր քարոզս խօսիլ պատարագին անմիջապէս յաջորդելիք հոգեհանգստեան պաշտօնէն ետք: Այդպէս ըրի, եւ իսկոյն անդրադարձայ որ ինձ մրցակից կ'ունենայի զոյգ մը հոգաբարձուներ որոնք նոր մարած մոմերը իւրաքանչիւր հաւատացեալի ձեռքէն կը վերցնէին մէկ առ մէկ, առջեւի զոյգ նստարաններէն սկսելով: Անպատշաճ պիտի ըլլար ինձ

համար այդ հոգաբարձուներու սկսած աշխատանքը կասեցնել, սակայն մտովի ըսի ինքն իրենս թէ այնուհետեւ ոչ մէկ հայ եկեղեցւոյ մէջ այդպիսի պահու մը ֆարոգ պիտի չխօսէի:

Լուսահոգի Տիրան Արքեպիսկոպոս Ներսիսեան, 1984ին Լոնդոն - Անգլիա - տպել տուած Հայերէն եւ Անգլերէն Հայ Եկեղեցւոյ Պատարագամատոյցի ծէսի բացատրութեան ընթացքին - Անգլերէն - կ'ըսէ որոշապէս թէ երբ ձաշու Գրքի ընթերցումը աւարտի, պատարագիչը կը դառնայ արեւմուտք, կը յառաջանայ դէպի բեմին եզերքը եւ կու տայ ֆարոգը, նախ քան ընթերցումը ձաշու Աւետարանին: Պահը կը մնայ նոյնը երբ ֆարոգիչը մի այլ հոգեւորական է, եւ այդ պարագային պատարագիչը կանգուն կը մնայ սեղանին առջեւ - էջ 212 - : Նոյն գրքի վերջաւորութեան թիւ 22 ծանօթութեամբ հեղինակը դիտել կու տայ որ ֆարոգը ի սկզբան մեկնութիւն մըն էր օրուան ընթերցումներու մասին, եւ սովորաբար այդ պէտք է ըլլայ: Յ. Բ. 145 թուականին իսկ ֆարոգխօսութեան տեղը ընթերցումներէն անմիջապէս ետքն էր: Հայ Եկեղեցւոյ մէջ, ըստ Տիրան Սրբազանի, այժմ ֆարոգը կը տրուի ձաշու Գրքին եւ ձաշու Աւետարանին միջեւ:

Գործնականին մէջ, Հայ պատարագիչ-ֆարոգիչներ Ամբիկայի մէջ ֆարոգխօսութեան պահը կը յետաձգեն, երբեմն ՀԱՅՐ ՄԵՐԻ երգեցողութիւնը անմիջապէս կանխող պահուն, կամ աւելի ուշ՝ Ս. Պատարագի վերջաւորութեան:

Այդ յետաձգումին պատճառը բացայայտ է: ձաշու ընթերցումներու պահուն ֆարոգ լսելի ժողովուրդի թիւը չափազանց փոքր է: Ուրեմն կ'արժէ յետաձգել - կը խորհին պատարագիչներ - աւելի շատ ունկնդիրներ մեր դիմաց գտնելու յոյսով:

Կ'արժէ կարգալ ասկէ աւելի քան մէկ

դար առաջ Պարտիզակի հայոց ֆարոգիչ Եղիշէ Վրդ. Դուրեանի «Երկրագունտ» թերթին մէջ հրատարակած ՅԱՆԿԱՐԾԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Բնադատականը: Դուրեան այդ յօդուածին մէջ կը գանգատի որ «1879ին չմնաց թերեւս ֆարոգիչ մը Պոլսոյ մէջ որ թղթադրամի վրայ չհրապարակասուէր, եւ այսօր հասարակ ժողովուրդն իսկ աւելի կ'ախորժի ֆաղափական քան թէ կրօնական նիւթի վրայ ֆարոգիչներ լսել, եւ վարդապետն ալ տարակոյս չկայ թէ առաջինն ընտրելով աւելի կրնայ յաջողիլ, մանաւանդ թէ միայն օրուան թերթերը իր ընթերցումին առարկայ եղած են» (Եղիշէ Պատրիարք Դուրեան, ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՔՆՆԱՐԱՏՈՒԹԻՒՆՔ, Երուսաղէմ 1935, էջ 8): Նոյն յօդուածին մէջ, այլուր Դուրեան կ'ափսոսայ որ կեդրոնի (իմա՝ Կ. Պոլսոյ մէջ. Ա. Բ. Ա.) քնակող հայ ֆարոգիչ վարդապետը «կը դառնայ խօսիլ ժողովուրդին, թէպէտ եւ ժամանակը ներած իսկ չլինի գոնէ քնարան մ'ընտրել՝ թող թէ խորհրդածել անոր վրայ» (Անդ, էջ 5):

Դուրեանի դիտողութենէն պէտք է հետեւցնել թէ ամէն ֆարոգ պարտի ունենալ քնարան մը: Ո՞րքէ պէտք է ընտրէ ֆարոգիչը իր քնարանը: Յայտնապէս, Աստուածաշունչ Մատեանը գերազանց եւ ամենաճշտ հանքն է ֆարոգի քնարանի: Եթէ օրուան ձաշու ընթերցումները խրթին եւ անյարմար կը թուին երբեմն, կայ ընդարձակ դաշտը Աստուածաշունչի այլ մասերուն: Այստեղ Համաբարբառ կոչուած գիրքը կրնայ օգտակար ըլլալ, եթէ ֆարոգիչը իր նախընտրած մէկ թեմային պատշաճող Սուրբ Գրական համար մը գտնել կը ջանայ: Երկրորդ հանքը քնարանի Հայ Եկեղեցւոյ ժամագիրքն է՝ ներառեալ Ս. Պատարագը: Անոր բովանդակած աղօթքները, երգերը, եւ սարկաւագի

բաժինները առատ նիւթ կրնան հայթայթել պատրաստուելիք ֆարոգներու: Վերջապէս՝ Հայ եկեղեցւոյ Շարակնոցը կրնայ թելադրել բազում բնաբաններ, իր այլազան - ներբողական, մաղթողական, կենսագրական, եւ այլն - նիւթերով, որոնք Հայ Ոսկեդարէն մինչեւ Միջին Դարու վախճանը մի քանի տասնեակ ներշնչեալ գրիչներու հաւատքի ծորումներն են:

Աստուածաշունչ, ժամագիրք, Շարակնոց գործածող Հայ հոգեւորականը որ ֆարոգ պատրաստելու հարկին տակ է, պէտք պիտի չունենայ յանկարծաբանութիւն ընելու, նոյնիմաստ հոմանիշ բառերով խնդրելու իր ֆարոգը, տալիք պատգամին աղփատութիւնը անտեղի շարժումներով եւ ձայնի ելեւէջներով պարտկել փորձելու: Բանաստեղծութիւն, հայրենիք, շուկայի կամ ֆաղափական աշխարհի ընթացիկ կացութիւնը եւ կամ իր ընտանիքի այս կամ այն անդամի մի նոր ելոյթը, ասոնք բնաբանի յարմար նիւթ պէտք է համարուին, եթէ խօսուելիքը ֆարոգ է եւ ոչ ճառ:

Անցնող 1992 եւ 1993 տարիներուն երկու տարբեր առիթներով գտնուեցայ Հայ Երուսաղէմ, ուր քանիցս հրապարակաւ լսեցի Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանէն եւ Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեանէն տրտունջ այն մասին

որ Սփիւռքէն շատ փոքր թիւով հայեր ուխտաւոր կ'երթան Երուսաղէմ: Կարգ մը քրիստոնէական սրբավայրերու պահպանումին եւ գործածութեան մէջ Հայ Ազգը Լատին եւ Յոյն Պատրիարքութեանց համահաւասար իրաւունքներ ունի: Սփիւռքի Հայոց մէջ ուր կը գտնուին բազում զբօսաշրջիկներ, հագուազիւտ են բարեպաշտ անհատներ որոնք կը հետաքրքրուին Սուրբ Երկիր ուխտի երթալու գաղափարով, այնպէս ինչպէս մեր հաւատացեալ նախնիք կ'ընէին մինչեւ իսկ Մեծ Եղեռնի նախօրեակին:

Կը մտածեմ որ Ս. Պատարագի ֆարոգխօսութիւնը դնել իրեն արժանի բարձր մակարդակին վրայ, գայն սերտօրէն կապել Աստուածաշունչին եւ միւս սրբազան մատեաններուն հետ, կրնայ օգտակար ըլլալ բարեպաշտութեան եւ ջերմեռանդութեան մեր մարած հուրը կրկին արծարծելու ուղղութեամբ:

Եւ այս՝ ի հեռուկս անոնց, որոնք գոհ կը մնան եթէ ֆարոգ բնաւ չխօսուի իսկ, հայկական պատարագի մատուցման ընթացքին:

ԱՐՏԷՆ Ա. ՔԷՆՅ. ԱՇՃԵԱՆ

ԱՄԱՆՈՐԸ ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

1994 Յունուար 13, Հինգշաբթի գիշեր ժամը 7-8.30, Ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահը զարդարուած էր կաղանդի զարդարանքով, եւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներուն հետ մուտք գործեց, ի ներկայութեան ուսուցիչներու, Ս. Աթոռոյ հրաւիրեալ պաշտօնէութեան եւ աշակերտութեան որոնք երգեցին Վարժարանի «Սիրտ ի Սիրտ» ֆայլերը:

Ամանորի ամբողջ յայտագիրը, զգեստաւորեալ Կաղանդ Պապայով, կաղանդչէֆերու ընթերցանութեամբ, սրամտութիւններով, նուէրներու բաշխումով, մենբերգներով, խմբերգներով եւ արտասանութիւններով, գործադրուեցաւ իբրեւ բեմադրութիւն եւ աշակերտներու կողմէ պատրաստուած դերակատարութիւն, ղեկավարութեամբ Գեորգ Սրկ. Բաբայանեանի: Նոր Տարուան ուղերձը կարդաց Վարժարանի դաստիարակ-հսկիչ Բրոֆ. Արտեմ Սարգիսեան: Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր զեփեմութեամբ, ֆաջալերանքի խօսքերէն եւ բոլոր պաշտօնէութեան ուղղած բարի մաղթանքներէն յետոյ, «Հայր Մեր»ի երգեցողութեամբ երեկոյթը աւարտեցաւ: Իսկ կէս գիշերուան ժամը 12ին, ամբողջ ֆաղափի զանգակներուն հետ, Ս. Յակոբայ մեծ եւ փոքր զանգակները եւս սկսան դողանքել, մինչ աշակերտներ եւ ժողովուրդ վանքին մեծ բակը հաւաքուած կ'երգէին «Փառք ի Բարձունս» օրհներգութիւնը, եւ լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան Նոր Տարին կը շնորհաւորէր, մաղթելով որ խաղաղութիւնը հաստատուէր խոռված բոլոր երկիրներուն մէջ:

Միաբանութեան հոգեւորական անդամները, Ժառ. Վարժարանի Ամանորի երեկոյթէն յետոյ Պատրիարքարան հաւաքուեցան եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր հետ միասին ընթրիք ունեցան մտերմիկ գուարթաբանութեամբ եւ երգեցողութեամբ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐ

Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցան հետեւեալ մշակութային յայտագիրները:-

1993 Դեկտեմբեր 11, «Մահմետական Ազգային Փոքրամասնութիւններու Բոնի Ազգաճուղումը Ատրպէյջանի մէջ». զեկուցող՝ Վարդան Գրիգորեան: Վիտէօ ֆիլմի ցուցադրութիւն՝ 1. Արցախը Շուտացուց աչքերով. 2. Շուշիի գրաւումը:

1993 Դեկտեմբեր 18, «Արցախ-Ղարապաղի բարբառը», զեկուցող՝ Արտեմ Սարգիսեան:

1994 Յունուար 4, Անգլերէն լեզուով դասախօսութիւն՝ «Սիամանթօյի Կարմիր Լուրեր Բարեկամէս» ֆերթուածներու մասին, Ամերիկայէն Անգլիագիր հայ բանաստեղծ Փիթըր Պալագեանի ներկայացումով:

1994 Յունուար 15, Պարոյր Սեւակ, կեանքն ու ստեղծագործութիւնները. զեկուցող՝ Սամուէլ Մուրատեան:

1994 Յունուար 29ին եւ Փետրուար 5ին, երկու երեկոյթներ՝ Ա) «Կոմիտասի Հանճարը իր Գիտերուն եւ Երգերուն մէջէն», Թորգոմ Պատրիարք Մանուկեան, եւ «Կոմիտասէն ընտրուած երգեր», Մեներգող՝ Վարուժան Մարգարեան, Դաշնակի բաժին՝ Վաչէ Շարաֆեան:

1994 Յունուար 31, Փետրուար 2 եւ 3, երեք դասախօսութիւններ Անգլերէն լեզուով, «Մէկ Եկեղեցի - Բազում Պաշտամունք», «Պատարագ եւ Խորհուրդներ», «Տաղերգութիւն». զեկուցող՝ Բրոֆ. Ֆիլիպպ Հարմոնիքորթ, Աւստրիոյ Կրաց Համալսարանի դասախօս:

1994 Մարտ 28, Ուշինկընի մէջ Կաթուիկ Եպիսկոպոսներու Խորհուրդի պատասխանատու պաշտօնեաներէն Տֆ. Տօթօրիս Լէֆի ներկայացուց Անգլերէն լեզուով, կարեւորութիւնը Եկեղեցւոյ աշխարհական անդամներուն հոգեւոր կրթանքին:

ԵԴՈՒԱՐԴ ԶԵՐԷՃԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԴԵՍՊԱՆ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՁ

Միացեալ Նահանգաց Կառավարութեան կողմէ Իսրայէլի համար նոր նշանակուած դեսպանն է հայորդի Տիար Եղուարդ Ճէրէնեան որ Թէլ Ավիվ հաստատուեցաւ ընտանիքով Յունուարի կէսերուն:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը շնորհատրական իր առաջին հեռաձայնային խօսակցութեան ընթացքին հրաւիրած էր Հայ Դեսպանը Յունուար 18ի կէս գիշերին մասնակցելու Հայկական Ծնունդի պաշտամունքին, Բեթղեհէմի Ծննդեան Այրին մէջ, բայց կարելի չեղաւ՝ նոր պաշտօնի հաստատման եւ պետական ընդունելութեանց խնդր յայտագրին պատճառաւ:

Առաջին առիթով, 14 Փետրուար Երկուշաբթի յետ միջօրէին Պատրիարքարան այցելեց, ընկերակցութեամբ Իսրայէլի մէջ Ամերիկեան Հիւպատոս Տիար Էտուրտ Ապիկեքընի, որ նոյնպէս նոր նշանակուած է այս պաշտօնին: Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը այցելելէն յետոյ, Պատրիարքարան քարձրացան հիւրերը ընկերակցութեամբ

Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի, եւ Աւագ Թարգման Տ. Ռ. սգմիկ Վրդ. Պողոսեանի: Տիար Դեսպան Ճէրէնեան յիշեց իր հանդիպումները Պատրիարք Սրբազան Հօր հետ Սովետական իշխանութեան շրջանին Մոսկուայի մէջ, ապա Ուաշինկթընի եւ Նիւ Եորքի մէջ, անդրադառնալով իր փորձառութիւններուն նաեւ Դամասկոսի մէջ իբրեւ Սուրիոյ Դեսպան: Իր ողջմիտ դատողութեամբ եւ սրտաց հաղորդականութեամբ Տիար Ճէրէնեան համակրութիւնը շահած է թէ՛ իր պաշտօնակիցներուն եւ թէ՛ տարբեր երկիրներու պետական անձնաւորութեանց, իբրեւ վստահելի ներկայացուցիչը Ամերիկեան Կառավարութեան, մանաւանդ նկատի առած Միջին Արեւելքի երկիրներու շրջանակը եւ յարաբերութիւնները: Քաղաքական ներկայ քարդ կացութեան անդրադառնալով յուսալից է որ վերջ պիտի տրուի եղբայրադաւ խժոժութիւններու, որպէս զի ժողովուրդները կարենան վայելի խաղաղութեան քարիքները:

ՇՆՈՐՀԱՌՈՐԱԿԱՆՔ

Ս. Ծննդեան Շնորհատրականք

Պատրիարք Սրբազան Հայրը Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներու առիթով իր քարեմաղթութեանց եւ շնորհատրանքի գիրերը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետներուն, որոնց շնորհատրագիրերը ընդունած է. -

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կաթողիկոսին:

- Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազաննեանին:

- Հռոմէական Կաթօլիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապին:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէյ Բ. Սրբազան Պատրիարքին:

- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Ռոպերթօ Կիւլպէնկեանին: Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց ղեկավարներուն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

N^o

Ա. Էջմիածին

Դեկտեմբեր 1993

Նորին Ամենապատուութիւն
Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Պատրիարքարան Հայոց,
Երուսաղէմ

«Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն»:

Զերդ Սրբութիւն, Այսօր, այժմ, փառք ենք տալիս բարձրեալն Աստուծոյ որ վերստին բերում է մեզ բոլորիս եւ համայն մարդկութեան մեծ Մանուկ Յիսուսի հրաշք ծննդեան, ի մխիթարութիւն մեր յուսացեալ հոգիների: Մանաւանդ մեր սուրբ եկեղեցիին եւ մեր հաւատաւոր ժողովուրդին որ ապրում է իր դարաւոր պատմութեան ամենատագնապալի պահերից մէկը որ մայր երկրում, հայեացքը դէպի երկինք յարած օգնութիւն է հայցում Աստուածորդուց որն աշխարհ եկաւ որպէս Փրկիչ ազգի մարդկան: Ահա մեր յոյսը եւ մեր ուրախութիւնը այս օրերին, որով դիմաւորում ենք այս տարի աւետիսը լուսաշող Սուրբ Ծննդեան:

Թող մեր Փրկչին Քրիստոսի կենարար շնորհները առատապէս բաշխուին Զերդ Սրբութեան, Զեր Սուրբ Աթոռին ուխտապահ հոգեւոր դասին, վարչական մարմինների յարգարժան անդամներին եւ համայն մեր հաւատացեալ զաւակներին: Ամենայն բարիք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ այժմ եւ միշտ: Ամէն:

Եղբայրական Սիրով

Վազգէն Առաջին Կաթողիկոս Ամենայն Հայոց



Թիւ 341/93

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Ամբիլիաս, 15 Դեկտեմբեր, 1993

Ամենապատիւ
Տ. Թորգոմ Արքեպսկ. Մանուկեան
Պատրիարք Հայոց Երուսաղէմի
Երուսաղէմ.

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Ամբիլիասի մայրավանքին մէջ փառք եւ գոհութիւն կ'ընծայենք Աստուծոյ, որ վերստին Մեզի շնորհք ըրաւ Նոր Տարւում եւ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ եւ Աստուածայայտնութեան տօնին նախօրեակին այս գիրը ուղղելու Ձեզի, հայցելով մարդացեալն Աստուծոյ որ իր շնորհք առատօրէն հեղու Ձեր Պատրիարքական Ս. Աթոռին եւ հաւատացեալ ժողովուրդի կեանքին մէջ, որպէսզի ան կարենայ վայելել բարիքները աստուածապարգէւ խաղաղութեան եւ հաճութեան ու բարգաւաճութեան:

Ներկայ ժամանակներուն, ողջ հայ ժողովուրդը կը գտնուի իր ազգային կեանքի կարեւոր մէկ հանգրուանին առջեւ: Մայր Հայրենիքի, անկախացեալ Հայաստանի ժողովուրդը տառապալից կացութեան է մատնուած, տնտեսական եւ քաղաքական պայմաններու բերումով: Սփիւռքի հայութիւնը կը մնայ միշտ ուժացման վտանգի սպառնալիքին ներքեւ: Գերագոյն աստիճանի առողջ եւ լուրջ գիտակցութեան են հրաւիրուած հայ ազգի բոլոր զաւակները, հայրենաբնակ թէ արտերկրաբնակ, որ վերատեսութեան ենթարկեն իրենց գիտենք եւ ժողովուրդեան կեանքի սկզբունքը որդեգրեն եւ գործադրեն իրենց անհատական-ընտանեկան կեանքերուն մէջ, եւ իրենց լայն բաժինը բերեն բարեաց համայնական համազգային կեանքին մէջ, ի սէր բարեկարգութեան եւ շինութեան ազգիս հայոց:

Այս նշանաբանով է որ այս տարի կ'ողջունենք Ձերդ Ամենապատուութիւնը մաղթելով որ պարգութեան եւ աղքատութեան պայմաններուն տակ ի Բեթլեհէմ ծնեալ Աստուածորդւոյն կեանքի օրինակը դառնայ մղիշ ոյժ Ձեր եւ Սրբոց Յակոբեանց Ուխտեալ Միաբանութեան բոլոր անդամներու կեանքին եւ գործունէութեան մէջ: Որովհետեւ քաջ գիտենք որ այդ սկզբունքով եւ գործելակերպով աստուածահաճոյ եւ ազգաշինական կեանք մը ապրած կ'ըլլանք ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ մեր ազգին:

Մնամք սիրոյ ողջունիւ եւ օրհնութեամբ

ԱՂՕԹԱՐԱՐ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



SECRETARIAT OF STATE

No. 341082/G.N.

FROM THE VATICAN,

20 January 1994

Your Beatitude,

His Holiness Pope John Paul II has asked me to express his gratitude for your cordial good wishes for Christmas and for the New Year which has just begun. One with you in confessing that at the birth of our Saviour "the grace of God has appeared for the salvation of all men" (Tit 2:11), he prays that all Christians will obtain what has been promised to those who persevere (cf. Heb 10:36).

His Holiness likewise asks the Almighty Father to strengthen Christians everywhere so that during this International Year of the Family they will bear ever clearer witness to the authentic values of family life, living in truth and charity, as is fitting for those who are "members of the household of God" (Eph 2:19).

Together with these sentiments, I also offer Your Beatitude my own best wishes.

Yours sincerely in Christ,

Secretary of State

His Beatitude Torkom Manoogian
Armenian Patriarch of Jerusalem
St. James Monastery
P.O. Box 14001
91190 Jerusalem



Патриарх
Московский
и всея Руси

119034 Москва, Чистый пер. 5

ЕГО БЛАЖЕНСТВУ,
БЛАЖЕННЕЙШЕМУ ТОРКОМУ МАНУКЯНУ,
АРМЯНСКОМУ ПАТРИАРХУ ИЕРУСАЛИМА

Ваше Блаженство!

Ныне весь христианский мир, несмотря на тяжкие испытания в своей видимой и невидимой брани, снова обретает великое утешение, созерцая непостижимую благочестия тайну - явление Бога во плоти, снова со умилением преклоняет колени в богоприемном Вертепе, благодарение по силе приносит пеленами повитому Богомладенцу и боголепно славословит Великого Совета Ангела и Начальника мира, пришедшего падший восставить образ. Вместе с ним и мы "недостойными устами ангельски Тому принесем: Слава в вышних Богу и на земли мир" и прославим Его крайнее к нам снисхождение.

От души поздравляя Вас, Ваше возлюбленное Блаженство, с этим великим и миротворительным праздником Рождества по плоти Господа и Бога и Спаса нашего Иисуса Христа, желаем Вам многие годы в добром здравии и в радости духовной торжественно встречать младенствующего Спасителя мира и со умилением сердечным поклоняться Ему.

С любовью о Христе Родившемся

ПАТРИАРХ МОСКОВСКИЙ И ВСЕЯ РУСИ

Рождество Христово
1993/94 гг.
г. Москва

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Հայոց Պատրիարքարան

Երուսաղէմ

Ամանորի եւ ԱՅՈՒՆԵՍԿՈՒՆ տօներուն առիթով Ձերդ Ամենապատուութեան կը ներկայացնենք մեր սրտագին շնորհաւորութիւնները. կ'աղօթենք առ քարճրեալն Աստուած որ շնորհէ Ձեր եղբայրութեան առողջութիւն եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անասանութիւն եւ քարգաւանութիւն:

Եղբայրական Սիրով
Գարեգին Պատրիարք

HIS BEATITUDE ARCHBISHOP TORKOM MANOOGIAN
ARMENIAN PATRIARCH
ARMENIAN PATRIARCHATE
P O BOX 14235
JERUSALEM

ON THE OCCASION OF THE FESTIVITIES FOR THE NEW YEAR AND
CHRISTMAS WE SEND YOU OUR BEST WISHES FOR SERENITY PEACE
AND EVERY SUCCESS IN YOUR APOSTOLIC MISSION STOP
ROBERTO GULBENKIAN

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Հիւսիսային Ամերիկայի Հայց. եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գեր. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանին, որ իր թեմին անդամներուն գործածութեան համար տպագրել տուած 1994 տարուան պատի օրացոյցին մէջ յաւելեալ տասներութ գեղատիպ լուսանկարներով ներկայացուցած է տեսարաններ Սուրբ Երկրին մէջ հայկական սրբավայրերէն եւ Սրբոց Յակոբեանց Վանքի եւ Միաբանութեան կեանքէն: Շնորհակալութիւն նաեւ Երուսաղէմաբնակ լուսանկարիչներէն Տիար Մարտիրոս Նալպանտեանին եւ եղբարց, որոնք ազնւօրէն տրամադրած են սահիկներն ու լուսանկարները, որոնցմէ տասներեք հատը վերատպած ենք «Սիոն»ի ներկայ թիւին մէջ: Իսկ Գեթսեմանիի Ա. Աստուածածին Տաճարի երեք տեսարաններու լուսանկարները արտատպուած են Երուսաղէմի Հայ Բարեսիրաց Միութեան նոյնքան գեղատիպ «Պատի Օրացոյցէն»:

ԽՄԲ.

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 1 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբեն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 2 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

Դշ. 5 Յունուար.- Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Սուրբ Աթոռոյ շարականի - «Օրհնեցէ՛ք զՏէր» - երգեցողութեամբ թափօրով բարձրացաւ Պատրիարքարան:

Եշ. 6 Յունուար.- Ս. Դաւիթ Մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղօր (Տօն Առաքելական Սուրբ Աթոռոյս Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, շուրջառ եւ եմփիորոն գգեցած, բարձրացաւ Տեառնեղօր Աթոռի պատուանդանին, ուր մնաց մինչեւ ժամերգութեան աւարտիլը, երբ ընդունեց Միաբանութեան եւ դպիրներու շնորհաւորութիւնները: Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին մասնաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Նորին Ամենապատուութեան երկար եւ բարօր կենաց համար եւ ապա մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ ու քարոզեց: Քարոզէն ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար կատարուած հանգստեան պաշտամունքին:

Ուր. 7 Յունուար.- Ամենա.Սրբազան Պատրիարք Հայրը, նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին: Տօնին բուրվառակիր հայրերն էին Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան եւ

Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէճեան:

Շր. 8 Յունուար.- Առաւօտեան ժամերգութեան աւարտին Սուրբ Աթոռոյս բարեշնորհ Սարկաւագները թիւով 15, առաջնորդութեամբ երկու բուրվառակիր վարդապետներուն, մարգարտագարդ սաղաւարտներով եւ տապանակ ու բուրվառ ի ձեռնին, կատարեցին «Սարկաւագաց Հանդէս»ը: Արարողութեան կը նախագահէր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Սուրբ Պատարագը մատուցուեցաւ Աւանդատան մէջ. Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէճեան:

Գիշերասկիզբին, ժառանգաւորաց վարժարանի ճաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ, խօսք ատին Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Նորայր Սրկ. Զաֆարեան որ յայտնեց իրենց նուիրումը հետեւելու Ս. Ստեփանոսի ծառայութեան օրինակին:

Ապա Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ «Պահպանիջ»ով:

Կիր. 9 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Գլխաւոր Առաքելոց նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտատեան:

Բշ. 10 Յունուար.- Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

- Կէսօրէ ետք, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը «հրաշափառ»ով մուտք գործեց Մայր Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր նախատօնակին նախագահելէ

ԽՈՒՄ, Ս. ԱՔՈՒՅՆ «ՕՐԻՆՆԵԳԻ ԳՏԵՐ» շարականի
ԵՐԳԵՂՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՐԱՆՈՒԹԻՆԸ ԹԱՓՈՐՈՎ
ՔԱՐՈՐԱԳԱՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ:

**ԳՂ. 11 ՅՈՒՆՈՒԱՐ. — ՏՈՆ ՍՐԵՈՅ ՈՐԵՂՈՅՆ
ՈՐՈՒՄԱՆ:** Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան
մէջ օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը
մատոյց, Զեքեդեան եղբայրներու եւ անոնց
Տիրոջ մատուցած խնդրանքին վրայ
բովանդակալից քարոզ մը խօսեցաւ եւ ապա
ամպիովանի տակ, Սուրբ Խաչափայտի
մասունք ի ձեռնին, եռադարձ մեծահանդէս
թափօրին նախագահեց Ամենապատիւ
Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա բոլորը
թափօրով քարոզացան Պատրիարքարան ուր
Սրբազան Պատրիարքը օրհնուած նշխար քաժնեց
բոլորին, փակելով շարքը Աւագ Տօներուն:

ԵՂ. 13 ՅՈՒՆՈՒԱՐ. — Ամենապատիւ
Պատրիարք Սրբազան հայրը եւ
Միաբանութիւնը, ժառանգաւորաց վարժարանի
մեծ սրահին մէջ կայացած երեկոյթէն ԽՈՒՄ,
կաղանդի գիշերը տօնեցին Պատրիարքարանի
մէջ:

**ՈՐ. 14 ՅՈՒՆՈՒԱՐ. — Կաղանդ, Նոր
Տարի ըստ Հին Տօմարի:** Մայր Տաճարի Աւագ
Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց, ըստ
սովորութեան, ժամօրհնողը Հոգւ. Տ. Ռուբէն
Վրդ. Յովակիմեան: Յետոյ բոլորն ալ
քարոզացան Պատրիարքարանի դահլիճը,
երգելով Ս. ԱՔՈՒՅՆ Մաղթերգը: Հոն նախ Ս.
Թ. Վարժարանի սաներէն մին ծաղկեփունջ ի
ձեռնին, գողտրիկ ուղեքձ մը արտասանեց, ուր
կը հայցէր արեւշատութիւն Ամենապատիւ
Պատրիարք Սրբազան Հօր, ապա հինգ ժա-
ռանգաւոր սաներ Հայաստանէն եկած երգեցին
կրօնական երգ մը: Նորին Ամենապատուո-
թիւնը ըրաւ իր պատշաճ խօսքը եւ նարինջ
քաժնեց ներկաներուն:

**ՇՐ. 15 ՅՈՒՆՈՒԱՐ. — Ս. Բարսէղի
Հայրապետին:** Ս. Պատարագը մատուցուեցաւ
ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգւ. Տ.
Աւետիս Արդ. Իփրանեան:

**ԿԻՐ. 16 ՅՈՒՆՈՒԱՐ. — Ս. Պատարագը
մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուա-
ծածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգւ.
Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոյնեան:**

**ԳՂ. 18 ՅՈՒՆՈՒԱՐ. — Զրազայոյց Ս.
Ծննդեան:** Առաւօտեան ժամը 10ին,

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր
գլխաւորութեամբ ամբողջ Միաբանութիւնը
ինքնաշարժերու շարանով մը ճամբայ ելան
դէպի Բեթղեհէմ: Ճամբու կիսուն, Յունաց Ս.
Եղիա վանքին առջեւ, դիմաւորութեան եկած
էին պետական եւ համայնքային
ներկայացուցիչներ, որոնք հիւրասիրուեցան:

Բեթղեհէմէն հինգ ռստիկան ձիաւորներ
կ'ընկերանան Պատրիարք Սրբազանի
ինքնաշարժին, առջեւէն եւ երկու քովերէն:
Հասնելով Ս. Ծննդեան Իրապարակը,
դիմաւորուելով Բեթղեհէմի, Պէյք Սահուրի
քաղաքացիներէն եւ Ընդհ. Ոստիկանապետէն,
կը կազմուի թափօր, միաբանութեան
անդամներով եւ ժառանգաւոր սաներով:
«Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ
կը քարձրանան Ծննդեան Տաճարի մեր
Տեսչարանը, ուր Բեթղեհէմի քաղաքացի
Իլիաս Ֆրէժի քարի գալուստի խօսքերէն եւ
Սրբազան Պատրիարք Հօր խաղաղութեան եւ
քարօրութեան մաղթանքէն յետոյ տեղի
կ'ունենայ պատուասիրութիւն:

— Յետ միջօրէի ժամը 2ին, Ամենապատիւ
Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ,
«Հրաշափառ»ով մուտք կը կատարուի Ս.
Ծննդեան Տաճար, ուր արարողութիւնները,
սկսելով Ս. Այրի ուխտէն, կը տեսնեն մինչեւ
ժամը 6: Ըստ աւանդութեան, Ճրագալոյցի
արարողութեան կը յաջորդէ Սուրբ Պատարագը
գոր Հոգւ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեան կը
մատուցանէ Ս. Այրին մէջ: Նախատօնակէն
ԽՈՒՄ Թափօրով կը քարձրանան Հայոց վանք,
ընթրիքէն ԽՈՒՄ հանգչելու համար քանի մը
ժամ:

— Գիշերուան ժամը 10ին կը վերսկսին
արարողութիւնները գիշերային ժամերգու-
թեամբ:

**ԳՂ. 19 ՅՈՒՆՈՒԱՐ. — ՏՈՆ ԾՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԵՂՈՆ:** Կէս գիշերին,
ամբողջ Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան
այրը, ուր կատարուած արարողութիւնները,
մէկ ժամ, կը ձայնասփռուին խորալեզեան
հեռուստառատիօկայանէն: Ամեն. Սրբազան,
Պատրիարք Հայրը այդ միջոցին կու տայ իր
պատգամը, Հայերէն եւ Անգլերէն լեզուներով:
Այս արարողութեան ներկայ կը գտնուին
Բեթղեհէմի քաղաքացիներ՝ Էլիաս Ֆրէժ ու

զինուորական կառավարիչն ու ոստիկանապետը, ինչպես նաև կրօնից նախարարության ներկայացուցիչը, որոնք ապա կը շնորհաւորեն Նորին Ամենապատուութիւնը եւ կը մեկնին: Ամենապատուի Պատրիարք Սրբազան Հայրը կը վերադառնայ Երուսաղէմ: Մինչեւ արեւածագ տեւող մնացեալ արարողութեան կը նախագահէ Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Սուրբ Սեղանին վրայ կը պատարագէ եւ կը ֆարոգէ Հոգշ. Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշնեան: «Ջրօրհնէք»ի արարողութեան կը նախագահէ Գերշ. Սրբազանը եւ Ս. Ծննդեան Այրին մէջ կը պատարագէ, որմէ յետոյ թափօրով կը քարձրանան հայոց Վանք ուր կը կարդացուի Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի Բարձունս» եւ կը վերադառնան Ս. Աթոռ:

Բեթղեհէմի «Ջրօրհնէք»ի խաչի կնիքահայր եղաւ Լիբանանահայ Յակոբ Շիրիֆեան, որ մկրտուած է Բեթղեհէմի մէջ 1964ին, եւ իր ուխտը կատարելու համար եղաւ կնիքահայր: Լոս Անճելոսի մէջ ուսանած է industrial Engineering:

- Իսկ Երուսաղէմի մէջ, Ճրագալոյցի արարողութեան, Սուրբ Յարութեան Տաճարին մէջ՝ Ս. Գերեզմանին դիմաց կատարուած նախատօնակին կը նախագահէ Տաճարին տեսուչը՝ Գերշ. Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեան: Ս. Գերեզմանին վրայ կը պատարագէ Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Արարողութիւնը կ'աւարտի Տաճարի մեր Տեսչարանին մէջ «Փառք ի Բարձունս»ի երգեցողութեամբ եւ Ս. Ծննդեան Աւետարանի ընթերցումով:

- Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ կը պատարագէ Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան «Ջրօրհնէք»ի արարողութեան կը նախագահէ Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

- Կէսօրէ ետք ի Ս. Յակոբ պաշտուած նախատօնակին նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 20 Յունուար.- Յիշատակ Մեռելոց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան: Իսկ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. նախագահեց հոգեհանգստեան կարգին:

Եր. 22 Յունուար.- Ս. Պատարագը

մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 23 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ժիրայր Ծ. Վրդ. Թաշնեան:

Գշ. 25 Յունուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Դշ. 26 Յունուար.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտեան ժամը 8.30ին, Ամենապատուի Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատուցեց եւ ֆարոգեց Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Վանք դարձին, Հայոց թաղի մուտքէն, Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով քարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը, ուր Նորին Ամենապատուութեան նախագահութեամբ կատարուեցաւ «Ջրօրհնէք»ի արարողութիւն, որ կրկնուեցաւ վանուցս Սեղանատան մէջ, ուր օրհնուեցաւ նաեւ տօնին յատուկ Հէրիսայի աւանդական ճաշը, եւ փակուեցան Ս. Ծննդեան ութօրեայ հանդիսութիւնները:

- Նախատօնակին նախագահեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Եշ. 27 Յունուար.- Տօն Ծննդեան Ս. Յովհաննու-Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Եր. 29 Յունուար.- Պետրոսի Հայրապետին, Վասայ Եպիսկոպոսին եւ Արքիտղմայ Սարկաւազին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 30 Յունուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Աստուածած մայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Եր. 5 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր

Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Կիր. 6 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գաբրիկեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Շր. 12 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 13 Փետրուար.- Ս. պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին կից Ս. Յովհաննու Կարապետին Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղանեան:

Շր. 19 Փետրուար.- Ս. Որդւոց եւ Թոռանց Ս. Գրիգոր Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 20 Փետրուար.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան Եպս. Լարիպեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Ուր. 25 Փետրուար.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան:

Շր. 26 Փետրուար.- Ս. Սարգսի գօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան. կատարուեցաւ, ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի հօր՝ Սարգսի հոգւոյն համար:

Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան- Տեառնընդառաջի մեծ ահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, որմէ ետք կատարուեցաւ «Անդաստան եւ մումավառութիւն: Հանդիսապետն էր, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցե՛ք»ի եւ Հսկման կարգը: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Կիր. 27 Փետրուար.- Տեառնընդառաջ: Օրուան հանդիսատւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց

եւ քարոզեց լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 5 Մարտ.- Իսահակայ Պարթեւի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 6 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէքեան:

Դշ. 9 Մարտ.- Վարդանանց նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հայրը, որ նախատօնակէն ետք կատարեց տասնըութը ժողովաւորաց սաներու դպրութեան աստիճանի տըլչութիւնը: Ապա՝ կիսասարկաւագութեան աստիճան տրուեցաւ երեք ուրարակիր եւ մէկ դպիր աշակերտներու (Տրց. Բաւալ Աւետիքեանի, Տրց. Հայկ Միրզախանեանի, Տրց. Արմէն Խաչատուրեանի եւ դպիր Հայկ Գազաբեանի): Խարտավիլակն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, աղընքերակից ունենալով Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան եւ Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

Եշ. 10 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն (Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղանեան: Ճաշու Գիրքի ընթերցումէն առաջ տեղի ունեցաւ չորս կիսասարկաւագներուն որպէս սարկաւագ ձեռնադրութիւնը, որու աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը քարոզեց: Ապա՝ նախագահեց «Հայր Մեր»էն առաջ, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղբանք»ի արարողութեան:

Ուր. 11 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Ասորոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: Երբ ու դարձի թափօրներուն նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորոց

Գերշ. Եպիսկոպոսին կողմէ:

Շր. 12 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի խորաններն ու գլխաւոր սրբանկարները երեկոյեան ժամերգութեան Համբարձի շարականի երգուելու պահուն վարագուրուեցան, Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 13 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ-Խորանի Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Զոյջանեան: Ըստ սովորութեան, դպրապետի պաշտօնը վարեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Գշ. 11 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Արեւագալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական»ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 17 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, եւ ֆարոգեց:

Ուր. 18 Մարտ.- Ս. Թեոդորոսի նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռոյս: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 19 Մարտ.- Սուրբ Թեոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Սուրբ Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն եւ հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս:

Կիր. 20 մարտ.- Քառասնորդաց Արտաքսման: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն,

մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեան, հոն մատուցուեցաւ նաեւ Սուրբ Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրեմեան: Ապա կատարուեցաւ եռօրեայ մեծահանդէս թափօր Քրիստոսի Սուրբ Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, գլխաւորութեամբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր: Թափօրականք երգեցին Այլակերպութեան շարականներ:

Գշ. 22 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց երկրորդ հսկումը ի Ս. Հրեշտակապետաց: Քարոզեց Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 24 Մարտ.- Իրիկուն հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Շր. 26 Մարտ.- Սուրբ Կիրիլի Երեսնադիմացոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Սուրբ Կիրիլի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 27 Մարտ.- Քառասնորդաց Անանակին: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան, իսկ ֆարոգեց Ֆրէզոյէն հիւրաբար ֆաղաֆս գտնուող Արժանապատիւ Տ. Գրիգոր Աւագ Քահանայ Հայրապետեան:

Գշ. 29 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Հրեշտակապետաց: Քարոզեց Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Եշ. 31 Մարտ.- Երեկոյեան կատարուեցաւ Մեծ Պահոց հսկումը ի Ս. Յակոբ: Քարոզեց Գերշ. Տ. Կիրիլ Եպս. Գաբրիէան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Բշ. 10 Յունուար.- Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը Միաբանութեան անդամներու ընկերակցութեամբ Յունաց Սրբազան Պատրիարքին այցելեց, Յունաց Ս. Ծնունդը շնորհաւորելու:

Ապա Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ

Արքեպս-ի գլխավորությամբ Միաբանութիւնը շնորհաւորութեան այցելութիւններ տուաւ Յոյն Կաթոլիկներուն, Ասորիներուն, Ղպտիկներուն եւ Հապէշներուն, իրենց կեդրոններուն մէջ:

ԵՂ. 13 Յունուար.- Ուաշինկթընէն Տիար Միհրան Էրփլէթեան որ Պատրիարքարանիս Կալուածոց Շինարարական ծրագիրներու Խորհրդատու Մարմինի ատենապետն է, Ուաշինկթընէն իր Շինարարական ընկերութեան չորս մասնագէտներու հետ Նրուսադէմ այցելեցին խորհրդակցութեան համար, եւ Պատրիարքարանիս Կալուածոց Տեսուչ Գեր. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեանի, եւ Ճարտարապետ Գագիկ Դաւթեանի հետ Պատրիարք Սրբազան Հօր ճաշի հիւրերը եղան Վանքի Սեղանատան մէջ:

ԵՂ. 20 Յունուար.- Հայոց Ս. Ծնունդի առթիւ Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Յունաց Պատրիարքը, Ֆրանչիսկեան միաբանութիւնը, Ղպտոց, Ասորոց, Յոյն Կաթոլիկներու, Հապէշներու եպսկոպոսները իրենց ընկերակցող հոգեւորականներով, Անգլիկան եպիսկոպոսի փոխանորդը, լուսերականներու երէցը, Տօմինիկեաններուն վանահայրը, Կրօնից քրիստոնէական հարցերու տնօրէն Պրն. Ուրի-Մօր, ընդհանուր ոստիկանապետը եւ Նրուսադէմի Քաղաքապետը, Ուլմարթ իրենց օգնականներով:

Կիր. 23 Յունուար.- Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Նորայր Սրկ. Զաքարեան ներկայ եղան Լուսերական եկեղեցւոյ հիւրասիրութեան, ի պատիւ իրենց անգլիախօս ծովսին նոր հովիւին:

ԲՂ. 24 Յունուար.- Լատինաց Պատրիարքը իր միաբանութիւնով, եկաւ հայոց Պատրիարքարան, շնոհաւորեցիւ համար Հայոց Ս. Ծնունդը:

ԲՂ. 31 Յունուար.- Յոյն Կաթոլիկ եկեղեցւոյ Լահամ Եպիսկոպոսին փափաքին ընդառաջելով, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, այցելեց, Նրուսադէմի իրենց Առաջնորդարանը եւ եկեղեցին, հանդիպում ունեցաւ զանազան ծովսերէն իրենց ամսական հաւաքոյթին առիթով հաւաքուած հոգեւորականներուն հետ, եւ

եկեղեցւոյ մէջ կարն աղօթքէ մը յետոյ, խորհրդակցական իրենց ժողովին ընթացքին խօսեցաւ Ամերիկայի մէջ իր ունեցած հովուական փորձառութիւններէն, քաջալերելով որ օգտագործեն մեր ընկերութեան ընձեռած պատեհութիւնները հոգեւոր եւ դաստիարակչական ծրագիրներով քրիստոնէական հաւատալիքները եւ Աւետարանի ուսուցումը տարածելու համար ժողովուրդին, մանաւանդ պատանիներուն մէջ: Ապա մասնակցեցաւ կէսօրուան հաւաքական ճաշին:

ԴՂ. - Ուր. 1 - 4 Փետր.- Հրեայ-Քրիստոնէական Միջազգային ժողովի նիստերուն ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Հոգ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան եւ Գեորգ Սրկ. Տէվէքեան:

ԴՂ. 2 Փետրուար.- Միացեալ Նահանգաց զանազան քաղաքներէն բաւ թանգարաններու վարիչներ Պատրիարք Սրբազան Հօր այցելեցին եւ շրջեցան Մայր Տաճարը եւ մեր վանքի տարբեր հաստատութիւնները:

Կիր. 6 Փետրուար.- Ս. Մարօնի տօնին առթիւ մատուցուած Ս. Պատարագին եւ ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Նորայր Սրկ. Զաքարեան:

ԲՂ. 14 Փետրուար.- Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ալէն Ժուքէի Ս. Նրկիր այցելութեան առթիւ ֆրանսական դեսպանատան մէջ (Եաֆայի) տեղի ունեցող ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

ԲՂ. 21 Փետրուար.- Նրուսադէմի Ռումինական եկեղեցւոյ նորած եպիսկոպոսը պաշտօնով Բուխարեսթ պիտի վերադառնայ, ուստի Պատրիարք Սրբազան Հօր այցելեց ընկերակցութեամբ նոր նշանակուած արքեպիսկոպոսին:

Շր. 26 Փետրուար.- Քերրոնի Հայր Աբրահամ Տաճարի մէջ սպաննուած Մահմետականներու տխուր միջադէպին առթիւ, Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեան յանուն Պատրիարքարանի այցելեց Պարոն Ֆայսալ Հիւսէյնիին Orient House-ի մէջ եւ ցաւակցութիւններ յայտնեց:

ԵՂ. 3 Մարտ.- Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան այցելեցին Քեքրոն քաղաքը (այլ կրօնականներու շարքին) եւ տեղւոյն պատասխանատու մեծամեծներուն ցաւակցութիւն յայտնեցին Հայր Արքահամի Տաճարին մէջ սպաննուածներուն համար:

Ուր. 4 Մարտ.- Կանանց Միջազգային Տօնին առթիւ, Երուսաղէմի Կանանց Յանձնախումբի կողմէ կազմակերպուած աղօթքին, Saint George Անկլիկան Մայր Տաճարին մէջ, ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, եւ մեր համայնքէն անդամներ: Յանձնախումբի անդամ է Տիկին Նորա Արսէնեան Քարմի: Յայտագրին մէջ, Հայերէն եւ Արաբերէն լեզուներու ընթերցումով քաժին առաւ Տիկին Նորա Նազգաշեան:

ԲՂ. 7 Մարտ.- Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի Հատասա հիւանդանոց այցելեց առողջութիւն մաղթելու համար Յունաց Տնտորոս Սրբազան Պատրիարքին:

ԵՂ. 10 Մարտ.- Վարդանանց Տօնին առիթով, նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Իրիկուան ժամը 7.30ին ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահին մէջ,

քեմադրուեցաւ Եղիվարդի Վարդանանց քատրերգութիւնը, ընծայարանի Սարկաւագներու եւ աշակերտներու կողմէ:

Կիր. 13 Մարտ.- Երուսաղէմի Տասնեւչորրորդ միջազգային քաղաքապետներու համաժողովին առիթով Երուսաղէմի Օլմէրք քաղաքապետի հրաւերով տրուած հիւրասիրութեան, Հին Քաղաքապետարանի սրահին մէջ, ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

ԲՂ. 14 Մարտ.- Մեծ Պահոց Բարեկենդանի առիթով ժառանգաւորաց Վարժարանի ուսանողութիւնը եւ ուսուցիչներ, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահակեանի, երկու օթօպիւսերով օրական պտոյտի արձակուրդով այցելեցին Մեռեալ Ծով եւ այլ վայրեր: Իսկ Պատրիարք Սրբազան Հայրը եւ Միաբանութեան տասը հոգեւորականներ Սուրիոյ սահմանին մօտ Էլ-Համայի տաֆ ջուրերը այցելեցին ինքնաշարժով եւ վանքի «Մինի-Պիւսով»:

ԵՂ. 24 Մարտ.- Յունաց Ազգային Տօնին առթիւ National պանդոկին մէջ հիւրասիրութեան ներկայ եղան Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Գերշ. Տ. Սեւան Նպս. Ղարիպեան եւ Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեան:

Ս. ԱԹՈՌՈՅՍ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ
ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐՔԵՐԸ

1. ԵՐՐՈՐԻ ՈՒԺԻ ԲԱՑԱՌՄԱՆ ՕՐԷՆՔԸ
Յօդուածներ: Երեւան, ԱԶԱՏ ԽՕՍՔ, 1991 էջ 201:
2. ՀԱՅԵՐԸ
Լանգ Դեյվիդ Մարշալ եւ Ժէյմզ Քրիստոֆեր Ուոքլը: Երեւան, Հայկական Հանրագիտարանի
Գլխաւոր Խմբագրութիւն, 1992 էջ 83:
3. ՆՈՐ ՏԵՏՐԱԿ ՈՐ ԿՈՉԻՈՒՄ Է ՀՈՐԴՈՐԱԿ
Պ.Մ. Խաչատրեան: Երեւան, Երեւանի Համալսարանի Հրտրկչքն, 1991 էջ 260:
4. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մովսէս Խորենացի: Աշխարհաբար Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթութիւնները
Ակադեմիկոս Ստ. Մալխասեանի: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ, 1990 էջ 320:
5. ՈՂԲ
Մովսէս Խորենացի: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ, 1991 էջ Ժ:
6. ԼԵՌՆԵՐԸ ԾԱՂԻԿՆԵՐ ԶԵՆ ՎԱՃԱՌՈՒՄ
Ռոբերտ Կարայան: Վէպ: Առաջին մաս: Երեւան, ՆԱԻՐԻ, 1991 էջ 622:
7. ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ-ԱՆԳԼԵՐԷՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ-ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ
Ս. Վ. Կարապետեան: 3000 բառ: Հայերէն, Ռուսերէն եւ Անգլիերէն: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ,
1991 էջ 111:
8. ԱՆԴՐՈՊՈՎԻ ԳԱՂՏՆԻ ՄՈՒՏՔԸ ԿՐԵՄՆԼ
Ելենա Կիկիպովա եւ Վլադիմիր Սոլովցով: Գորքաչովի Աթոռակոիլը: Թարգմանիչ՝ Ռ.
Ավագեան: Երեւան, Հայաստան, 1991 էջ 47:
9. ՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԼՕՓԷՅՑ
Հայկական Ելօփէյջ: Գալիֆորնիայի Ընդարձակ Հեռացուցակ: Համօ Վասիլեան -
Խմբագիր: Գալիֆորնիա, 1992 էջ 527:
10. ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱԴԻՈՅԻ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ
Հայկական Ռատիոյի Անեկդոտները: Երեւան, 19⁹⁰ էջ 777:
11. ԱՌԱՎԵԼ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Ն. Վ. Յարութիւնեան եւ Ն. Ռ. Բարաթյան: Անգլիերէն-Ռուսերէն-Հայերէն ԲԱՌԱՐԱՆ:
Երեւան, Այր-Քե Հրտրկչքն. 1992 էջ 168:
12. ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Վարազդատ Յարութիւնեան: Երեւան, ԼՈՅՍ Պետական Հրտրկչք. 1992 էջ 632
13. ԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Միխայիլ Հերացի: Միխայիլ Հերացի՝ Ջերմանց Միխայիլիւն - Ջերմբրի Բուժում -
Վեներիկ, 1832: Երեւան, 1992 էջ 31:
14. ԲԱՔՎԻ ԶԱՐԴԵՐԸ
Ավդա Յովնանեան եւ Իրինա Մոսեսովա: Երեւան, ՆԱՐԵԿԱՑԻ, 1992 էջ 275:
15. ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԱՓԱՆՑՈՑ
Ղուկաս Սեբաստացի: Արշակ Մաղոյան Թարգմանիչ - Թարգմանութիւն եւ Առաջաբանը՝
Արշակ Մաղոյանի: Երեւան, Երեւանի Համալսարանի Հրտրկչքն. 1992 էջ 111:
16. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Մովսէս Խորենացի: Ստ. Մալխասեան - Թարգմանիչ-: Աշխարհաբար Թարգմանութիւնները,
ներածութիւնը եւ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ակադեմիկոս Ստ. Մալխասեանի: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ,
1990 էջ 320:
17. ՄԱՆԿԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ
Մանկական Աստուածաշունչ: Ընտրանի Սուրբ Գրքից: Ստեփանակերտ ՄԱՇՏՈՑ, 1991
էջ 80:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Վեհ. Հայրապետին Քարոզը	Վազգէն Կաթողիկոս	3-5
Բեթղեհէմի Քարայրէն	Թ.Ա.Մ.	6-7
Armenian Christmas from the Grotto	Patriarch Torkom	8-10

ԿՐՕՆԱԿԱՆ

Յիսուս Կրկին Խաչուած	Բարգէն Եպս. Վարժապետեան	11
Աղօթքի Ոյժը	Հայկազուն Վրդ. Նաճարեան	12-14
Նոր Տարուան Սեմին	Ռուբէն Վրդ. Յովակիմեան	15-16
Քաւութիւն եւ Թողութիւն Մեղաց	Կարէն Քինյ. Կտանեան	17-18
Լուսաւորեա	Կարէն Քինյ. Կտանեան	19-20

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Լորտ Պայրընի Հարուտի Որդւոյն	Թրգմն. Մուրատ Մանուկեան	21
Պանդխտութիւնը	Յովհաննէս Շիրազ	22-23
Սպիտակ Եղեռն	Haig Khachadourian	24-25
If I Forget Thee, O Jerusalem	Հայկ Խաչատուրեան	
Թէ Մոռացայց գեղգ, Երուսաղէմ	Թրգմն. Շէն Մահ	26-28
Ամբողջը Քեզ	Անանուն (Թրգմ. Շէն-Մահ)	28

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Նարեկացու Գնահատութիւնը	Ա. Ղազինեան	29-38
Ներսէս Լամբրոնացի	Ռաֆայէլ Համբարձումեան	39-46
Նուիրապետութիւն Եկեղեցւոյ	Թորոս Տ. Ի. Զուղայեցի	47-52

ԳՐԱԿԱՆ

Երգիծականը եւ Ողբերգականը «Ընկեր Փանջունու» վէպում	Սամուէլ Մուրատեան	53-62
-------------------------------------------------------	-------------------	-------

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Մեր Նորագոյն Թարգմանական Գրականութեան Մասին	Շաքէ Մինասեան	63-65
------------------------------------------------	---------------	-------

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

Յանպարաստից Խօսքէն Պահանջուած Յատկութիւններ «Վիճաբանութենէ մը ետք կարծիք մը»	Շահան Ռ. Պերպերեան	66
------------------------------------------------------------------------------------	--------------------	----

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Մէյէն եւ Ուղղագրական հարցեր	Զենոր Քինյ. Նալպանտեան	67-70
-----------------------------	------------------------	-------

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Եկեղեցիներու Միութեան Եօթնակը
 Երուսաղէմի մէջ
 Մտածումներ Ս. Պատարագի մէջ
 Քարոզիչութեան մասին
 Ամանորը Ժառ. Վարժարանի մէջ
 Մշակութային Յայտագիրներ
 Եղուարդ Ճերէնեան Միացեալ Նահանգաց
 Դեսպան Իսրայէլի մէջ

Ներկայ Մը

71

Արտէն Ա. Քենյ. Աշնեան

72-74

75

75

76

ՇՆՈՐՀԱԽՈՐԱԿԱՆՔ Ս. ԾՆՆԴԵԱՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ
 Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս
 Վատիկանէն Հռովմի Պապը
 Մոսկուայէն Ռուսաց Պատրիարք
 Թուրքիոյ Հայոց Պատրիարք
 Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն
 Շնորհակալիք

76

77

78

79

80

81

81

81


Ս. Յակոբի Ներսէն

82-88


Յանկ' Կիւլպէնկեան Մատենադարանի
 կողմէ ստացուած Գիրքերու

Սահակ Գալայեան


89



Ս. Յարութեան Տաճարի արտաքին ընդհանուր տեսարանը




Ս. Յարութեան Տաճարին մէջ Պատանատեղին ուր Յիսուսի մարմինը պատանեցին




Գողգոթա, ուր Յիսուս խաչուեցաւ



Սուրբ Յարութեան Տաճարին մէջ Յիսուսի Գերեզմանին մուտքը



Յիսուսի Գերեզմանը Ս. Յարութեան Տաճարին մէջ




Ս. Գրիգոր Լուսավորիչ Նկերեցին Ա. Տառնուկեան Տաճարին մէջ



Պատիարկի Աթոռ, Աւագ Սեղանի Սրբոց Բակրեանց Մայր Տաճար, Երուսաղէմ



Ս. Յակոբ Գլխադիր Առաքելի մատուռը Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ



Ս. Յակոբ Գլխադիր Առաքելի մատուռը եւ աջակողմեան դասը Մայր Տաճարին




Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Ս. Աստուածածինն ու Մանուկ Յիսուսը




Բերդիկ, Հայոց, Յունաց Գանգակատունները






Բերդիստ, Հայոց եկեղեցին Ս. Մանդեան Տաճարին մէջ



Գերսնմանի Ս. Աստուածածին Տաճարին մէջ Հայր Յովսէփի Գերեզմանը



Գերսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի ներքին ընդհանուր Տեսարանը



Գերսեմանիի Ս. Աստուածածին Տաճարին մէջ Հերոս Թագաւորի Սեղանը
 Ս. Կոյսի Գերեզմանի կողքին



Հայկական Մնունդ, Բեթղեհեմ, 18 Յունուար 1994
Պատրիարք Արքազանի Մուտքը հրապարակէն



Հայկական Մնունդ, Բեթղեհեմ, 18 Յունուար 1994
«Խորհուրդ Մեծ» երգեցողութեամբ թափօրով մուտքը



Հայկական Մնունդ, Բեքդեհեմ, 18 Յունուար 1994
Զիւրնընըրով շքերք դէպի Բեքդեհեմ



Հայկական Մնունդ, Բեքդեհեմ 18 Յունուար 1994
Մուտք Ընդի. Ոստիկանապետի եւ Քաղաքապետներու ընկերակցութեամբ



Հայկական Մնունդ, Բերդեհեմ, 18 Յունուար 1994
Կէս գիշերին, պաշտամունքին հետարձակումը Ս. Այրեն



Հայկական Մնունդ, Բերդեհեմ, 18 Յունուար 1994
Բերդեհեմի Քաղաքապետ Էլիաս Ֆրէյժի բարի գալուստի խօսքը



Հայկական Մնունդ, Բեթլեհեմ, 18 Յունուար 1994
Հ.Մ.Ը.Միութեան սկաւտներ



Հայկական Մնունդ, Բեթլեհեմ, 18 Յունուար 1994
Հ.Ն.Միութեան սկաւտներ



Հայկական Մնունդ, Բեբդեհեմ, 18 Յունուար 1994
Ասորի համայնքի սկաուտներ



Հայկական Մնունդ, Բեբդեհեմ, 18 Յունուար 1994
Հ.Ե.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտապետներ եւ սկաուտներ



Հայկական Մնունդ, Բերդիսիւմ, 18 Յունուար 1994
Հ.Ե.Մ.ի սկաուտներ, Արեւմուտներ եւ Գայլիկներ



Յոյն Կաթողիկ Լաիւմ Եպս.ին եւ իր հոգեւորականներուն հետ. Նրուսադէմ
Պատրիարք Արքագան եւ Դաւիթ Արքեպս. եւ Ռազմիկ Վրդ. 31 Յունուար 1994



Յոյն Կաթողիկ Լաւիամ Նպս.ին եւ իր հոգեւորականներուն հետ.
Խորհրդակցական ժողովի ընթացքին, Պատրիարք Սրբազան, Դաւիթ Արքեպս.,
31 Յունուար 1994, Երուսաղէմ



Յոյն Կաթողիկ Լաւիամ Նպս.ին եւ իր հոգեւորականներուն հետ.
Ճաշի ընթացքին, Պատրիարք Սրբազան, Դաւիթ Արքեպս.
31 Յունուար 1994, Երուսաղէմ



Իսրայելի մէջ Միացեալ Նահանգաց Ամերիկեան Հայ Դեպան Նդուարդ Ճերէնեան (Ձախէն առաջին) Պատրիարք Սրբազան Խ. Երուսաղէմի Ամերիկեան Ընդհ. Հիւպատոս, Էտուըրտ Ապինկը-օն 14 Փետրուար 1994 Պատրիարքարանի Դահլիճին մէջ



14 Փետրուար 1994, Պատրիարքարանի դահլիճին մէջ, (Ձախէն Աջ) Պատրիարք Սրբազան, Իսրայելի Ամերիկեան Հայ Դեպան Նդուարդ Ճերէնեան, Երուսաղէմի Ամերիկեան Ընդհ. Հիւպատոս Էտուըրտ Ապինկը-օն, Դաւիթ Արքեպս., Յուսիկ Նպս., Սեւան Նպս.



14 Փետրուար 1994, Պատրիարքարանի Դահլիճին մէջ, (Զախէն Աջ) Սեւան Նպս., Դաւիթ Արքեպս., Նդուարդ Ճէրէնեան Իսրայէլի մէջ Ամերիկեան Հայ Դեպան, Պատրիարք Սրբազան, Հետուրտ Ապինկոսն Նրուսադէմի Ամերիկեան Ընդհ. Հիւպատոս, Յուսիկ Նպս., Ռազմիկ Վրդ., Կոմիտաս Վրդ.



9 Մարտ 1994, Կիսասարկաւագի Չեռնադուրին. (Զախէն Աջ) Հայկ Միրզախանեան, Բաւալ Աւետիքեան, Խարտաւիլակ Դաւիթ Արքեպս., Պատրիարք Սրբազան, Արմէն Խաչատուրեան, Հայկ Գաղեգեան



10 Մարտ 1994, Սարկաւազի Զեռնադրութիւն (Զախէն Աջ) Հայկ Սրկ. Գագեգեան, Արմէն Սրկ. Խաչատուրեան, Հայկ Սրկ. Միրզախանեան, Բասալ Սրկ. Աւետիքեան



10 Մարտ 1994, Տօն Վարդանանց, Սարկաւազի Զեռնադրութիւն, (Զախէն Աջ) Բասալ Սրկ. Աւետիքեան, Հայկ Սրկ. Միրզախանեան, Արմէն Սրկ. Խաչատուրեան, Հայկ Սրկ. Գագեգեան



10 Մարտ 1994, «Վարդանանք» բատրերգութեան դերակատարներ, Ընծայարանի եւ Ժառ. Վարժարանի աշակերտներ



10 Մարտ 1994 «Վարդանանք» բատրերգութեան դերակատարներ Պատրիարք Սրբազան Հօր հետ

